



**INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN**

**ISSUES ON ARMENIAN LANGUAGE  
HISTORICAL RESEARCH**

**ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА**

**ВОПРОСЫ ИСТОРИЧЕСКОГО  
ИССЛЕДОВАНИЯ  
АРМЯНСКОГО ЯЗЫКА**

**Yerevan - 2022**

**Ереван – 2022**

**ՀՀ ԳԱԱ ՀԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Գ. ՄԽԻԹԱՐՅԱՆ, Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ,  
Հ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ, Վ. ԽԱԶԱՏՐՅԱՆ, Օ. ԽԱԶԱՏՐՅԱՆ**

**ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ**

**ՊՐԱԿ Ա**

**ԵՐԵՎԱՆ**

**ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

**2022**

ՀՏԴ 81.19'0

ԳՄԴ 81.51դ

Հ 282

Հրապարակման է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի  
ինստիտուտի գիտական խորհուրդը:

Պատասխանատու խմբագիր՝ Բ. Գ. Պ. Վ. Լ. Կատվայան

Հ 282

Հայերենի պատմական ուսումնասիրության հարցեր  
/ Լ. Հովհաննիսյան, Գ. Մխիթարյան Մ. Գրիգորյան,  
Հ. Թադևոսյան, Վ. Խաչատրյան, Օ. Խաչատրյան/  
Պրակ Ա. -Ե.: ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022. - 118 էջ:

ՀՏԴ 81.19'0

ԳՄԴ 81.51դ

ISBN 978-9939-9277-9-4

© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2022

© ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հրատարակչություն, 2022

Գիրքը պարունակում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի  
ինստիտուտի հայոց լեզվի պատմության բաժնի աշխատակիցների  
հետազոտությունները, որոնք 2013թ. հրապարակվել են տարբեր  
գիտական հանդեսներում և ժողովածուներում: Գիրքը ընդգրկում է լեզվի  
զարգացման տարբեր փուլերում հայերենի բառային կազմի և  
քերականական կառուցվածքի փոփոխություններին ու դրանց  
օրինաչափություններին, հայերենի և այլ լեզուների բառային  
աղերսներին, գրաբարի բառապաշարին, օտար և բնիկ բառերի  
հարաբերակցությանը, փոխառությունների գործառական  
առանձնահատկություններին նվիրված հետազոտություններ:  
Նախատեսվում է հայոց լեզվի պատմությամբ հետաքրքրվողների  
համար:

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հայոց լեզվի պատմության բաժինը տասնամյակներ շարունակ անդրադարձել է լեզվի պատմության և համեմատական ուսումնասիրության տարբեր խնդիրների: Բուն ուշադրության առարկա են եղել ոչ միայն հայերենի նոր փաստերի վերհանումն ու նկարագրությունը, այլև լեզվի զարգացման ընթացքին բնորոշ փոխազդեցություններն ու առանձին փոփոխությունները:

Աշխատակիցների գիտական հետաքրքրությունների շրջանակն առնչվել և առնչվում է լեզվի բառապաշարի հին շերտերի, հնչույթային և քերականական համակարգերի, զարգացման փուլերում երևան եկած գրական լեզուների և դրանց խոսակցական հիմքերի ու բարբառների փոխհարաբերությանը: Այդ ամենը ենթադրում է հայերենի ընդգրկուն և մանրամասն ուսումնասիրություն, ինչպես նաև հայոց լեզվի տարբեր շրջանների պատմությանը վերաբերող հետազոտությունների նորագույն տվյալների ներառում:

Հետազոտությունների արդյունքները ներկայացվել են տասնյակ մենագրություններում, միջազգային գիտական ժողովածուներում, հարյուրավոր հոդվածներում ու զեկուցումներում: Նկատի ունենալով հայոց լեզվի պատմության ընձեռած հարուստ փաստական նյութի (հին, միջին և նոր հայերեն բազմաթիվ ու տարաբնույթ մատենագրական աղբյուրներ, անցյալի բառարանագրական հուշարձաններ, ձեռագրերի հիշատակարաններ և այլն) կարևոր նշանակությունը հայերենի ուսումնասիրության համար՝ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հայոց լեզվի պատմության բաժինը 2021թ. վերահրապարակել է «Հայոց լեզվի պատմության հարցեր»

ժողովածուն (IV պրակ). հայերենի պատմության մեջ դեռևս կան քիչ հետազոտված, կնճռոտ հարցեր, որոնք քննության կարիք ունեն:

Գիտական արդյունքներն ամփոփելու, հանրությանը և հատկապես հայոց լեզվի պատմության հարցերով հետաքրքրվողներին ներկայացնելու նպատակով հայոց լեզվի պատմության բաժինը սկսում է հրապարակել աշխատակիցների հոդվածներն ու զեկուցումներն ընդգրկող «Հայերենի պատմական ուսումնասիրության հարցեր» նոր ժողովածուն՝ ըստ տարիների: Նյութերը քաղվում են լույս տեսած հանդեսներից ու պարբերականներից՝ առանց հեղինակային կամ խմբագրական միջամտության:

Սույն պրակը ընդգրկում է բաժնի աշխատակիցներ Լ. Հովհաննիսյանի, Գ. Մխիթարյանի, Ս. Գրիգորյանի, Հ. Թադևոսյանի, Վ. Խաչատրյանի, Օ. Խաչատրյանի ուսումնասիրությունները, որոնք 2013 թ. հրապարակվել են տարբեր հանդեսներում, ժողովածուներում: Պրակում ընդգրկված նյութերը վերաբերում են հայերենի զարգացման փուլերի լեզվական իրադրության բնութագրումների, լեզվական որոշ փոփոխությունների բնույթն ու պատճառները բացահայտելուն, հայերենի քերականական կառուցվածքի, բառապաշարի պատմական զարգացման որոշակի առանձնահատկությունների պարզաբանմանը:

Գ. Մխիթարյան

ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ  
ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵԶ\*

Գրիգորյան Մուսանա  
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Շուրջ յոթանասուն տարի առաջ՝ 1946 թվականին, հրատարակվել է չափազանց ուշագրավ մի աշխատություն. «Л. А. Оганесян, История медицины в Армении, часть вторая, Ереван 1946», որտեղ անդրադարձ կա նաև Գրիգոր Տաթևացու բժշկագիտական հայացքներին: Մի քանի էջում գիտական պատշաճ մակարդակով հեղինակը ներկայացնում է Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության մեջ տեղ գտած բժշկագիտական հարցադրումները, և միայն զարմանալ կարելի է, որ մինչև այժմ այդ թեմայով չի գրվել մասնագիտական մենագրություն:

Մեր կողմից միայն Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ից առանձնացված բժշկագիտական հարցադրումները և վերլուծությունները գերազանցում են մի քանի տասնյակ էջերը, այսինքն՝ Տաթևացու գրական ժառանգության մեջ տեղ գտած մնացած բժշկագիտական հարցադրումները ի մի բերելու, այլ միջնադարյան հեղինակների հետ համեմատելու դեպքում հաստատապես կարելի է խոսել Գրիգոր Տաթևացու համակարգված բժշկագիտական հայացքների մասին: Ասենք ավելին. մենք գործ ունենք ստվերում մնացած հետաքրքիր մի բժշկապետի հետ, որի հարցադրումներից շատերի պատասխանը հաստատվում է ժամանակակից բժշկության տվյալներով: Իսկ արդյո՞ք բժշկապետի. կարծում ենք, այո՞, քանի որ հարցերի

---

\* «Ձառուկյանական ընթերցումներ: Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ»: Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2013, էջ 34-44:

այսքան բազմազանություն, այսքան ստվարածավալ վերլուծություններ մեկ այլ միջնադարյան հեղինակ չունի:

Բժշկության մեջ բավականաչափ առաջացած լինելը հաստատում են նաև նրա աշխատությունների գլուխների և այսպես կոչված «պրակների» (այսինքն՝ բաժինների, ենթաբաժինների) վերնագրերը.

Զի՞նչ է հիւանդութիւն:

Հիւանդութիւն և բժշկութիւն:

Վասն է՞ր երիկամունքն ճարպով պատեալ է, և սիրտն և լեարդն ոչ:

Վասն Ստամոքսին:

Վասն Խուլիին Հարցումն:

Վասն է՞ր մի ջուրն ի բերանն քաղցր լինի, և յաչքն աղի. յունչն հոտեալ. և յականջն դառն:

Վասն է՞ր մարդոյն աջ կողմն ուժով է քան զձախն:

Քանի՞ են գոդուածք և ոսկերք մարդոյն:

Վասն ջլաց և ոսկերաց:

Վասն գունոց մարդկան Հարցումն: Վասն է՞ր թաթարին մորուս ո՞չ բուսանի:

Հետաքրքիր են մարմնակազմության վերաբերյալ հարցադրումները և մասնավորապես՝ «Վասն պատկերացուցութեան հարցումն» գլուխը ևս. մի կողմից հեղինակը, ըստ նախնի փիլիսոփաների ուշադրություն է դարձնում մարմնակազմության և խառնվածքի կապին, սակայն մյուս կողմից՝ հանդես բերում լայնախոհություն և զգուշացնում, որ դրանք հարկ չկա ընդունել իբրև բացարձակ ճշմարտություն, սակայն այնուամենայնիվ, խորհուրդ տալիս հաշվի առնել, որ բնությունը ինչ-որ բան հուշում է այդտեղ. «...այնպիսի նշանք ո՞չ դնեն հարկ ի մարդն. այլ ցուցանեն զձկտումն բնութեանն ի յայնպիսի իրս» (Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ.Պօլիս, 1729թ., էջ 246. այսուհետև՝ Գիրք հարցմանց): Կա նաև այն հանգամանքը, որ մարդը բանականությամբ կարող է կրթել իր խառնվածքը. «զի բանականութեամբ կարեն սանձիլ սոքա, յորժամ կամեսցին....»



պահօք և աղօթիք և կրթութեամբ մարմնոյ սանձել յինքեան զայսպիսի նշանաց գործ», ուստի՝ «...ոչ է պարտ ենթադատել զմարդ վատն այսպիսի նշանաց երևման» (նույն տեղը): Եվ այս իմաստով այս հատվածում Պլատոնին հղելը դառնում է ընդամենը վերոնշյալ նախագգուշացման հաստատում. «Դարձեալ՝ ասէ պղատոն, եթէ մարդն որ ունի զմանութիւն անասնոց ինչ՝ հետևի և բարուց նոցին» (նույն տեղը)՝ վկայելով, որ Տաթևացին ցանկացած ոլորտում քաջածանոթ է եղել հայ և օտարագգի հեղինակներին:

Ըստ իմաստային դաշտերի առանձնացված տերմինները և հասկացությունները բաժանվել են երեք խմբի.

1. հիվանդություններ, բժշկություն, բուժում (օգտագործված հասկացություններ. բժիշկք, հեքիմն, հիւանդատունն, բուժելի, անբուժն, օգտել ցաւին, առողջութիւն, ողջութիւնն, երկարակեացք, կարճակեաց, հիւանդանալ, հիւանդութիւնն, ծանր հիւանդութիւն, ախտ, մարմնոյ ապականութիւնն, ժահահոտ և խառնակ օդն, ստահակութիւն օդոց, չար կերակուրն, վատ կերակուրն, գիշերոյ կերակուրն, աչքի ցաւ, կոյր, կուրանալ, այսահարութիւնն. գլխացաւ, խոց ծածկեալ, հիւանդութիւն ստամոքաց, փտեալ ստամն, օգտել ցաւին, զվողսն բռնել, բողմայ, երքունտոն. սնքնտոն, ցաւած ծնող - ցաւածին որդի (ժառանգական հիվանդության դեպքում), փահրիզ առնել, պահք, մանր-մանր ծասկել, ողողել, կղկղել, առնել գղեղս հիւանդաց, սպեղանիք և դեղք բժշկականք, մլիհամ, ծաղիկս խոտոյ, յարմատս, տերևս, պտուղս, զօշնարին ջուրն, զկաթն խոզին, զաղբ շանն, զջուր շուշանին).

2. հոգեվիճակ, խառնվածք (օգտագործված հասկացություններ. խառնուածք, հպարտություն, նախանձ, որկորստություն, բղջախոհություն, բարկություն, ծուկություն, ազահություն, զուարթ, բարկացող, արի, երկչոտ, աներկչոտ, խորամանկ, ամոթխած, աղուեսաբարոյ\*, զիճասէր, պարկեշտ)

3. մարմնակազմություն, կազմախոսություն (օգտագործված հասկացություններ. ներքին գլխաւոր անդամք. սիրտն, ուղեղն, լեւ՛րդն, թո՛քն, փայծեղն, երիկամունքն, լեղին. այլ ներքին

անդամներ՝ արգանդ, զօդուածք, ոսկերք, ջիւք, գլխաւոր ջիւքն, ստամոքս (քարշողական, ունակական, հալողական, վտարական - ստամոքսի հատկություններ), քալասիկէ\* (յարդի վերին երակը). արտաքին անդամք. դրունք՝ աչք, ականջք, պինչք, բերանն. պորտն, ստինք, ջրհեղն. արտաքնոց\*. այլ արտաքին անդամներ՝ գլուխն, ծործորակ, խոչափողն, պորտն, փոր, մորթ, միս, արիւն, զգայարանք, երակք, մազն.

հիւթք, արիւնն. պալղամն. սեաւ և խարտեաշ մաղձն, լեղի, խուխ. արիւնածուծ լինիլ, սրտին ջերմութիւն և չորութիւն, բարեխառնել, բեղմնաւորիլ, յղացումն, դաշտան, որակ ծնողացն):

Մրանցից արտաքնոց բառը գրաբարյան սկզբնաղբյուրները վկայում են «ոտաց ճամփա» (գուգարան) իմաստով. Տաթևացիի գործածում է «դրունք» կոչվող շարքում՝ «հետանցք» իմաստով. «աղուեսաբարոյ»-ն իր նորաբանություններից է. բառարաններում վկայված չէ նաև «քալասիկէ»-ն:

Ընդհանուր տեսական հարցեր: Ընդհանուր առմամբ Տաթևացիի կարծում է, որ հիվանդությունը առողջության պակասն է, ինչպես խավարը՝ լույսի, մահը՝ կյանքի. «...բարին ունակութիւն է, և չարն պակասութիւն նորին. որպէս խաւարն լուսոյ, և հիվանդութիւնն առողջութեան, և մահ կենաց» (Գիրք հարցմանց, էջ 16): Եվ ընդհանրապես, կարելի է ասել, որ հեղինակի բժշկագիտական հայացքները նրա փիլիսոփայական հայացքների շարունակությունն են. «Կեանք մարդկան ոչ այլ ինչ է, քան թէ ընթանալ ի մահ», - գրում է նա (Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմեռան հատոր, Կ.Պոլիս, 1740թ., էջ 328. այսուհետև՝ Գիրք քարոզութեան, Ձմեռան): Այս պարագայում հիվանդի գործը, բնականաբար, պետք է դառնա պակասությունը լրացնելը:

Ըստ Տաթևացու՝ երկարակեցության և առողջ ապրելու գրավականը չափավոր ուտելն ու մսեղեն քիչ օգտագործելն է. հիվանդությունը, ըստ նրա, մեծապես կապված է ուտելու հետ, հետևաբար, առողջությունը կապված է պահեցողության հետ. ի սկզբանե մարդիկ՝ «ոչ միս կերին և ոչ գինի արբին, այլ միայն

պտուղ և երկարակեացք եղեն յոյժ, բայց յետոյ յորժամ աւելի կերին հաց, միս և գինի, կարճակեաց եղեն, որ դեռևս պակասի յաւելի ուտելոյ... *հիւանդութիւն մարդոյն յուտելոյն է...* ապա ուրեմն *առողջութիւն մարդոյն ի պահոց լինի»* և առավել, քան պատերազմի սուրը ավելի շատ մահացություն են բերում գիշերը ուտելու արդյունքում առաջ եկած հիվանդությունները. «գիշերոյ կերակուրն առաւել սպանէ՝ քան զսուր պատերազմի» (Գիրք քարոզութեան, Ձմեռան, էջ 130):

Նրա ակնարկից պարզ է դառնում, որ ոչխարը մեր նախնիները պահել են հագուստի համար բուրդ ստանալու և ոչ թէ ուտելու համար. ուտելու համար օգտագործվել է խոշոր եղջերավորների միսը. («Այլ այժմ վասն զգեստուց պահեմք զոչխարս. և *վասն կերակրոյ զեզինս*. և վասն բեռին զէշս. և վասն բառնալոյ զմեզ զգինս. և վասն զթշնամիս հալածելոյ զշունս. և վասն զթռչունս ըմբռնելոյ զբազէս. և զայլսն նմանապէս» (Գիրք հարցմանց, էջ 217):

Մարդը որքան զլանում է պահպանել իր առողջությունը, այնքան մոտենում է հիվանդությանը, իսկ ողջության իսպառ բացակայությունը վերածվում է իր հակոտնյային, այսինքն՝ չկա կյանք, չկա նաև հիվանդություն. «Եւ ծանիր զայս, զի որքան նրւագի ողջութիւնն՝ առաւելու *հիւանդութիւնն*. և որչափ նրւագի մարմին՝ առաւելու ապականութիւն. այլ յամեննին նրւագիլ ողջութեան՝ և *հիւանդութիւնն* կորնչի» (Գիրք քարոզութեան, Ձմեռան, էջ 22):

Բազում, բազմաթիվ հիվանդությունների մասին վկայում է հենց բազմապիսի բժշկական միջոցների գոյությունը՝ դեղերը, սպեղանիները, դեղաբույսերը, դրանց արմատները, պտուղները. «Եւ որպէս անչափ են սպեղանիք և դեղք բժշկականք մարմնոյ ի բազում և զանազան ծաղիկս խոտոյ և յարմատս, ի տերևս ի պտուղս. և յայլսն. զի սոքա յայտնեն զբազմութիւն *հիւանդութեանց* մարմնոյ» (Գիրք հարցմանց, էջ 531):

Ակնհայտորեն Տաթևացու հարցադրումները և վերլուծությունները առաջ են բերում մի հիմնական թեմա, որի

շուրջը պատվում են նրա խորհրդածությունները. նրա հարցադրումների նպատակը մարդու կատարելությունն է (և ոչ միայն այս ոլորտում), ուստի կանխատեսելի է նաև նրա կարծիքը ապագայի մարդու վերաբերյալ: Ինչպիսին պետք է լինի ապագայի մարդը հարցին, քրիստոնյա վարդապետի պատասխանը, որ աստվածաշնչյան չափանիշներով պետք է լիներ, սպասելի էր: Սակայն անսպասելի է Տաթևացու համադրումը. ապագայի մարդը գերծ է բոլոր արատներից՝ հոգևոր, թե մարմնավոր: Նա առողջ է լինելու, ինչպես նահապետ Մովսեսը, որի ծերության օրերում ատամն անգամ չշարժվեց. գեղեցիկ, ինչպես Աբիսողոմը, սրընթաց, ինչպես Ասայելը, ուժեղ, ինչպես Սամսոնը, երկարակյաց, ինչպես Մաթուսաղան, հարուստ, ինչպես Սողոմոնը, հարգարժան ինչպես Հովսեփը, սիրված ինչպես Հովնաթանը, ազատ ինչպես Օգոստոսը. հատվածը բերում ենք ամբողջությամբ. «Քանզի՝ ունիցի մարմինն *Զգեղեցկություն. Զարագություն. Զուժգնություն. Զազատություն. Զկամաւորություն. Զառողջություն. և Զանմահություն:* Իսկ հոգին՝ *Զիմաստություն. Զսիրելություն. Զմիաբանություն. Զիշխանություն. Զպատիւ. Զանհոգություն. և Զուրախություն:* Եւ թէպէտ գերազանցեալ են այսոքիկ փառք քան որք այժմ ունին յերկրի. այլ սակայն օրինակաւ սակաւ ինչ բացայայտութիւն առցուք: Հաճոյ լինէր քեզ թէ լինէիր *գեղեցիկ* որպէս *գաբիսողոմ*. որում ո՛չ գոյր արատ ի մարմնի: Կամ թէ *արագ* որպէս *ասայէլ* որ հասնէր այժեման: Կամ լինէիր *ուժեղ* որպէս *սամփսոն*. որ զհազար այր ծնօտիւ իշոյն եսպան: Կամ լինէիր *ազատ* որպէս *օգոստոս*. որում բոլոր աշխարհ ծառայեաց: Եւ թէ լինէիր կամօք *փարթաւ* որպէս *սողոմոն*. որում ո՛չ անխայեաց զոր ինչ ցանկացաւ ի սրտի: Կամ *առողջ* որպէս *զմովսէս*. որում ո՛չ վատեցին աչքն և ո՛չ շարժեցաւ ատամն: Կամ *երկայնակեաց* որպէս *զմաթուսաղայ*. որ մերձ ի ուամն ժամանեաց: *Այլ թէ ի սոցանէ մի մի ուրուք տուեալ լինէր, փոխանակ թագաւորութեան համարէր. իսկ թէ սոքօք ամենէքումբք վայելեցէ, գերագոյն բոլոր աշխարհի լինէր:* Դարձեալ և այսոքիւք, թէ լինէիր իմաստուն որպէս զսողոմոն. որում ո՛չ գտաւ հանգոյն նման ՚ի վերայ երկրի: Կամ սիրելութիւն

որպես դաւթի և յովնաթանու. զոր սիրեաց որպէս զհոգի իւր: Կամ միաբանութիւն որպէս առաքելոցն. որոց էր սիրտ և անձն մի: Կամ ունէիք իշխանութիւն որպէս աղէքսանդրու. որ զասիա զերոպիա և զլիբիա ընդ իշխանութեամբ էարկ: Կամ լինէիր պատուեալ որպէս զյովսէփ. որում երկրպագէին եգիպտացիքն որպէս աստուծոյ: Կամ լինէիր անհոգ որպէս ենովք և եղիա որ այնպէս անհոգ են, որք ոչ ի մահու և ոչ յայլ ինչ պատահմանէ երկնչին: Կամ լինէիր այնպէս ուրախ որպէս զայն որ ի կախադան ածեալ լինի՝ և յանկարծակի ի ճանապարհին թագաւորութիւն ընկալեալ լինի: Որպէս զսաւուղայ ասեն՝ էշ կորուսեալ և թագաւորութիւն գտեալ» (Գիրք հարցմանց, էջ 761- 762):

*1. Հիվանդություններ, բժշկություն, բուժում:* Տաթևացին հիվանդությունների չորս պատճառ է նշում. առաջին պատճառը բնականն է, որ առաջ է գալիս անհրաժեշտ պետքերի պակասության կամ աղոտոված օդի պատճառով. «Եւ լինի հիւանդութիւն ի չորից իմն պատճառաց: Նա իս՝ յանպատրաստութենէ կամ ի պակասութենէ հարկաւոր պիտոյից. կամ յարտաքին ստահակութենէ օրոց» (Գիրք հարցմանց, էջ 665): Այս դեպքում նա խորհուրդ է տալիս բուժվել դեղամիջոցներով. «Ա՛րդ՝ եթէ ըստ բնականին է հիւանդութիւնն, պա՛րտ է բժշկական դեղով առողջանալ» (նույն տեղը): Մյուս երեք տիպի հիվանդությունների («Երկրորդ, որ անզեղջ են ի մեղս՝ տայ աստուած զհիւանդութիւն ի խրատ ուղղութեան: Երրորդ հիւանդութիւն է ընտրելոց, զի փո՛րձ երևեսցին ի յամօթ չարին. որպէս յոբայն: Չորրորդ նախախնամութեամբ. զի մի՛ հպարտացին. որպէս իւէթն առաքելոյն պօղոսի: Եւ զի մի՛ մարդիկ թիրեցցին արտաքոյ բնութեանս լեալ» (նույն տեղը) բուժումը, այպէս ասած, հիվանդի ձեռքում է՝ հանցանքը վերացնել, արդարության գալ, ինքնակարգավորվել, այստեղ բժշկական դեղերը անելիք չունեն. «Իսկ թէ յայլ երիցն է, նայիլ պարտ է առ ինքն թէ ո՞ր յանցանք առաւել զօրացեալ է յինքն, զայն պակասեցուցանել. և ո՞ր արդարութիւն նուազեալ է՝ զայն ուղղել. յայնժամ լինի բժշկութիւն հոգւոյ և մարմնոյ յաստուծոյ և ոչ ի դեղոց» (նույն տեղը):

Իսկ ընդհանրապես հիվանդությունը նա դիտարկում է որպես միջանկյալ վիճակ կյանքի և մահվան միջև. «Դարձեալ վասն հիվանդութեան գիտելի է, զի է ի մէջ մահու և կենաց» (նույն տեղը):

Նա հորդորում է հիվանդին ժամանակին դիմել բժշկի. «...զի որ ծանր յիւանդութիւն ունի, պարտ է շուտով երթալ առ բժիշկն և ցուցանել նմա, զի յետ մահուն բժիշկն ոչ կարէ օգնել» (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 320): Հիվանդը ամենամոտն է իր հիվանդությանը, այնպես, ինչպես մանուկը՝ մանկությանը, կամ ալորը՝ ծերությանը. «Յորժամ հիւանդանաս՝ մերձ ես դու հիւանդութեան քոյ. և յորժամ մանուկ լինիս՝ մերձ ես մանկութեանն. ի յալորութեանն՝ ծերութեանն ես մերձ» (Գիրք քարոզութեան, Ձմեռան, էջ 37): Նա զգուշացնում է, որ աստիճանաբար առողջութեան նվազելու հետ, ծանրանում է հիվանդությունը. «Զի ի նրւագիլ ողջութեան՝ հիւանդութիւնն երևի. և ի նրւագիլ մարմնոյ՝ ապականութիւնն պատահի» (Գիրք քարոզութեան, Ձմեռան, էջ 22):

Թե որքան է կարևորվում շրջակա միջավայրի մաքրությունն այսօր քաղաքակիրթ մարդկանց համար, հայտնի է բոլորիս, սակայն զարմանալի է, որ դա կարևորվել է նաև 14-15-րդ դդ. նույնպես. Տաթևացին հիվանդությունների առաջացման պատճառ է նշում ոչ միայն ուտելիքը, այլև աղտոտված օդը. «Բժիշկք ասեն, թէ ժահահոտ և խառնակ օդն վնասակար է ավելի, քան զչար կերակուրն. զի վատ կերակուրն ի փորն գնայ, բայց ի սիրտն ոչ հասանի: Իսկ դառն հոտն ի սիրտն գնայ և առաւել վնասէ զմարդ» (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 514):

Մեկ անգամ չէ, որ Տաթևացին կարևորում է գիտակ բժշկի դերակատարությունը և զուգահեռ անցկացնում վատ քահանայի ու տգետ բժշկի միջև: Իմաստուն բժիշկը նախ հիվանդության պատճառն է բուժում. «*Իմաստուն բժիշկն զպատճառ հիւանդութեան նախ հանէ դեղօր և ապա յետոյ սպեղանօր բժշկէ*» (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 145): Հավատարիմ բժիշկը նախ ինքն է ճաշակում դեղը. «Որպէս բժիշկք յորժամ հիւանդաց դեղ

տան, նախ ինքեա՛նք զճաշակն առնուն զի հաւատարիմ լիցի» (Գիրք հարցմանց, էջ 316): Խելացի բժիշկը դեղը շուտափույթ կամ խիստ ուշացած չի տալիս. «...Եթէ գոր օրինակ բժիշկք՝ ո՛չ ի սկիզբն ցաւոց և ո՛չ ամեննին անագան տան զդեղ հիւանդին. զի անօգուտ է և վնասիչ. այլ ի դիպօղ ժամու յորում առողջասցի» (Գիրք հարցմանց, էջ 467). «Թէ որ ունի ի գլուխն ցաւ և դեղն ի վերայ ոտիցն դնէ, յիմար է այնպիսին, զի ուր ցաւն է, պարտ է անդ դնել զդեղն», - գրում է նա ոչ խելացի բուժման վերաբերյալ (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 191): Հոգատար բժիշկը ոչ միայն բուժում, այլև հետամուտ է լինում հիվանդի հետագա վիճակին. «Դարձեալ՝ որպէս բժիշկք դեղ տան հիւանդաց՝ և ի միւս օրն դարձեալ հարցանեն» (Գիրք հարցմանց, էջ 680):

Հիմար քահանային նմանեցնում է երակահատ [բժշկի], որ արյուն բաց թողնելու հետ կտրում է նաև հիվանդի ջիւր և բազում վնասներ պատճառում (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 320):

Հիվանդություններից խոսում է խոցի, կոկորդացավի, աչքացավի, կեղի, ատամնացավի մասին, որոնցից յուրաքանչյուրի պատասխանը դեղն է. «Դեղն պատասխան է հիւանդութեան» (Գիրք քարոզութեան, Ձմեռան, էջ 15): Կան նաև անբուժելի հիվանդություններ, ինչպիսիք են ըստ նրա երթունտունը, սնքնոտնը:

«Խոց ծածկեալ ոչ բժշկի, այլ յորժամ ցուցանենք, դեղ դնէ հեքիմն և ողջանայ» (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 309): «Եւ որպէս մկհամ և դեղ զխոցն բժշկէ, նոյնպէս խոստովանութիւն բառնայ զմեղս և զհոգին բժշկէ» (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 309): «...զփտեալ ատամն հանեն զի մի այլքն ապականեսցեն» (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 310): «Սակաւ - սակաւ փոշին ընկեցեալ յաչս՝ կուրացուցանէ» (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 563):

«Բայց ի՞նչ է դեղ այնմ, որ յանկարծակի բռնէ զփողսն [խոսքը «բողմայ» հիվանդության մասին է]: Ասեն բժիշկք, թէ երակ առնուն ի ծործորակէ զգուշութեամբ, որ բազում արիւն ելանէ և ապա առնու զօշնարին ջուրն ի բերանն և ողորէ: Դարձեալ ասեն բժիշկք,

թէ որ անու զկաթն խոզին և զաղբ շանն և զջուր շուշանին և կղկղէ, յոյժ օգտէ ցաւին, որ բոնէ զփողսն» (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 264): «Վեցերորդ՝ *երքունտուն. սնքնտուն. սնքունժն* է» (Գիրք հարցմանց, էջ 371):

Անկատ չեն նաև հօգուտ համալիր բուժման արվող հարցադրումները, մասնավորապես պետք է իմանալ, որ ցավի զգացողությունը գլխից է գալիս. «Յաւք և կսկիծ մարմնոյն ի գլուխն վերաբերի» (Գիրք քարոզութեան, Ձմեռան, էջ 196): Ստամոքսի ցավի դեպքում խորհուղ է տալիս դիմել ծոմապահության. «...վասն *հիւանդութեան ստամոքաց ոչ* կարէ ուտել, *փահրիզ առնէ*, զի մի վասն յաճախ ուտելոյն առաւելացի հիւանդութիւն» (Գիրք քարոզութեան, Ձմեռան, էջ 126), և ընդհանրապես խորհուրդ է տալիս ուտել «*մանր-մանր ծասկելով և գոհութեամբ և մի՛ գազանապէս մեծամեծս կլանել*» (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 348):

Աչքացավի դեպքում խորհուրդ է տալիս սև շոր կապել. «Ասեն իմաստունք, թէ սեաւ գոյնն գտեսութիւն աչացն ժողովէ և զօրացուցանէ. վասն այն յորժամ *աչքն ցաւի*, սև շոր կապեն ի վերայ» (Գիրք քարոզութեան, Ձմեռան, էջ 382):

Ակնարկում է օձի թոյնի բուժական հատկությունների մասին. «Այլ թէպէտ արքայիկ օձին թոյնն ի կենդանութեան վնասէ զմարդն, այլ յորժամ մեռանի՝ այրեն և իւր կրակաց մոխիրն՝ ամենայն թունից դեղ է» (Գիրք քարոզութեան, Ձմեռան, էջ 138):

Խոսում է որոշ հիվանդությունների ժառանգականության մասին. «Ուստի յա յտ է, զի որակ ծնողացն խառնի ի բեղմնաւորիլն. ի դաշտանւոյն գօղի. *ի հիւանդութենէ, ի շիկութենէ*. որպէս աղամ տրտմութեամբ ծնաւ զորդին կայէն. *ցաւած ծնողացն ցաւածին որդիք*» (Գիրք հարցմանց, էջ 439), «Ի ժամ յղացմանն՝ եթէ ի ծնողացն՝ եթէ ի ժամանակէն՝ և եթէ *յախտից*, որ տարր և յաւելու ի խառնուածն, նոյն որակ զունով ծնանի զաւակն» (նունը, էջ 245), թեպէտ արձանագրում է նաև, որ արատ ունեցող ծնողը կարող է առողջ երեխա ունենալ. «Անկատար հայրն կարէ կատարեալ



որդիս ծնանել, որպէս կոյր հայրն՝ աչքաւոր որդի ծնանի» (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 67):

Հավանաբար, միջնադարյան Հայաստանում գործել են անվճար հիվանդանոցներ. «...բժիշկք ի հիւանդատունն առնեն զդեղս հիւանդաց՝ ոչ առնուն զվարձս ի հիւանդաց, այլ միայն ի թագաւորէն», -վկայում է Տաթևացի Քարոզգրքի Չմեռան հատորում (Գիրք քարոզութեան, Չմեռան, էջ 299):

2. Հոգեվիճակ, խառնվածք: Աստվածաշնչյան յոթ մեղքերը ցանկացած միջնադարյան հեղինակի համար քննարկման նյութ են դարձել, հավանաբար, թեկուզ հենց այն պատճառով, որ դրանք շրջանցելը գրեթե անհնար է եղել: Տաթևացի հաճախ է դրանք քննում՝ մարդուն ավելի կատարյալ և առողջ տեսնելու համար: Դրանցից երկուսը՝ *հպարտությունը* և *նախանձը*, նա համարում է հոգեկան կերտվածքի խաթարումներ. «Եւ ոմանք զերկուսն միայն սսեն մարմնական. որ է՝ *որկորստութիւն և բղջախոհութիւն*. և այլքն ամենայն հոգեկան: *Այլ էս սսեմ* թէ յեօթանց անտի երկուքն պարզ հոգեկան են. այսինքն *հպարտութիւն և նախանձ*: Եւ է՝ *հպարտութիւնն* իմացմանն՝ և *նախանձն* կամացն» (Գիրք հարցմանց, էջ 559). Երկուսը մարմնական են, իսկ մնացյալ երեքը՝ և՛ հոգեկան, և՛ մարմնական. «Իսկ երկուքն պարզ մարմնական. այսինքն *որկորստութիւնն և բղջախոհութիւնն*: Եւ երեքն խառն ի հոգւոյն և ի մարմնոյն. որ է *բարկութիւն, ծուլութիւն և ազահութիւն*: *Այլ սոցա երեցունց հաւասար է հոգւոյն և մարմնոյն բարկութիւն. և առաւել մարմնոյն ծուլութիւն. և առաւել հոգւոյն ազահութիւն*: *Այս ըստ նոցա որ է սսեն զմահու չափ մեղքն*» (նույն տեղը): Սրանցից ծանրագույնը, ըստ Տաթևացու, հպարտությունն է [մեծամտությունը], որովհետև ըստ նրա, եթե այլ ախտերը երևակվում են իրենց հատկանիշով, հպարտությունն ամենևին ծածկված է մնում. «*Ութերորդ՝ զի ամենայն տեսակք ախտիցն ի ը մի երևեցուցանեն մեզ. որպէս գողութիւն զինչս, և պոռնկութիւն զհեշտութիւն. իսկ հպարտութեանն ոչ գոյ ամենևին ակնկալութիւն*» (Գիրք հարցմանց, էջ 562):

Այն, որ սրանք հիվանդություններ են և կարող են հաղթահարվել, հեղինակի համար կասկածից վեր է տրտմությամբ մեղանչողը կարող է ձգտել ապաքինման այնպես, ինչպես հիվանդը՝ հիվանդությունից. «Զի տրտմութեամբ մեղանչումն հիւանդութիւն է և գայթակղութիւն. և հիւանդն յառողջութիւն փութայ. և գայթակղեալն՝ ի ճանապարհ» (Գիրք հարցմանց, էջ 33): Եվ միայն հիմար մարդն է, որ չի պայքարի և կթողնի ամեն ինչ ինքնահոսի. «Որպէս յիմար հիւանդն ասիցէ, կամիմ ուտել և ըմպել զհաճոյսն իմ. եթէ առողջանալոյ՝ եմ՝ առողջացայց. և եթէ մեռանելոյ՝ մեռայց» (Գիրք հարցմանց, էջ 18-19): Ընչաքաղցը ըստ Տաթևացու նման է ջրգոյլալ հիվանդի («Զի նման է ջրգողեալ հիւանդի. որ որքան աւելի խմէ, առաւել ծարաւի») (Գիրք հարցմանց, էջ 570), որի ելքը նույնպես բուժումն է:

Հոգեկան հիվանդություններից այսահարությունն, օրինակ, կարող է պսակի արգելքի պատճառ դառնալ. «...զի բազում արգելմունք գոն պսակին. որպէս ազգակցութիւնն հոգևոր կամ մարմնաւոր. կամ տկարութիւն բնութեանն. կամ պոռնկութիւնն. կամ այսահարութիւնն. կամ ծառայութիւնն. կամ բռնութեամբն. կամ այլ ինչ այսպիսի պատճառ. որով բաժանին այրն և կինն» (Գիրք հարցմանց, էջ 610):

Խոսում է նաև ծուլության վտանգի մասին, որ հանգեցնում է տրտմության և անգործության. «ծուլութիւնն յերկու իրաց երևի. մին որ յետս դառնայ ի հոգևոր բարւոյն և ծանրանայ ի գործելն. այսինքն պահել աղօթել և այլն. և ըստ այսմ կոչի տրտմութիւն» (Գիրք հարցմանց, էջ 559):

«Վասն պատկերացուցութեան հարցումն» գլխում անդրադառնում է մարդու տիպերին, ըստ որի մարդիկ լինում են զուարթ, բարկացող, արի, երկչոտ, աներկչոտ, խորամանկ, ամոթխած, աղուեսաբարոյ, զիճասէր, պարկեշտ և այլն:

Հեղինակի կարծիքով մարդը հասունանում է ոչ միայն ֆիզիոլոգիապես, այլև հոգեկերտվածքի առումով. կատարելության նա հասնում է հիսուն տարեկանում. «Զի ծ ամն յոբելեան է և

ազատութեան. որ ազատի մարդ *յախտից* և յախտաւոր սիրոյ աշխարհի և առ աստուած դառնայ» (Գիրք հարցմանց, էջ 378):

Նշենք նաև, որ Տաթևացուն հատուկ է միտքը հաճախ ընդհանրացնել թնավոր խոսքի տեսքով. ընչաքաղցի վերաբերյալ քննարկումներն, օրինակ, նա ավարտում է հետևյալ կերպ. «այնպիսին քաղցեալ է ի վերայ սեղանոյն և ծարաւի ի մէջ ջրոյն» (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 262): Թնավոր խոսքի արժէք է ձեռք բերում նաև նրա պատգամը ճիշտ ուտելու վերաբերյալ. «...զկերակուր ձեր կերիցէք ի նմանութիւն դեղի» (նույն տեղը):

*3. Մարմնակազմութիւն, կազմախոսութիւն:* Խիստ ծավալուն են մարմնակազմութեանը և կազմախոսութեանը վերաբերող հատվածները: Տաթևացին քննարկման նյութ է դարձնում թե՛ ներքին, թե՛ արտաքին օրգանները: Մարդու գլխավոր օրգաններ է համարում սիրտը, ուղեղը, լյարդը, թոքը, փայծաղը, երիկամները, լեղապարկը, քանի որ մնացյալ անդամների վնասվելու դեպքում մարդը կարող է ապրել, իսկ սրանց վնասվելը հանգեցնում է մահվան. «*Եւ գլխաւոր անդամք են ստքա. զի թէ յայլ անդամքն՝ այսինքն աչքն՝ ականջն՝ ձեռքն՝ և ոտքն՝ կամ այլն վնասի, մարդն ապրի: Ապա թէ յեօթանց ասացելոցս մինն վնասի, իսկոյն մեռանի մարդն*» (Գիրք հարցմանց, էջ 241): («*Իսկ է գլխաւոր անդամքն են այսոքիկ ըստ է մոլորակացն ունելով զբնութիւնս նոցա: Առաջինն սիրտն է՝ թագաւոր անձինն. Տա՛ք է և չոր. և իւր տանուտէր արեգակն է: Երկրորդն ուղեղ գլխոյն է. հով է և գէճ ընդ դէմ սրտին ջերմութեանն և չորութեանն. զի բարեխառնեացէ՛ զնոսա. և իւր տանուտէր լուսինն է: Երրորդն լեւ՛րդն է, աղբիւր արեանն. Տա՛ք է և գէճ՝ ունելով զբնութիւն մուշթարոյն, որ տանուտէր է նմա: Չորրորդն թո՛քն է. Հո՛վ և գէճ. և է՛ տուն պլղամի. և ունի տանուտէր զլուսինն: Հինգերորդն փայծեղն է. որ է՛ ախտո ալրեցած արեանն. Յո՛ւրտ է և չոր. և ունի տանուտէր զգոհալն որ է երևակն ցուրտ և չոր գոլով: Վեցերորդն երիկամնքն որ է տուն սերման. ջերմ և գէջ. և տանուտէր ունի զգոհրայն. որ է լուսաբերն: Եօթներորդն է՛ լեղին. որ է խարտեաշ մաղձն. Տա՛ք է և չոր. և տանուտէր ունի զմառեխն*

որ է հրատն: Եւ որպէս է են գլխաւոր անդամք՝ և է մոլորակք յերկինս» (Գիրք հարցմանց, էջ 241):

«Դրունք» է անվանում աչք, ականջ, քթանցք, բերան, պորտ, ստինք և ինչպէս ինքն է ասում՝ «ջրհեղն. և *արտաքնոց*»\_օրգանները: («Դարձեալ բժան դրունք է ի մարդն որ են այտքիկ. երկու աչք. բ ականջք. բ պինչք, բերանն. և պորտն. բ ստինք և ...ջրհեղն. և արտաքնոց» (Գիրք հարցմանց, էջ 241):

Ստամոքսը չորս՝ քարշողական, ունակական, հալողական և վտարական գործառույթներով կարգավորում է մարսողությունը: («Քարշողականն է՝ յորժամ կծկի և քաղցի, ներքուստ և արտաքուստ խնդրէ կերակուր: - 242. Ունականն է՝ յորժամ ժողովէ զկերակուրն՝ ձկտի և լայնանայ և փակէ՝ զամենայն դրունսն որ ի ներքոյ և ի վերոյ և ի կողմանէ, զի մի՛ թափեսցի *կերակուրն*: - 242. *Հալողականն է՝* յորժամ ի ջերմութենէն եփի կերակուրն և հալի որպէս ապուր ի պտկի. և հալի ամենայն կերակուրն մինչև ի գ ժամն. և է՝ որ պակաս և աւելի. վասն առողջ և տկար մարմնոյն: - 242. *Վտարականն է՝* յորժամ եփի և հալի *կերակուրն*, բանայ զդրունսն և բաժանէ զնոսա: - 242. Նմանապէս և զմիջին դուռն բանայ, և զպարզ կերակուրն ի լեարդն յուղարկէ. և նա ներկէ յարին և բաժանէ: - 242»):

Լյարդը 438 անոթներով կարգավորում է արյան շրջանառությունը. «Իսկ լեարդն է սկիզբն արեան *երակացն*. որ ելանէ ի լերդէն է երակ լի արեամբ: - 244. Եւ բաժանին ամենայն երակք ի լերդէն մլը երակք» (Գիրք հարցմանց, էջ 244): Լյարդի վերին երակը կոչում է «քալասիկէ\*». «Եւ կոչի վերին երակն քալասիկէ» (Գիրք հարցմանց, էջ 244):

Սանրամասն նկարագրում է մարդու ոսկորները, ջլերը, երակները, ավիշը, արյունը: («Քանի՞ են *գօղուածք* և ոսկերք մարդոյն: - 243. Ո՞րպէս է յկէ *գօղուածք*: - 243. Ումանք ասեն, ժէ *գլխաւոր ջլօքն* որ կապին սոքա՝ լինին յկէ *գօղուածք*: - 243-244. Կամ *գօղուածք* ներքին գլխաւոր անդամոցն և արտաքին մարմնոյն, որ մորթ և միս և արիւն և այլքն առ միմեանս յօղին՝ լինին նոյնքան: - 244. Եւ դարձեալ թիւ ոսկերացն մխը. և բժան անդամքն, և է

զգայարանքն յօդեալ առ միմեանս, լինին յկէ *զօղուածք*: - 244.) (Եւ ջուրն դ *հիւթք* այսինքն *արհւնն*, պալղամն. սեաւ և խարտեաշ մաղձն: - 232. Երակ *արեանն* գետոց և աղբերաց: - 232. Վասն որոյ գլուխն է՝ ի վերոյ. և *խոչափողն* որ ունի գտուր և զառն՝ օդո՛յդ է նման. և ի ներքոյ այլ մարմինք և հիւթ *արեան* և ջրոյ՝ երկրիս է օրինակ: - 232-233. Զի *ուղեղն* ի մէջն սնուցանէ զոսկրն. և ջիւն կապէ՛ առ միմեանս զի մի քակտեցին ոսկերքն. և *արհւնն* կերակո՛ւր է նոցա: - 240. Իսկ մագն է այրեցած *արհւնն*. որ օդովն ի դուրս փչի. որպէս տունկք յերկրէ: - 240. Վասն այն յորժամ մարդն տկարանայ՝ և *այրեցած արհւնն* աւելնայ, մագն ծորի՛ և երկայնանայ: - 240. Արդ եթէ *ի խարտեաշ մաղձէն* ի *լեարդն* է մնացեալ, լերդին համն ի լեղւոյն առնու և բերանն լեղի դառնայ. իսկ եթէ ի սեաւ մաղձէն է մնացեալ ի լեարդն. բերանն թթո՛ւ դառնայ. իսկ թէ պալղամն մնայ ի լեարդն, բերանն աղի փոխի. իսկ թէ յըստակ *արհւնն* մնայ ի լեարդն, լերդին համն անոյշ լինի, և բերանոյն համն անուշ տայ և քաղցր: - 242-243»):

Բավականին հետաքրքիր է սաղմի և հղիութեան նկարագրությունը. ըստ Տաթևացու սաղմը շնչավորվում է քառասուններորդ օրը. նախ ձևավորվում է սիրտը, իսկ պորտալարից սնուցումը սկսում է յոթերորդ օրը. «Եւ յետ այնորիկ յեօթներորդէ՛ աւուրն սկսանի *արհւնսածուծ* լինիլ յարգանդէ մօրն ընդ պորտն. որպէս դրդում և ձմերուկ ընդ կոթն» (Գիրք հարցմանց, էջ 261) «Եւ նախ սիրտն կազմի քան զայլ անդամսն. զի ջերմութիւն սերմանն ՚ի մէջն ժողովի և կազմէ՛ զսիրտն» (նույն տեղը):

Ավելի քան վեց հարյուր տարի առաջ արված հարցադրումների ճիշտ կամ սխալ լինելու խնդիրը մեր նյութից դուրս է իհարկէ, առավել ևս, որ ինքը՝ Տաթևացին, առողջությունից շատ ավելի վեր է դասել իմաստությունը՝ իբրև Աստծո գերագույն շնորհ. «Դարձեալ որպէս ասեն իմաստունք թէ քան զամենայն պարզևք գերագո՛յն է իմաստութիւնն յաստուծոյ առ մարդիկ իջեալ. Այսինքն քան զկեանս և *գառողջութիւն*, և քան զմեծութիւն և զայլսն» (Գիրք հարցմանց, էջ 178): Սակայն մի բան աներկբա է, որ մենք 14-15-րդ դդ. ի դեմս Տաթևացու ունեցել ենք

բժշկության հզոր տեսաբանի: Անժխտելի է, որ Գրիգոր Տաթևացին ունի համակարգված բժշկագիտական հայացքներ, որոնք անվերապահորեն սպասում են իրենց ուսումնասիրողներին, իսկ դրանք ներկայացնելու մեր փորձն ավարտենք նրա Քարոզգրքի Ամառան հատորի մի թևավոր խոսքով, որի առաջին հատվածը անկասկած վերաբերում է հենց իրեն՝ Գրիգոր Տաթևացուն. «*Ասեն իմաստունք, թէ ամենայն մարդ որ գիտէ զբժշկութիւն՝ բժիշկ է, այլ ոչ ամենայն մարդ որ գիտէ զարդարութիւն՝ արդար է*» (Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, Կ.Պոլիս, 1741թ., էջ 76):

Կարծում ենք, որ առաջին անգամ շրջանառության մեջ դրվող նյութը լուրջ համալրում կարող է բերել հայ միջնադարյան բժշկագիտական մտքին:

Григорян Сусанна -Медицинские термины в литературном наследии Григора Татеваци.- Богатое литературное наследие Григора Татеваци позволило судить о нем как о выдающемся философе, богослове, экономисте, педагоге, толкователе "писательского искусства", грамматике, ораторе и баснописце. Ко всему этому безоговорочно следует добавить и теоретика медицины. В его творческом наследии исследованию научно-медицинских вопросов посвящено около двухсот страниц, а понятий, связанных с этой сферой, - около двухсот единиц. Особый интерес представляют анатомия, физиология, факты детального описания человеческих органов, что еще раз свидетельствует о нем как о великолепном знатоке и в медицинской области тоже.

Grigoryan Susanna - Medical terms in literatry legacy of Grigor Tatevatsi.- The rich literary legacy of Grigor Tatevatsi gives u good reason to find him as a great philosopher, theologian, economist, teacher, interpreter of "art writing", grammatist, speaker and fabulist. To all these we can implicitly add an outstanding theorist of medicine as well. In his creative legacy the medical problems include more than two

hundred pages and there are more than two hundred terms related to this field. It's worthy of note the fact of anatomical, physiological and human organ's detailed description. Above mentioned is to prove, that he was the great expert of this sphere of medicine too.

ՓՈՒՍԱՌՅԱԼ ԲԱՌԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ 17-ՐԴ ԴԱՐԻ  
ԲԺՇԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ  
(ԱՍԱՐ ԵՎ ԲՈՒՆԻԱԹ ՍԵԲԱՍՏՍՅԻՆԵՐ)\*

Թաղևոսյան Հասմիկ  
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

17-րդ դարը, իբրև ուշ միջնադար, սահմանազատման ժամանակաշրջան կարելի է համարել միջին հայերենի և աշխարհաբարի համար: Այս շրջանի համար Գ. Ջահուկյանը, ինչպես գիտենք, առանձնացնում է լեզվի երեք տարբերակ՝ գրաբար, քաղաքացիական հայերեն և բարբառներ<sup>1</sup>: Ըստ այդմ՝ 17-րդ դարը վաղ աշխարհաբար է համարվում, և տվյալ շրջանի բոլոր գրական աշխատություններում կարող են հանդիպել անցումային կարգի լեզվական երևույթներ:

Այս շրջանի լեզվական առանձնահատկությունների բացահայտման առումով առատ նյութ են տալիս Սեբաստիայի բժշկագիտական դպրոցի ներկայացուցիչներ *Ասար Սեբաստացու «Գիրք բժշկական արհեստի»*<sup>2</sup> և *Բունիաթ Սեբաստացու «Գիրք բժշկութեան տումարի»*<sup>3</sup> բժշկարանները: Դրանք ամենից առաջ առանձնանում են փոխառությունների չափազանց լայն կիրառությամբ, և այս առումով կարելի է ասել՝ աննախադեպ են: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ հայր Արսեն Սուրբյանը, բնական համարելով «խառնակեալ հնչմամբ» օտար բառերի չափից ավելի կիրառությունը, մեկ նախադասությամբ այսպես է բնորոշում. *«Շատ անգամ բառից բաբելոն մ' են մեր բժշկարանքն: Կը տեսուվի հոն հնդիկ, պարսիկ, արաբացի, ասորի,*

---

\* Երիտասարդ լեզվաբանների հանրապետական երրորդ գիտաժողովի զեկուցումներ, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2013, էջ 12-20:

<sup>1</sup> Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը*, Ե., 1969, էջ 50:

<sup>2</sup> Ասար Սեբաստացի, *Գիրք բժշկական արհեստի* (այսուհետև՝ ԱՍ), Ե., 1993:

<sup>3</sup> Բունիաթ Սեբաստացի, *Գիրք բժշկութեան տումարի* (այսուհետև՝ ԲՍ) Ե., 1987:



*տաճիկ, յոյն, լատին, բառից մթերք մը այս բառ չէ, նաև շատ մը գաւառացի բառեր անպէտ ի գործածութեան»<sup>4</sup> :*

17-րդ դ. բժշկարանների պարագայում միանգամայն տրամաբանական պետք է համարել փոխառյալ բառերի թվային գերակշռությունը (1280 բառ)՝ հաշվի առնելով նախ և առաջ այն հանգամանքը, որ դրանցում տեղ են գտել մինչև 17-րդ դ. ստեղծված բժշկարանների փոխառությունները, մանավանդ եթե նկատի ունենանք, որ երբեմն ավելի վաղ ստեղծված բժշկարանների առանձին հատվածներ կան: Փոխառյալ բառերի կիրառման գործում ավելի շատ դեր է խաղացել արտալեզվական գործոնը: Հայաստանը, ինչպես գիտենք, միշտ էլ շփման մեջ է եղել տարբեր հարևանների հետ, իսկ Կիլիկիայի հայկական պետականության անկումից հետո, երբ խարխվեցին միասնական լեզվի հիմքերը, անընդհատ շարունակվող գաղթերի պայմաններում անխուսափելի դարձավ տարաբնույթ ցեղերի ու ժողովուրդների հետ շփումը: Փաստորեն, փոխառյալ բառերի քանակը 17-րդ դ. բժշկարաններում զգալիորեն ավելանում է ի հաշիվ բանավոր խոսքի միջոցով անցած ժողովրդական փոխառությունների:

Ասար և Բունիաթ Սեբաստացիների բժշկարաններում փոխառյալ բառերի հիմնական աղբյուրները դարձյալ մնում են արաբերենը, պարսկերենը, թուրքերենը և հունարենը, այն տարբերությամբ միայն, որ թուրքերեն բառերի զգալի աճ է նկատվում:

Ըստ մեր հաշվումների՝ վերոհիշյալ բժշկարաններում կիրառվել է մոտավորապես 1280 փոխառյալ բառ (չհաշված դրանց գրչագրական և այլ կարգի բազմաթիվ տարբերակները): Գերակշռում են արաբերեն բառերը՝ 745 բառ (58 %), ապա պարսկական փոխառությունները՝ 281 (22%), այնուհետև թուրքերեն բառերը՝ 146 բառ (11.2 %): Հունարեն բառերը քանակապես զիջում են. 46 բառ (3.8%): Այլ լեզուներից կատարված փոխառություններից բժշկարաններում հատուկենտ բառեր են

---

<sup>4</sup> Տե՛ս Արսէն Սուքրեան, *Պատմություն հայ բժշկություն*, Բազմավեպ, 1881, էջ 36:

կիրառվել. երկու բառ ասորերեն՝ *կթխայ* «բաժակ» (ԱՍ 352), *շուսմա* «կնճիթ» (ԱՍ 181), երկու բուսանուն լատիներեն՝ *արսենիս* «գառիկ» (ԱՍ 328), *մաղթ* «խայծղան, կուպր» (ԱՍ 363), մեկ բառ վրացերենից՝ *տխիլ* «կաղին» (ԱՍ 181), և մեկը հնդկերենից՝ *փան* «թմբուլ» (ԱՍ):

Փոխառյալ բառերից 60-ը անստույգ են. դրանց աղբյուրը դժվար է պարզել (*խասսիա* «կուղրի ձու» (ԲՄ 85), *նաղուս* «անընդհատ հորանջելու հիվանդություն» (ԱՍ 223), *տրիժան* «պիծակ», *դերսենդին* (ԲՄ 112), *խիմիլիկո* (ԱՍ 348) հավանաբար արբ. *Սիլիկոն* «վառված արձիճ» և այլն):

Նշենք, որ փոխառյալ բառերի ստուգաբանության հարցում հիմնականում հետևել ենք ՄՀԲ-ին, ՀԱԲ-ին, նաև ՀԲԲ-ին, իսկ դրանցում տեղ չգտած զգալի թվով բառերի ծագման և ստուգաբանության հարցում հետևել վերոհիշյալ բժշկարանների վերջում զետեղված բառացանկին, որ տվել է բժշկապատմաբան Դ. Կարապետյանը:

Փոխառյալ բառերի շարքում, ինչպես և միջին հայերենի բառապաշարում առհասարակ, ճնշող մեծամասնություն են կազմում *արաբերեն բառերը*. սա միանգամայն բնական պետք է համարել՝ նկատի ունենալով դեռևս 12-րդ դ. սկսած արաբական բժշկության հզոր ազդեցությունը, որից հայկական բժշկագիտությունը զերծ մնալ չէր կարող:

Արաբերեն բառերը հիմնականում անմիջական փոխառություններ են, իսկ դրանց մեծ մասը, ունենալով տերմինային արժեք, գրանցված է գրավոր աղբյուրներում, այն է՝ բժշկարաններում: Այդ փոխառությունների ընդամենը 10%-ն է<sup>5</sup>, որ պահպանվել է ժողովրդախոսակցական լեզվում և այսօր էլ կիրառելի է, ինչպես՝ *ափիոն*, *բակլա*, *խասիաթ*, *հինայ*, *նունուֆար*, *սապոն*, *շարբաթ* և այլն: Հետագայում չգործածված արաբերեն բառերի սովոր մասի կիրառելիության իրողությունը, սակայն,

---

<sup>5</sup> Տե՛ս Ս. Վարդանյան, *Հայաստանի բժշկության պատմություն, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը*, Ե., 2000, էջ 177:

կարևորվում է լեզվի պատմության տվյալ ժամանակաշրջանի ուսումնասիրության համար:

1. Ասար և Բունիաթ Սեբաստացիների բժշկարաններում կիրառված 745 արաբերեն բառերի ամենամեծ խումբը (350) *բուսանուններն* են, ինչպես որ առհասարակ բնորոշ է միջին հայերենին<sup>6</sup>: Օրինակ՝ *ածաս* «սալոր» *ասբարգայ* «ասպայուլ» (ԱՍ 217), *ասրար* «ծորենի» (ԱՍ 131), *դահլայ* «ջրոսպ» (ԱՍ 334), *եսպրուհ* «մարդախոտ» (ԲՍ 118), *գայթար* «ծոթօրին» (ԱՍ 337), *ըռահան* «ռեհան» (ԱՍ 218, ԲՍ 79), *թաթուլայ* «արջընկույզ» (ԱՍ 165, ԲՍ 118), *թավաքր* «խնկողկուզակ» (ԱՍ 225), *խխիլ* «գայլասխտոր» (ԱՍ 143), *լուֆահ* «մանրագոր» (ԲՍ 118), *խարդայ* «մանանեխ» (ԱՍ 231), *հանդալ* «դառնադդում» (ԱՍ 174), հլթիս «բոխ» (ԱՍ 211), *դայսար* «սև օշինդր» (ԲՍ 84), *ճէվս* «ընկույզ» (ԱՍ 141, ԲՍ 88), *մէվիզ* «վայրի չամիչ» (ԱՍ 224), «գարի» (ԲՍ 77), *պապունաճ* «երիցուկ» (ԱՍ 217), *ջօտ* «խնկողկուզակ» (ԲՍ 75), *սայասիոս* «վայրի քաշիմ» (ԱՍ 106), *սօնօպար* «սոճի» (ԱՍ 181), *սապո* «հավվե» (ԱՍ 124), *ուպհուլ* «ցրդենի» (ԱՍ 166), *քուշնայ* «տափուլոռ» (ԱՍ 398) և այլն:

2. Քանակի առումով երկրորդն են *ախտանուն*, *կազմախոսություն* և *օրգանիզմի հատկություն* մատնանշող բառերը, որոնք էլ բժշկական տերմիններ են (145 բառ). *աքիլայ* «կերցավ» (ԲՍ 103), *դայ-ալ-սալար* «մազաթափություն» (ԱՍ 223), *զիկ* «ջրգողություն» (ԲՍ 100), *թամատուտ* «վերջույթների դող» (ԱՍ 91), *խսիալ* «լուծ» (ԲՍ 91), *խէշամ* «քթի պոլիպ» (ԲՍ 79), *հասպա* «կարմրուկ» (ԲՍ 109), *դապար* «ցան» (ԲՍ 109), *մաֆաճան* «հանկարծամահություն» (ԱՍ 109, ԲՍ 120), *նուզլայ* «վերին շնչուղիների բորբոքում» (ԱՍ 148, ԲՍ 87), *շակիկա* «միգրեն» (ԱՍ 137), *սաքթա* «ուղեղի կաթված» (ԱՍ 109, ԲՍ 68), *տավվար* «գլխապտույտ» (ԲՍ 62), *սիշայ* «փոր» (ԱՍ 164), *այամբ* «աղիներ» (ԱՍ 230), *աքալ* «կենտրոնական մեծ երակ» (ԲՍ 187), *հնար* «ճկույթ», *պնար* «մատնեմատ» (ԲՍ 199), *մաշիմայ* «ընկերք» (ԱՍ

<sup>6</sup> Տե՛ս *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, հ. Ա, Ե., 1972, էջ 199:

100), *շիրեան* «գլխավոր գարկերակ» (ԲՄ 69), *սիլայթ* «խառնվածքի տիպ» (ԲՄ 126), *պալղամ* «որձ» (ԱՄ 192, ԲՄ 61), *սաֆրա* «դեղին մաղձ» (ԱՄ 195, ԲՄ 63), *սավտա* «սև մաղձ» (ԱՄ 137, ԲՄ 77) և այլն:

3. Երրորդը *քիմիական, հանքային և բուսական ծագման նյութերի* անվանումներն են (60 բառ), որոնք ևս առնչվում են բժշկությանն այնքանով, որ բաղադրվում են դեղախառնուրդների մեջ կամ իբրև բուժամիջոց են ծառայում, ինչպես՝ *սիլեմիայ* «արծաթի կամ ոսկու խարամ» (ԱՄ 142), *ազո* «նստվածք» (ԱՄ 142), *ասրայ* «արձիճ» (ԱՄ 327), *եսդուր* «հակինթ» (ԱՄ 190), *եաման* «ազաթ» (ԲՄ 114), *զիպախ* «սնդիկ» (ԱՄ 174, ԲՄ 118), *զիֆթ* «սև ձյութ» (ԲՄ 128), *մուսիայ* «հանքային և կենդանական սև ձյութ» (ԱՄ 214, ԲՄ 116), *նշայ* «օսլայ» (ԱՄ 371), *շիպ* «պաղլեղ» (ԱՄ 184), *սիլիկոն* «վառված արձիճ» (ԱՄ 193) և այլն:

4. *Դեղանյութեր և բուժական միջոցներ* (35 բառ). *այարիճ* «դեղորայքային շիլա» (ԲՄ 65), *թուրիայ* «աչքի հիվանդությունների դեղամիջոց, ցինկի օքսիդ» (ԱՄ 126), *թուպիր* «բուժում, ճար» (ԱՄ 110), *հայ* «դեղ» (ԱՄ 217, ԲՄ 90), *դուրս* «բարդ դեղախառնուրդ» (ԲՄ 99), *ճիպար* «ամրացնող սպեղանի» (ԱՄ 361), *մուսհիլ* «լուծողական» (ԱՄ 213), *շաֆ* «բժշկական մոմ» (ԲՄ 78), *տլէ* «հեղուկ քուրք» (ԲՄ 95), *տուէտ* «վիրակապ» (ԱՄ 183), *քուիլ* «աչքի դեղախառնուրդ» (ԱՄ 169) և այլն:

5. Բժշկարաններում, չնայած քանակային նվազությանը, հաճախ են կիրառվում նաև *կենդանաբանական տերմինները* (12 բառ), ինչպես՝ *աղրայ* «կարիճ» (ԱՄ 227), *սաստ* «առյուծ» (ԱՄ 326), *աֆյի* «օձ» (ԱՄ 329), *խալիզոն* «ծովային խխունջ» (ԱՄ 347), *ռասու* «դաշտամուկ» (ԱՄ 381), *սայլաս* «աղվես» (ԱՄ 382), *տուռաճ* «հնդկահավի մի տեսակ» (ԱՄ 170, ԲՄ 98):

6. Բժշկությանը վերաբերող տերմինային արժեք ունեցող բառերից բացի զգալի թիվ են կազմում նաև *խոսակցական բնույթի բառերը*, որոնք հիմնականում առնչվում են տնտեսությանը, ինչպես՝ *զեպէտ* «կաթի սեր, կարագ» (ԱՄ 203), *զերպա* «սուլա» (ԲՄ 67), *ըոզակ* «ապրանք» (ԱՄ 115, ԲՄ 76), *խապար* «լուր» (ԲՄ 120), *խազինայ* «շտեմարան» (ԱՄ 113), *հասայ* «բաժին, չափ» (ԱՄ 230),

*համալ* «բեռնակիր մարդ» (ԲՍ 107), *հեյպէթ* «ահ, երկյուղ» (ԱՍ 188), *դանդ* «շաքար» (ԱՍ 227), *ճէվալ* «չոր կերակուր» (ԲՍ 90), *մթխալ* «կշռի միավոր» (ԲՍ 68), *նուսխա* «դեղատոմս» (ԱՍ 180), *շէրպէթ* «օշարակ» (ԱՍ 216, ԲՍ 126), *պուխար* «գուրբշի» (ԲՍ 62), *ռասմ* «կարգ, օրենք» (ԱՍ 206, ԲՍ 75), *սլեհ* «զենք» (ԱՍ 114), *վղամ* «զայրույթ» (ԱՍ 181), *ումուտ* «հույս» (ԲՍ 119), *օթխայ* «չափի միավոր» (ԲՍ 110):

Արաբերենից հետո կիրառման հաճախությամբ երկրորդն են *պարսկական փոխառությունները* (281), որոնց աղբյուրը հիմնականում նոր պարսկերենն է: Նկատենք, որ դրանց մեծ մասը, ի տարբերություն արաբերենի, ժողովրդական փոխառություններ են, որոնք լայնորեն կիրառվել են ոչ միայն միջնադարյան բժշկական, այլև գեղարվեստական գրականության մեջ, և այսօր դրանց զգալի մասը կիրառություն ունի բարբառներում:

1. Բժշկարաններում կիրառված պարսկական փոխառությունների գրեթե կեսը (138) դարձյալ *բուսանուններն* են, ինչպես՝ *անտուզ* «կղմուխ» (ԱՍ 148), *բարթանգ* «ջղախոտ» (ԱՍ 219), *գուլնար* (կուլնար, ճուլինար) «նռան ծաղիկ» (ԱՍ 218, ԲՍ 91), *գարտալու* «ծիրան» (ԲՍ 127), *թօտար* «ձագախոտ» (ԱՍ 201), *խարթմի* «տուղտ» (ԲՍ 102, ԱՍ 215), *խարխաշակ* «փշանման բույս» (ԱՍ 225), *կալզուպան* «եզնալեզու» (ԲՍ 87), *մարզանկօշ* «ինկաձաղիկ» (ԱՍ 207, ԲՍ 63), *յէսմէկ* «հասմիկ» (ԲՍ 105), *նօխուտ* «սիսեռ» (ԱՍ 219), *սայթար* «ուրց» (ԱՍ 382), *տարիֆլֆլ* «երկար պղպեղ» (ԱՍ 134, ԲՍ 93), *տարդօն* «թարխուն» (ԲՍ 125, ԱՍ 228), *բունաս* «տորոն» (ԱՍ 393), *ուսիդ դադուն* «կոկոռիկ» ԱՍ 223), *քասնի* «եղերդակ» (ԲՍ 98) և այլն:

2. Երկրորդը *առօրյա խոսքին բնորոշ բառերն* են (71 բառ), որոնք այսօր էլ կիրառվում են բարբառներում, ինչպես՝ *սպրշում* «մետաքս» (ԱՍ 150), *բրուդ* «ապակե աման» (ԱՍ 143), *գուլապ* «վարդաջուր» (ԱՍ 219), *դանա* «հատիկ» (ԱՍ 221), *զէրպա* «մտով կամ բանջարեղենով կերակրատեսակ» (ԲՍ 71), *էրուշտա* (ԲՍ 94), *թաժա* «նոր» (ԲՍ 107), *լական* «կոնք» (ԱՍ 144), *խամ* «հում,

չօգտագործված» (ԲՄ 117), *խուրուզփաշայ* «աքլորի ձագ» (ԱՍ 219), *դաֆադորի* «սուրձի բաժակ» (ԱՍ 217), *նապարթ* «բյուրեղաշաքար» (ԱՍ 149), *շորվա* «աղի ապուր» (ԲՄ 65), *ճօմարտ* «առատաձեռն» (ԱՍ 166), *սիրքայ* «քացախ» (ԱՍ 158), *սլեհտար* «զինվոր» (ԱՍ 114), *փաչա* «կովի կամ ոչխարի սրունք» (ԱՍ 132, ԲՄ 117), *փարտա* «թաղանթ» (ԲՄ 61), *քաչալ* «ճաղատ» (ԱՍ 223), *քունճ* «անկյուն» (ԱՍ 184), *քաֆ* «փրփուր» (ԱՍ 224), *քավթօռ* «բորենի» (ԱՍ 396):

3. Քանակային առումով երրորդը *քիմիական, կենդանական, հանքային և այլ նյութեր նշանակող բառերն* են (40). *զիլ* «կավ» (ԱՍ 221), *զահր* «օձի թույն» (ԱՍ 187), *զէիր* «թույն» (ԲՄ), *զոնէխ* «մկնդեղ» (ԱՍ 150), *զմրութ* «զմրուխտ» (ԱՍ 338), *թանուքար* «սկեբորակ» (ԱՍ 142), *մինթին* «միզամուղ խառնուրդ» (ԲՄ 72), *նշատիր* «ամոնիումի քլորիդ» (ԱՍ 140, ԲՄ 114), *ռուշան* «լուսնաքար» (ԱՍ 177), *տեկպարտիկ* «մկնդեղ» (ԱՍ 178), *փիրուզայ* «փիրուզ» ԱՍ 188), *քահրուպայ* «սաթ» (ԱՍ 159) և այլն:

4. Վերջին՝ չորրորդ խմբում ընդգրկել ենք *ախտանուններն ու կազմախոսական բառերը* (32 բառ): Նշենք դրանցից մի քանիսը. *սպիլայ* «ծաղիկ հիվանդություն» (ԱՍ 325), *զախս* «խոց» (ԱՍ 88), *զախնէֆէս* «ծանրաշնչություն» (ԱՍ 191), *զիպհան* «կոկորդի ուռուցք» (ԲՄ 81), *թուխմայ* «դժվարամարսություն» (ԱՍ 151), *դապզ* «փորկապություն» (ԲՄ 95, ԱՍ 218), *մատարզատ* «հայրենի ցավ» (ԲՄ 121), *պիսակ* «բորոտություն» (ԱՍ 111), *տախիս* «մատնաշունչ» (ԱՍ), *տավալի* «երակների լայնացում, փղախտ» (ԱՍ), *քէլ* «զլխամաշկի հիվանդություն, մազաթափություն» (ԱՍ 173), *խուրտա* «մանր ոսկորներ» (ԲՄ 106), *նախուն* «եղունգ» (ԱՍ 369), *ջիզար* «լյարդ» (ԱՍ 226), *տմաղ* «ուղեղ» (ԱՍ 392, ԲՄ 178) և այլն:

Փոխառյալ բառերի շարքում, ինչպես արդեն նշեցինք, երրորդը *թուրքերեն բառերն են* (146 բառ): Ի տարբերություն միջին հայերենի առաջին շրջանի, երբ թուրքերեն բառերը աննշան տեղ են գրավում, եղած բառերն էլ թաթարերեն կամ մոնղոլերեն են<sup>7</sup>, միջին հայերենի երկրորդ փուլում՝ 15-17-րդ դդ. նկատվում է թուրքերենի ազդեցության ուժեղացում, որն էլ պայմանավորված է

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 236:

այս շրջանում Օսմանյան կայսրության ստեղծմամբ ու հզորացմամբ: Թուրքերեն բառերը, որոնք բոլորն էլ ժողովրդական փոխառություններ են, հենց այս շրջանի հայ-թուրքական շփման հետևանք են:

1. Ճնշող մեծամասնությունը բուսանուններն են (81 բառ, որից 47-ը չկա ՄՀԲ-ում): Օրինակ՝ *ալոճ*, *ատասողանի* «մկնտխ» (ԱՍ 204), *եօնճայ* «առվույտ» (ԱՍ 336), *էմիշ* «միրգ» (ԱՍ 339), *խսպիթ եաղի* «սուրմայի յուղ» (ԱՍ 144), *լախանայ* «ծաղկակաղամբ» (ԱՍ 345), *լապլապու* «սիսեռ» (ԱՍ 131), *լապատա* «ավելուկ» (ԲՍ 114), *դաթրան* «անուշահոտ խեժ» (ԱՍ 138, ԲՍ 113), *դուռշուն* «արճիճ» (ԲՍ 114), *նանայ* «անանուխ» (ԱՍ 370), *չիվիթ* «լեղակենի» (ԱՍ 375), *չողան* «օճառախոտ» (ԱՍ 204), *պանկիլիկ* «հնդկանեփ» (ԱՍ 209), *սուլուկ* «տզրկախոտ» (ԲՍ 107), *տոմալա* «խակ արմավ» (ԲՍ 118), *օղուլ օթի* «թրնջխոտ» և այլն:

2. Երկրորդ խմբում ընդգրկել ենք ախտանվանական և կազմախոսական թվով 27 բառ (ընդամենը 7-ն է արձանագրված ՄՀԲ-ում): Թվենք դրանցից մի քանիսը. *աբլաղ* «այտուցված դեմք» (ԱՍ 223), *ագմիշ* «վխոց, վերք» (ԱՍ 323), *եարայ* (ԱՍ 172), *թառլաթմա* «այրող ջերմ» (ԲՍ 64), *կեօզ տաղի* «աչքի այրոց» (ԲՍ 114), *կովտա* «իրան» (ԱՍ 172), *դարեանիս* «սև թախիճ» (ԲՍ 60), *դոնախ* «աչքի ուռուցք» (ԱՍ 149), *դուրսախ* «քարաճիկ» (ԲՍ 123), *մայասուլ* «թուրք» (ԲՍ 121), *սիկիլ* «գորտնուկ» (ԲՍ 115), *պէլսուկիլի* «ջերմամիզություն» (ԱՍ 200), *սզու* «կսկիճ» (ԱՍ 172) *տալախ* «փայծաղ» (ԱՍ 172), *տամար* «ջիդ» (ԲՍ 88), *տէմրէկ* «որքինոտություն» (ԱՍ 173), *տովիճա* «սպազմ» (ԱՍ 213), *ուչուխ* «ընկնավորություն» (ԲՍ 67), *քէսմէ* «թուրք» (ԱՍ 225) և այլն:

3. *Դեղանյութեր, քիմիական և հանքային նյութեր* (17 բառ, որից 11-ը չկա ՄՀԲ-ում). *աղու* «թույն» (ԲՍ 118), *գոհարչլէ* «բորակ» (ԱՍ 213), *եահու* «ամրացնող սպեղանի» (ԱՍ 166, ԲՍ 97), *իպլիս տոնաղի* «օպսիդիան» (ԱՍ 144), *դուռուխ* «ազոխ» (ԲՍ 115), *սուլումա* «սնդիկի քլորիդ» (ԱՍ 173), *քիրաճ* «այրած կիր» (ԱՍ 144), *քկուրդ* «ծծումբ» (ԱՍ 148) և այլն:

4. *Առօրյա խոսքում գործածվող բառեր* (17բառ). *դալի* թեթևամիտ, *թանճարա* «պղնձե կաթսա» (ԱՍ 197), *դազան* «կաթսա» (ԱՍ 216), *դափաղ* «կափարիչ» (ԱՍ 147), *մալեզ* «կաթով և ալյուրով կերակուր» (ԱՍ 211, ԲՍ 84), *չօմլակ* «կավե աման» (ԲՍ 121), *դունտուզ* «աչալ» (ԱՍ 120), *պագմագ* «դոշաբ» (ԱՍ 207), *սնկուր* «սպունգ» (ԱՍ 142), *տուզլու* «աղի» (ԲՍ 110), *օլդայ* «ձուկ բռնելու կեռիկ» և այլն:

5. Թուրքերենից վկայված է չորս *կենդանու անուն*. *ասլան* «առյուծ» (ԱՍ 326), *իլան* «օձ» (ԱՍ 344), *պայդուշ* «բու» (ԲՍ 99), *փարս* «ընձառյուծ» (ԲՍ 102):

Հունարեն բառերը ամենաքիչն են Ասար և Բունիաթ Սեբաստացիների բժշկարաններում՝ չհաշված ասորերենից և լատիներենից վկայված երկուական և վրացերենից ու հնդկերենից մեկական բառերը: Հունական փոխառությունների նվազ քանակությունը (46 բառ, որից 20-ը կա ՄՀԲ-ում) պայմանավորված է այս շրջանում հունարենի ազդեցության թուլացմամբ. այդ ազդեցությունը շարունակվում է լոկ գրավոր աղբյուրների միջոցով, այսինքն՝ եղած հունական փոխառությունները ավելի վաղ շրջանի բժշկարաններում ամրագրված և արդեն տերմինի արժեք ունեցող բառերն են, որոնք այլևս չեն համալրվել: Նկատենք, որ հունարեն բառերի զգալի մասը, տերմինային արժեք ունենալով, չի արձանագրվել բառարաններում, և այդպիսով դժվար է հստակ ասել, թե դրանք հնագույն, թե նորագույն փոխառություններ են:

Հունարեն բառերի ճնշող մեծամասնությունը՝ 36-ը բուսանուններ են, ինչպես՝ *արիբու* «խոլորձ», *ալաւէս* «հալվե» (ԱՍ 321), *սպիոս* «լոշտակի տեսակ» (ԱՍ 325), *բաղաստոիոն* «նռան ծաղիկ» (ԱՍ 330), *կինամոն* «դարչնածառ» (ԱՍ 353), *կաստանայ* «շագանակ» (ԱՍ 352), *մաստաքի* «ծառի խեժ» (ԱՍ 200), *սակամոնի* (ԱՍ 120), *սապարթիոն* «ծնեբեկ» (ԱՍ 383), *վլիտոն* «թելուկազգի բույս» (ԱՍ 389), *տաֆնի* «դափնի» (ԲՍ 112), *ֆայդարա* «դառնադդում» (ԲՍ 73), *Տլուսկոն* «խնկատերև» (ԱՍ 400) և այլն:



Մյուս տասը հունական փոխառություններից երեքն ախտանուններ են՝ *դիահիտոս* «շաքարամիզություն» (ԱՍ 335), *էլաոս* «աղիքի ոլորում» (ԲՄ 94), *մանիա* «հոգեկան հիվանդություն» (ԲՄ 65), երկուսը՝ կազմախոսական բառեր՝ *բասիլիկ* «բազկի մեծ երակ» (ԲՄ 100), *կիֆալ* «արյուն վերցնելու երակ» (ԱՍ 119), երեքը բուժամիջոցներ են՝ *խրզմա* «ցեխի և այրած կրի խառնուրդ (ԱՍ 202), որ օգտագործվում է մազահանման համար», *մասրիտիտոս* «դեղախառնուրդ, որի գյուտը վերագրվում է Միհրդատ Պոնտացուն» (ԲՄ ), *ըրախի* «խաղողի օղի» (ԱՍ 202), երկուսը՝ հանքանյութեր՝ *մինաստիս* «մագնիսական քար», (ԱՍ 185), *կինասպարի* «կարմիր ներկ, որ ստացվում է սնդիկից և ծծումբից»:

Չնայած քանակային նվազությանը՝ հունարեն բառերը աչքի են ընկնում կիրառության հաճախակիությամբ:

Հոդվածի վերջում հարկ ենք համարում անդրադառնալ նաև մի քանի փոխառությունների (հիմնականում արաբերեն) տարբերակային նոր ձևերի, որոնք առաջին անգամ կիրառվել են վերոհիշյալ բժշկարաններում:

Բժշկական տերմին դիտարկվող պարսկերեն *յերդնիսայ* «նստանյարդի բորբոքում» բառը Բունիաթ Սեբաստացու բժշկարանում երկու անգամ կիրառվել է *ըրքնիսայ* տարբերակով. «Դուռն, որ յիշէ նքրիսն և ըրքնիսան» (106): «...և անհոգ մնայ...*ըրքնիսայէ* և իրիկամն եղած ցաւերու» (74):

*Թաշանուճ* «մարմնի որևէ մասի կծկում» արաբերեն տերմինը ԲՄ-ն կիրառել է  $\delta > 2$  տարբերակով. «Մահակն ասէ, թէ այս ցաւս շատն ի թաշանուշէն լինի» (73): «Թաշանուշ և հուզագ» (74):

Նույն տեղում արաբերեն *իսթիլայ* «խցանում» բժշկական տերմինը գտնում ենք *միթիլա* դրափոխված տարբերակով. «... որ շատ գիճութիւն ի ջղերն է դրկել և այսոր թաշանուշի *միթիլայի* ասեն» (74):

*Լակուա* «դիմային նյարդի լուծանք» արաբերեն բառը ԱԱ-ն կիրառել է *լաղվա* տարբերակով. «...օգտէ *լաղվային*, որ է երես ծովել» (223):

Միջին հայերենում հաճախ գործածական արաբերեն *թմրհնդի* «հնդկարմավ» բուսանունը Ասար Սեբաստացին քանիցս կիրառել է *թայրհնդի* տարբերակով (194, 205, 206): Ենթադրելի է, որ մ > պ հնչյունափոխությունը առաջ է եկել հետևյալ կերպ. *մր* հնչյունի արտասանական ծանրության հետևանքով հավելվել է *բ<sup>8</sup>*: Ի դեպ նկատենք, որ *թմրհնդի* տարբերակը կիրառել է Մխիթար Հերացին<sup>9</sup>, կիրառվել է նաև 13-րդ դարի «Բժշկարան ձիոյ»<sup>10</sup> երկում: Տրամաբանական է, որ վերոբերյալ *թայրհնդի* տարբերակում մ հնչյունը ընկել է:

*Պզրդատուն* «հնդկական ջղախոտ» բուսանունը Բունիաթ Սեբաստացու երկում հաճախ կիրառվող բառերից է և ամենուր հանդես է եկել *պրդատուն* տարբերակով (61, 84, 97, 106), որն էլ, ելնելով *զ-դ* տառերի նմանությունից, կարծում ենք, գրչագրական սխալ է: Այս տարբերակը մեկ անգամ էլ հանդիպում է Ասար Սեբաստացու բժշկարանում (էջ 378):

Արաբերեն *սպիտած* «սպիտակադեղ, որ ստացվում է պղնձի և ցինկի խառնուրդից», Ասար Սեբաստացու բժշկարանում կիրառվել է ստուպեճ տարբերակով. «...և առ ստուպեճ և մրտասանկ Բ (2) Բ(2) դրամ, դեղնախունկ Գ(3) դրամ, զաֆրան կես դրամ, ախցած խառնե՛» (162):

Այսպիսով՝ վերոհիշյալ բժշկարանները աչքի են ընկնում արաբերեն, պարսկերեն, թուրքերեն ու հունարեն փոխառությունների աննախադեպ առատ կիրառությամբ, որոնց փոքր մասն է պահպանվել արդի ժողովրդախոսակցական լեզվում, դրանց զգալի մասն էլ կիրառություն ունի բարբառներում:

## Համառոտագրություններ

### ԱՍ - Ասար Սեբաստացի

---

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 155

<sup>9</sup> Մխիթար Հերացի, *Ջերմանց մխիթարութիւն*, Վենետիկ, 1832, էջ32ա:

<sup>10</sup> *Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ*, Ե., 1980, էջ 156:

ԲՄ - Բունիաթ ՄԵՐԱՍՏԱԳԻ

ՄՀԲ - Միջին հայերենի բառարան

ՀԱԲ - Հայերեն արմատական բառարան

ՀԲԲ - Հայերեն բացատրական բառարան (Մտ. Մալխասյանց)

Hasmik Tadevosyan - The Use of Borrowings in the Medical Books of the 17-th Century (Asar Sebastatsy and Buniat Sebastatsy). - This article touches upon the borrowings, which were used in the medical books of Asar Sebastatsy and Buniat Sebastatsy. These medical books are distinguished by amount of unprecedented use of borrowings (about 1280). There were applied not only the borrowings from earlier medical books, but also a lot of new words, which were borrowed in that period through oral speech. These words are represented in four groups: 1) Arabian words, which are basically direct borrowings and have term value, 2) Persian words, which are colloquial borrowings from new Persian language, 3) Turkish words, which are also colloquial borrowings, 4) Greece words, which are literary borrowings having term value.

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐ ԵՎ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՁԵՎԵՐ  
17-ՐԴ ԴԱՐԻ ԲԺՇԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ  
(ԱՍԱՐ ԵՎ ԲՈՒՆԻԱԹ ՍԵԲԱՍՏԱՑԻՆԵՐ)\*

Թաղևոսյան Հասմիկ  
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Անժխտելի է, որ միջնադարյան հայ բժշկարանները հսկայական նյութ են պարունակում հայոց լեզվի բառապաշարի, ինչպես նաև կրած քերականական փոփոխությունների ուսումնասիրության համար: Հատկապես զգալի անելիք կա միջին հայերենի երկրորդ շրջանում՝ ստեղծված բժշկարանների ուսումնասիրության առումով: Եթե Կիլիկիայի հայկական պետության գոյության ժամանակահատվածում (12-14դդ.) մենք գործ ունեինք քիչ թե շատ նորմավորված գրական լեզվի հետ, ապա պատկերն այլ է 15-րդ դարից հետո. տվյալ ժամանակաշրջանում չկար պետականություն և միասնական լեզու: Այս շրջանում շարունակվող գաղթերը ավելի են ուժեղացնում բարբառների ու ենթաբարբառների ազդեցությունը գրական լեզվի վրա: Լեզվական այն խառնիճադանջությունը, որ կար այս ժամանակ, կարծում ենք՝ ոչ մի շրջանի բնորոշ չէ: Միմյանց են խաչվում գրաբարը, միջին հայերենը և բարբառները: Այս լեզվավիճակն իր անմիջական արտացոլումն է գտել Սեբաստիայի բժշկական դպրոցի ներկայացուցիչներ Ասար և Բունիաթ Սեբաստացիների բժշկարաններում (17-րդ դար): Դրանցում մեծ չափերի հասնող օտար փոխառությունների կողքին տեղ են գտել նաև զգալի թվով բարբառային բառեր: Գաղտնիք չէ, որ բարբառային բառերի բազմաթիվ գործածությունները սովորական են միջնադարյան

---

\* «Ջահուկյանական ընթերցումներ: Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ»: Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2013, էջ 62-69:

<sup>1</sup> Առաջնորդվել ենք «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», գրքում կատարված շրջանաբաժանմամբ, տե ս նշված աշխ., Ե., 1972, էջ 42-44:

բժշկարանների համար<sup>2</sup>, սակայն դրանք բառարաններում ամրագրվել են իբրև միջին հայերեն բառեր՝ առանց բարբառային նշման: Հարց է ծագում. ինչպե՞ս սահմանագատել բարբառային բառերը միջին հայերենից: Գ. Ջահուկյանը բարբառային երևույթները քննել է միջին հայերենի իրողությունների հետ միասին՝ նկատի ունենալով, որ երկուսն էլ իրենց հնչյունական համակարգերով տարբերվում են գրաբարից և նոր գրական հայերենից<sup>3</sup>:

Մենք նպատակահարմար ենք գտել քննել բժշկարաններում տեղ գտած այն բարբառային բառերը, որոնք, այս կամ այն կերպ շեղվելով միջին հայերենի ընդհանուր օրինաչափություններից, չեն ընդգրկվել ՄՀԲ-ում և ՆՀԲ-ում, արձանագրված են ՀԱԲ-ում և ՀԲԲ-ում՝ բարբառային նշումով, ինչպես նաև ՀԼԲԲ-ում: Այդ բառերի մի մասն էլ արձանագրված չէ բարբառային բառարաններում, սակայն մենք բարբառային ենք դիտել՝ նկատի ունենալով այն հնչյունական տարբերությունները, որոնցով դրանք շեղվում են գրականից: Իհարկե, չի բացառվում, որ այդ բառերի շարքում լինեն նաև սխալագրություններ, բայց դրանք պայմանականորեն ընդգրկել ենք մեր քննության մեջ:

Ասար և Բունիաթ Սեբաստացիների բժշկարաններում տեղ գտած բարբառային բառերը ուսումնասիրելիս առանձնացրել ենք հետևյալ խմբերը.

1. Չայնավորների հնչյունափոխությամբ առաջացած բարբառային ձևեր (միջին գրական հայերենի համեմատ),
2. Բաղաձայնների հնչյունափոխությամբ առաջ եկած բարբառային ձևեր (միջին գրական հայերենի համեմատ),
3. Բարբառային բառեր, որոնց զգալի մասի ծագումը անհայտ է,
4. Փոխառյալ բառեր, որոնք բարբառներում են կիրառվում,

---

<sup>2</sup> Է. Մկրտչյան, *Աշխարհաբարի գրական տարրերը միջնադարի գրական հուշարձաններում*, Ե., 1980, էջ 26:

<sup>3</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, *Բարբառային երևույթներ հայկական հիշատակարաններում*, Ե., 1997, էջ 20:

5. Բարբառային կազմություններ:

1. Այս խմբում ընդգրկել ենք ձայնավորների այնպիսի փոփոխություններ, որոնք բնորոշ չեն միջին գրական հայերենին: Դրանք են.

Ս ~ օ. այս հնչյունափոխությունը միջին հայերենի շրջանում արձանագրվում է միայն գործիականի -ամբ վերջավորության մեջ (անձամբ – անձօմ, ձեռամբ – ձեռօմ), որն էլ կատարվել է մբ շրթնայինի ազդեցությամբ (բ-ն ընկել է հետագայում)<sup>4</sup>:

Ա ~ օ հնչյունափոխությունը արձանագրվում է Հաջընի, Ագուլիսի, Համշենի բարբառներում<sup>5</sup>: Բունիաթ Սեբաստացու բժշկարանում ա ~ օ հնչյունափոխությամբ կիրառվել է թուրքերենից փոխառված բողազ «կոկորդ» բառը, որտեղ առնամանությամբ ա-ն փոխվել է օ-ի՝ պողօզ. «Նշանն այն է, որ պողօզն չոր լինի և համակ ծարավ լինի»<sup>6</sup>:

Ս ~ Է հնչյունափոխությունը, որ բնորոշ է Ղարաբաղի, Մեղրիի, Կարճևանի բարբառներին<sup>7</sup>, դրսևորվել է շաքար բառի շէքէր տարբերակում, ինչպես՝ «Անօթուց շէքէրն ուտելն զքամին հալէ և ուժովցնէ զջղերն»<sup>8</sup>: Այս բարբառային ձևի կիրառությունը սովորական է ինչպես տվյալ, այնպես էլ միջին շրջանի այլ բժշկարանների համար<sup>9</sup>: Ի դեպ, հնարավոր է, որ հենց շէքէր ձևով փոխառված լինի թուրքերենից:

Ուշագրավ է ա~է հնչյունափոխության դրսևորումը ահ «վախ» բառի դեպքում՝ հայցականի գ նախդրից հետո. «Եւ զգան և գէհն չի զգայ»:

---

<sup>4</sup> Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Ե., 1972, էջ 76:

<sup>5</sup> Հ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, Ե., 1982, էջ 109:

<sup>6</sup> Բունիաթ Սեբաստացի, Գիրք բժշկութեան տումարի, Ե., 1987, էջ 84: Այսուհետև օրինակները կնշվեն փակագծերում՝ ԲՍ համառոտագրությամբ:

<sup>7</sup> Հ. Մուրադյան, նշված աշխ., հ. I, Ե., 1982, էջ 107:

<sup>8</sup> Ասար Սեբաստացի, Գիրք բժշկական արհեստի, Ե., 1993, էջ 131: Այսուհետև օրինակները կնշվեն փակագծերում՝ ԱՍ համառոտագրությամբ:

<sup>9</sup> Տե՛ս Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Ե., 2009, էջ 594:

Ը ~ ա հնչյունափոխությամբ է կիրառվել *անգուզ* «ընկույզ» բառը, որ բնորոշ է Նոր Ջուղայի և Մեղրու բարբառներին<sup>10</sup>. «...դեղերն ամենն *անգուզի* եղով օձե» (ԱՍ 228):

Ե ~ ը հնչյունափոխությունը գրաբարի համեմատ միջին հայերենում օրինաչափ է *դ-* ից առաջ, իսկ *մեխ* բառի *մըխ* տարբերակը, որ հանդիպում է Ասար Սեբաստացու մոտ, ակնհայտորեն բարբառային է<sup>11</sup>. «... նավին երկաթե *մխ* չեն զարնե» (ԱՍ 185):

Բունիաթ Սեբաստացու բժշկարանում *խոստուկ* «որովայնի սաստիկ ցավ, խիթ» բժշկական տերմինը գործածվել է *ու ~ ա* տարբերակով՝ *խոստակ*. «...ն *խոստակ* թվի և գիտենա թե յաղիքն մախաթ կու խոթեն» (93)

Բարբառային *քօք* (թուրքերեն) «արմատ» բառը կիրառվել է *օ ~ է* տարբերակով . «...ն *զքեքն* ջրով եփե, որ կեսն մնայ» (ԱՍ 232):

Առանձին դեպքերում բժշկարաններում նկատելի է ձայնավորների երկբարբառայնացում, ինչպես՝ *ա ~ այ*՝ *ճայնփայ* (ԱՍ 91), *ա ~ օյ*՝ *մօյր* (ԱՍ 187): Մեկ այլ դեպքում *ու*-ն դարձել է *ոյ*՝ գողուած - *գողոյած* (ԱՍ 96):

2. Երկրորդ խմբում, ինչպես արդեն նշվեց, ընդգրկել ենք բաղաձայնների ինչպես պատմական, այնպես էլ փոխազդեցական հնչյունափոխություններով առաջ եկած բարբառային ձևերը:

Բժշկարաններում հանդիպում են *հ ~ խ* փոփոխության օրինակներ: Գ. Ջահուկյանի կարծիքով *հ*-ի դիմաց *խ*-ի առկայությունը ուրարտական ազդեցության արդյունք է, որ պահպանվել է հատկապես Վասպուրականում և Պարսկահայքում<sup>12</sup>:

Ասար Սեբաստացու բժշկարանում *հ ~ խ* անցմամբ գործածվել է երկու բառ: Առաջինը *խատիճ* «դդմի կուտ, հատիկ»

<sup>10</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, Ե., 2001, էջ 56:

<sup>11</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Դ, Ե., 2007, էջ 51:

<sup>12</sup> Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 267:

բառն է, որն այդ իմաստով կա Նոր Ջուղայի բարբառում<sup>13</sup>. «...ան դդման *խասիճ* ը (8) դրամ» (218):

Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ում գրանցված է *հնք* բառի բարբառային *հեւուք* տարբերակը<sup>14</sup>, որն էլ վերոհիշյալ բժշկարանում կիրառված ենք գտնում *խևունք* տարբերակով՝ «շունչ, շնչառություն» իմաստով. «Եթե մարդ, որ ուռեց ունի կամ *խևունքն* բռնվի, լօշտակն եփե, զջուրն խմե» (232):

Բժշկարաններում կիրառություն ունի նաև հակառակ *խ ~ հ* անցումը, որ հատուկ է հատկապես Ագուլիսի բարբառին<sup>15</sup>: Այս փոփոխությամբ հանդիպում է երկու բառ: *Խորոզ* (պրակ., թրք) «աքաղաղ» իմաստով բառը Բունիաթ Սեբաստացին կիրառել է նաև *հորոզ* տարբերակով. «..և ի յելնելու ժամն մութատիլ կերակուրք ուտե, սպիտակ ուլու միս, գառին միս, հորթի միս, *հորոզի* միս և որ սոցին նման է» (ԲՄ 109):

Նույն կերպ *խասիաթ* (արաբ) «հատկություն» բառը Ասար Սեբաստացու բժշկարանում կիրառվել է *հասիաթ* ձևով. «Եւ ամենաւրհնեալ այգի, որ զամեն երկնային *հասիաթն* ի քեզ ունիս» (222): «Այս սամղերիս հասիաթն այն է, որ գինով լինի դրջած » (223):

Ուշադրության է արժանի բարբառային *չախ* բառի կիրառությունը սովյալ բժշկարաններում: Թուրքերենից փոխառված այս բառը, որ ունի «ժամանակ, պահ» իմաստը, գործածական է Թիֆլիսի, Ղարաբաղի, Խոյի բարբառներում<sup>16</sup>: Բունիաթ Սեբաստացու բժշկարանում այն կիրառվել է հենց «ժամանակ» իմաստով՝ իս-դ հնչյունափոխությամբ՝ «..զայս այն *չաղն* արա, որ հիւանդն դիժարնա ու ճար չի լինայ՝ յետո մորհամ ստածե» (ԲՄ 82): Իսկ Ասար Սեբաստացու Բժշկարանում վերջինս կիրառվել է «չափ» իմաստով, միջին հայերենին ոչ բնորոշ *ք~խ*

<sup>13</sup> Նույն տեղում, հ. Բ, Ե., 2002, էջ 295:

<sup>14</sup> Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան», Ե., 1944, հ. Գ, էջ 102:

<sup>15</sup> Հ. Մուրադյան, *Հայոց լեզվի պատմական քերականություն*, հ. I, Ե., 1982, էջ 252:

<sup>16</sup> Ջ. Բառնասյան, *Ժամանակակից բառերը հայերենի բարբառներում*, Ե., 2009, էջ 13:



փոփոխությամբ. «Իսկ օգտակար կերակուրք ուտել և *զշահն* ոչ աւելի ոչ պակաս» (ԱՍ 118): Այստեղ մենք արդեն գործ ունենք միջին հայերենում գործածական *չաք* բառի հետ, որ առաջ է եկել *չափք* ձևից<sup>17</sup>:

Խուլ բաղաձայնների մեկ այլ՝ *փ~խ* անցում է տեղի ունեցել միջինհայերենյան *փերճոկ*<sup>18</sup> «փշուր, կեղև» բառում, որը կիրառվել է նաև *խերճոկ* տարբերակով. «...առ ինկի *խերճոկ* Զ (6) դրամ» (ԱՍ 170):

*Ը~լ* ձայնորդների անցում է նկատվում *կլօլ* «կլոր» բառում. «Ապա փերճուքն տիզի ձիթով *կլօլնի* արա և տուր՝ օգտակար է» (ԱՍ 181):

*Ը~ղ* անցմանը պետք է բացատրել *կորիզ* բառի *կղեզ*<sup>19</sup> բարբառային ձևի կիրառությունը Ասար Սեբաստացու բժշկարանում. «Թե հալիլեն որձուկ լինի, *կղեզն* հանես, ... առանց *կղեզ* ծեծե՛՛ ձգե՛ մեջն» (224):

Փոխազդեցական բնույթի հնչյունափոխություններից ամենից ավելի տարածված է *հնչյունի հավելումը*: Բժշկարաններում ամենահաճախականը *ն* ձայնորդի հավելումն է, որ հանդիպում է հատկապես գրաբարի նույն վերջնահնչյուն ունեցող բառերում: Այն ինչպես գիտենք, միջին հայերենում արդեն ընկել էր: Բարբառներում, սակայն, վերջինս պահպանվել է բառակազմական և քերականական ձևերում, ինչպես՝ *որթնատունկ* (ԱՍ 375), *աչքնով* (ԱՍ 184), *կաթնով* (ԱՍ 164), *կաթնի մէջ* (ԱՍ 187), *դրսնէն* (ԱՍ 105), *հալնէ* (ԱՍ 192), *յանձնէն* (ԱՍ 128), *ճանփնին* (ԲՄ 67):

Բառակզբում *հ* -ի հավելումը հատուկ է Արարատյան, Կարնո, Մշո, Ալաշկերտի, Բայազեղի և մի շարք այլ

<sup>17</sup> *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, հ Ա, Ե., 1972, էջ 149:

<sup>18</sup> Վերոհիշյալ բառը բերում է միայն Աճառյանը «*Հայերեն արմատական բառարան*»-ում՝ առանց ծագումը նշելու՝ վկայակոչելով Մ. Շերացուն, ով կիրառել է *փերճոկ*, *փերճոկած*, փերճկոտած, փերճկած ձևերը (հ. Դ, Ե., 1979, էջ 500):

<sup>19</sup> *Կղեզ* ձևը կա Մեղրու և Կարձևանի բարբառներում (Հայոց լեզվի բարբառային բառարան, հ.3, էջ 109):

բարբառներին<sup>20</sup>: Բարբառային այս ձևով են կիրառվել *հանճառելի* «անասելի» (ԱՍ 222) և *հիմանալ* (ԱՍ 104) բառերը:

Միջին հայերենի *ճկիլ* «ծովել, կորանալ» բայը Ասար Սեբաստացու բժշկարանում գործածվել է *բ*-ի հավելմամբ՝ *ճկրիլ* (Զ (6) այն է, որ շատ բարկանայ և *ճրկրի* և հոգս քաշե և ամեն շարժունք, որ անձինն լինի զգիջութինն պակասեցնէ : (էջ90)):

*Կ*-ի հավելմամբ են կիրառվել *արարկերեն* (ԱՍ 126) և *տոփկել* «տրփալ» (ԲՍ 80) բառերը:

Բայական վերջածանցից առաջ *տ* խուլ հպական բաղաձայնի հավելմամբ հանդիպում են *խոշորսցնել* (ԱՍ 94) և *խառնտիլ* (ԲՍ 70) բայերը:

Բժշկարաններում հանդիպում են նաև հնչյունի անկմամբ առաջ եկած բառաձևեր: Դրանք հիմնականում ձայնորդների (*ն, լ, յ*) անկմամբ բառեր են՝ *գորտուկ* (ն), *օգնել* (հ) *ճխել* (լ): Միջին հայերենի բառարանում արձանագրված *գորտնուկ*-ը գործածվել է *ն*-ի անկմամբ (ԱՍ 333): Բառասկզբի *հ*-ի անկումով, որ միջին հայերենում արձանագրված է *հալատալ, հայնց, հնձան* բառերում<sup>21</sup>, Ասար Սեբաստացու բժշկարանում կիրառվել է *հոզնել* բայը. «Եւ մարդ, որ հիւանդ լինի կամ շատ աշխատած կամ *օգնած* լինի քուն լինալով թաժանայ (103): «Եւ յորժամ, որ մարդ *օգնած* լինի և շատ աշխատած լինի, տաքութիւնն ի մարդոյ փորոքն յավելնայ» (104):

*Ճխել* «տրորել» բայը *լ*-ի անկմամբ է հանդիպում. «...առ զպալտուրն և *ճխէ*» (ԱՍ 142):

Ուսումնասիրվող աշխատանքներում միջին հայերենին բնորոշ դրափոխություններից բացի (*վլանալ, դարտակվել*), գործածվել են բարբառային նման երևույթներ: Այսպես *մրսել* բայը հանդիպում է *մսրել* ձևով. «Որ օգտէ մարմնոյն թուլութեան և ...որ գիշերն *մսրէ* կամ շատ ջրվէթ լինի» (ԱՍ 228): Պարսկերենից փոխառյալ *փիրուզ* բառը կիրառվել է *փրիւզ* տարբերակով.

<sup>20</sup> Ն. Մուրադյան, *Հայոց լեզվի պատմական քերականություն*, հ. I, Ե., 1982, էջ 315:

<sup>21</sup> Տե՛ս *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, հ Ա, էջ 148:

«Շեխ Ջաֆարն ասէ, թէ ով *փրհիզէ* վերցնէ ի մատն չքաւորութիւն չըտեսնու օգնութեամբն Աստուծոյ» (ԱՍ 188):

Ուշագրաւ է *ինչքան* բառի *ինչանկ* ձևի կիրառությունը: Ստ. Մալխասյանցի բառարանում *ինչանկ*-ը բերվում է «մինչև» իմաստով<sup>22</sup>, մինչդեռ այստեղ այն գործածվել է «ինչքան, ինչչափ» նշանակությամբ<sup>23</sup>. «Եւ շատք ի բժշկապետացն ասացեր են, թէ աւագ թրիաքն *ինչանկ* գործունեութիւն ունի և սօրութիւն» (ԱՍ 128):

Բունիաթ Սեբաստացու բժշկարանում «մինչև» իմաստով հանդիպում է *հինչուկ* բառը, որ բնորոշ է Պոլսի, Կարինի, Արաբկիրի բարբառներին<sup>24</sup>. «Եւ դուլինճ մի այլ կա, որ ի բարակ աղիքն լինի, *հինչուկ* ի տափողն կու իջնու» (94):

Հնչունի ամփոփում է տեղի ունեղել *ճնխարլիթ* բառում: Այս բուսանունը հայտնի է *ճնճղպաշար*, *ճնճղկարլիթ* տարբերակներով<sup>25</sup>:

3. Երրորդ խմբում առանձնացրել ենք բժշկարաններում կիրառված զուտ բարբառային բառերը, որոնց ծագումը դժվար է պարզել: Դրանք են.

*Անդ*, *անդեր* «մանր հող, ոսկորները իրար միացնող՝ խաղ»: Վերջույթների դողի մասին խոսելիս Բունիաթ Սեբաստացին դրա պատճառներից մեկն էլ համարում է «անդերուն թուլնալը» (71): Աճառյանի վկայմամբ այս բառը «անկ» ձևով պահել են Ադանայի թրքախոս հայերը<sup>26</sup>:

*Բառք* «ախորժակ». «Եւ կերակուր չառնու *բառքն*» (ԲՍ 100):

*Զեռ* «շատ մեծ, անճոռնի» (ԲՍ 160):

*Էքս* (եզուց ձևից) «հաջորդ օրը». «*Յէքսն* կանուխ նշթայ կեր» (ԱՍ 226):

---

<sup>22</sup> Տե՛ս Ստ. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան*, հ. Բ, Ե., 1944, էջ 158:

<sup>23</sup> Այս բառը *ինչակ* ձևով կա Պոլսի (Պարտիզակ) բարբառում: Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Բ, Ե., 2002, էջ 174:

<sup>24</sup> *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. Բ, Ե., 2002, էջ 175:

<sup>25</sup> Տե՛ս նույն տեղում, հ. Գ, էջ 405:

<sup>26</sup> Տե՛ս Հր. Աճառյան, *Հայերէն արմատական բառարան*, հ Ա, Ե., 1971, էջ 199:

*Խոշապ* «չիր ու չամիչով կերակուր, կումպոտ» (ԱՍ 349):

*Խարխազին* «ոչխարի դմակը մանր կտրտած և տապակած».  
«...և եփե այն չաք, որ տակերն զերդ *խարխազին* դառնայ» (ԱՍ 140):

*Ծանթորան* «ծոթրին» (ԱՍ 179) ասորերենից փոխառված  
*ծոթոր*, *ծոթրին* բառի բարբառային ձևն է, որ բնորոշ է Նոր  
Ջուղայի բարբառին<sup>27</sup>:

*Կակալ* «ընկույզ կանաչ կեղևով». «...*զկակալն* երեն զմոխիրն  
դմակ եղով ի տեղն քսեն» (ԲՄ 117):

*Շլոր* «սալոր» (ԱՍ 374):

*Չլավ* «փլավի տեսակ՝ բրնձով կամ ձավարով, կաղամբով և  
տավարի մսով» (ԱՍ 219):

*Պլօճիկ* «երիկամ». «.....օգտե *պլօճիկի* ցավուն» (ԱՍ 223):

4. Այս խմբում ընդգրկել ենք այն փոխառյալ բառերը, որոնք  
բարբառների սահմաններից դուրս չեն եկել և իբրև այդպիսին էլ  
գրանցված են բառարաններում: Մեր կողմից ուշադրության  
արժանացած 25 փոխառություններից 15-ը թուրքերեն բառեր են,  
7-ը՝ պարսկերեն, 5-ը՝ արաբերեն: Թուրքերեն բառերի  
գերակշռությունը բնական պետք է համարել՝ նկատի ունենալով  
դրանց միայն բարբառներում կիրառվելու հանգամանքը<sup>28</sup>: Դրանք  
հիմնականում առօրյա խոսքում գործածական բառեր են և  
բուսանուններ. *արլաղ* «այտուցված դեմք» (ԱՍ 223), *աղու* «թույն»  
(ԲՄ 118), *արտուճի էմիշ* «ցրդենի» (ԱՍ 206), *զենա գերչակ* «տզենի,  
տիզկանեփատ» (ԱՍ 333), *դալի* «թեթևամիտ, խելառ» (ԱՍ 334),  
*լապատա* «ավելուկ» (ԲՄ 114), *լախանայ* «ծաղկակաղամբ» (ԱՍ  
345), *դագան* «կաթսա» (ԱՍ 216), *դափաղ* «կափարիչ» (ԱՍ 147),  
*դօզալախի* «դեռ չհասած միրգ» (ԲՄ 21), *սուլուկ* «տզրկախոտ» (ԲՄ  
107), *սիկիլ* «գորտնուկ» (ԲՄ 115), *պօյ* «հացհամեմ» (ԱՍ 379):  
Պարսկերեն բառերից առավել հաճախ են կիրառվել *աթաշակ*  
«վատ հիվանդություն, սիֆիլիս» (ԱՍ 223), *դանա* «հատիկ» (ԱՍ  
221), *թօխմ* «հունդ, սերմ» (ԱՍ 226), *զերպա* «ճաշատեսակ» (ԲՄ 64),  
*խուրուզփաչայ* «աքլորի ձագ» (ԱՍ 219), *ճոմարդ* «առատաձեռն»

<sup>27</sup> Հր. Աճառեան, *Քննություն Նոր- Ջուղայի բարբառի*, Ե., 1940, էջ 25:

<sup>28</sup> Տե՛ս Հր. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, հ. 2, Ե., 1951, էջ 275:

(ԱՍ 166), *մայրամ մար* «օձի գլխում եղած գորշ նյութ» (ԱՍ 188): Արաբերենից գործածվել են *կառայ* «վայրի փեզենայ» (ԱՍ 352), *հազար* «հանդարտ» (ԲՄ 70), *հէյպէթ* «ահ, վախ» (ԱՍ 188), *ճիպար* «ամրացնող սպեղանի» (ԱՍ 361), *սուստ* «թույլ» (ԲՄ 73) բառերը:

5. Վերջին հինգերորդ խմբում ընդգրկվել ենք բարբառային կազմությունները (15բառ): Դրանցից 5-ը բայեր են: Փոխառյալ արմատից են կազմվել *թամամվել* «լրանալ» (ԱՍ 226), *թաժանալ* «թարմանալ» (ԱՍ 104), *պաթլիլ* «կորցնել, զրկվել» (ԲՄ 70), իսկ բնիկ արմատներից՝ *լանցուցել* «լայնացնել» (ԱՍ 95), *խստել* «սաստիկ ցավել» (ԱՍ 207), *ծկտալ* «կոկորդր այրվել» (ԲՄ 97):

Ածանցավոր բարբառային կազմություններից ուշագրավ են *-ոն* վերջածանցով կազմված *բրթոն* «բրդած հաց» (ԲՄ 117), *հոզոն* «հոզս». «Եւ պատրաստ ի բարկանալոյ և ի *հոզոնաց*» (ԱՍ 110):

*Մեծունաք* «մեծերը, նախնիք» «...բժիշկն ի վերայ թագավորացն որ վրա *մեծունաց* տան համարձակ մտանէ և ելանէ» (ԱՍ 115):

Պարսկերեն *ճոմարդ* «առատաձեռն» բառից է կազմվել *ճոմարդութիւնը*. «Գինին, որ չափավոր խմեն, կտրիճութիւն և *ճոմարտութիւն* բերէ» (ԱՍ 134):

Իսկական բարդություններից բժշկարաններում գործածվել են հետևյալ բարբառային բառերը. *ընկզմէջ* «ընկույզի միջուկ» (ԲՄ 95), *լեզուատակ* «լեզվի տակի մասը» (ԱՍ 152), *ծիծաղերես* «ժպտադեմ» (ԱՍ 116), *մկնծիրտ* «մկան աղբ» (ԲՄ 93), *մոլոքոր* «մաշկային հիվանդություն, եղճատենդ», *կոաբանջար* «խատուտիկ» (ԱՍ 353), *կրակմուտ* «կրակը մտնող». «...ապա առ *կրակմուտ* բղուղ մի այլ» (ԱՍ 143):

Այսպիսով՝ 17-րդ դարի բժշկարաններում կիրառվել են զգալի թվով բարբառային բառեր և բարբառային ձևեր (այդ թվում նաև հնարավոր սխալագրություններ), որոնց քննությունը կարող է օգտակար լինել միջին հայերենի ու բարբառների ուսումնասիրության համար:

## Համառոտագրություններ

ՀԱԲ – Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան

ՀԲԲ – ՍՏ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան

ՀԼԲԲ – Հայոց լեզվի բարբառային բառարան

ՄՀԲ – Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան

ՆՀԲ – Նոր բառգիրք հայկազեան լեզուի

Тадевосян Асмик- Диалектные слова и диалектные формы в лечебниках 17-ого века (Асара Себастици и Буниата Себастици).- В статье рассматриваются диалектные слова и формы, которые были использованы в лечебниках Асара Себастици и Буниата Себастици (17-ый век) и не нашли место в словаре средне армянского языка. Эти слова представлены пятью группами: 1) диалектные формы с фонетически измененными гласными, 2) диалектные формы с фонетически измененными согласными, 3) чисто диалектные слова, 4) диалектные заимствованные слова, 5) диалектные словообразования.

Hasmik Tadevosyan- Dialectal Words an Dialectal Forms in the Medical Books of the 17-th Century (Asar Sebastatsy and Buniat Sebastatsy).- This article touches upon dialectal words and forms, which were used in the medical books of Asar Sebastatsy and Buniat Sebastatsy and which weren't included in the dictionary of Middle Armenian. These words are represented in five groups: 1) dialectal forms with phonetic changes of vowels, 2) dialectal forms with phonetic changes of consonants, 3) pure dialectal words, 4) dialectal borrowings, 5) dialect word<sup>1</sup>

ՁԵՌԱԳՐԵՐԻ՝ 5-11-ՐԴ ԴԱՐԵՐԻ  
ՀԻՇՍՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ\*

Խաչատրյան Վալենտին  
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Ա. Մաթևոսյանի ջանքերով ձեռագրերի՝ 5-12-րդ դարերի հիշատակարանները առանձնացվել և ներկայացվել են մեկ գրքով՝ որի հիման վրա էլ կատարվել է սույն ուսումնասիրությունը: Հաշվի առնելով թե՛ նյութի ծավալը և թե՛ այն, որ 12-րդ դարը պատկանում է միջինհայերենյան լեզվափուլին, այս հոդվածում ներկայացվում է միայն ձեռագրերի՝ 5-11-րդ դարերի հիշատակարանների՝ որոշակի կարևորություն ունեցող բառերի քննությունը:

Գրավոր տարբեր աղբյուրների բառապաշարն ուսումնասիրելիս, բնականաբար, ուսումնասիրողի տեսադաշտում են հատկապես անսովոր բառերն ու բառաձևերը, բառարաններում տեղ չգտած միավորները, փոխառությունները, լայնորեն գործածված, հատուկ դեր ու նշանակություն ունեցող բառերը և այլն: Ահավասիկ, ուսումնասիրությունը կատարվել է այդ ուղղություններով:

Կարևոր է նշել, որ ուսումնասիրված հիշատակարանները կա՛մ ինքնագիր հեղինակների և թարգմանիչների հիշատակագրություններ են տվյալ երկի գրության կամ թարգմանության դրդապատճառների և ամենատարբեր հանգամանքների վերաբերյալ, կա՛մ էլ՝ ձեռագիր ստացողների, ընդօրինակողների, նորոգողների և առհասարակ տվյալ ձեռագրին

---

\* Երիտասարդ լեզվաբանների հանրապետական գիտաժողովի զեկուցումներ, Ե., 2013, էջ 39-48:

<sup>1</sup> *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ.*, աշխատասիրությամբ Ա. Ս. Մաթևոսյանի, Ե., 1988:

առնչված մարդկանց՝ ձեռագրերի լուսանցքներում և տարբեր ազատ հատվածներում թողած հիշատակություններ:

Տարբեր հեղինակների երկերի բառապաշարին անդրադարձողները, անկասկած, նաև դիտարկել են սույն հոդվածում ներկայացվող որոշ օրինակներ: Նյութի ամբողջականությունը պահպանելու նպատակով է, որ ըստ ամենայնի անդրադառնում ենք հայերեն ձեռագրերի սկզբնամասում կամ վերջնահատվածում թե՛ հեղինակների հիշատակագրությունների և թե՛ բուն գրչական հիշատակարանների՝ որոշակի կարևորություն ներկայացնող բառերին:

Պետք է հավելել նաև, որ հեղինակային և գրչական հիշատակարաններն ունեն բառապաշարային ընդհանրություններ, քանի որ հեղինակայինից է սկիզբ առնում հիշատակագրության ավանդույթը, այդպիսով և՛ բովանդակային կողմերով, լեզվական բանաձևերի պահպանմամբ պայմանավորված՝ որոշ բառերի նույնությունը:

Ա. Մաթևոսյանը վերոնշյալ աշխատության առաջաբանում գրում է, որ 5-րդ դարի ընդօրինակողները հիշատակարան գրելու սովորություն չեն ունեցել՝ բերելով այն փաստը, որ 1069 թ. Հովհաննես գրիչը, Նարեկա վանքում ընդօրինակելով մի Ավետարան, վերջինիս գաղափար օրինակի մասին գրում է. «Որ էր վկայեալ արինակն յամենայն գիտնականաց Հայոց, զոր ասելին աւանդութենէ գրեալ ձեռամբ Սրբոյն Մաստրովբայ վարդապետի և թարգմանչի»: Ապա շարունակում է. «Աւանդութենէ» բառը ցույց է տալիս, որ ձեռագիրը Մեսրոպ Մաշտոցի ձեռքով գրված լինելը ավանդությամբ է հաստատվել և ոչ թե ձեռագրում գրված հիշատակարանի վկայությամբ: Այս նշանակում է նաև, որ նույնիսկ Մաշտոցը ձեռագրում իր անունը չի գրել, այսինքն՝ հիշատակարան չի գրել<sup>2</sup>: Նախ այստեղ պետք է մեկ ուղղում անել. նշյալ հիշատակարանը գրել է Անանիա Վարազգսին՝ իր պատվերով Հովհաննեսի կողմից գրչագրված Ավետարանն արդեն իսկ ստացած լինելով. «...ըստ իմում կարի քրիստոսասէր գոլով

---

<sup>2</sup>Նշվ. աշխ., էջ Թ-Ժ:



ետու գրել զսուրբ Աւետարանս Յովհաննէսի գրչի, և ստացայ զսա իմոց արդար և իրաւացի արդեանց» (107), ապա՝ Ա. Մաթևոսյանը ինչու՞ է Վարազագու հիշատակարանում Մուրբ Մաստրովբի (Մեսրոպ Մաշտոց) անունն ընդգրկող հատվածը ներկայացրել որպէս 5-րդ դարի հիշատակարան (1): Եթէ նույնիսկ նշյալ հիշատակագրողը առանձին գրի է առել նախագաղափար ձեռագրի՝ Ա. Մաթևոսյանի նշած հատվածը՝ նույնը ներառելով նաև իր տեքստում, այն 5-րդ դարի հիշատակարան համարելու առիթ չպետք է հանդիսանար:

Նույնի կապակցությամբ Հ. Բախչինյանը գրում է. «Հավանաբար V դ. գրված և ընդօրինակված մեսրոպատառ ձեռագրերն արդէն ունեցել են հիշատակարաններ»<sup>3</sup>: Այս փաստում է. «Մեզ հասած հնագույն ձեռագրական հիշատակարանները գալիս են VI, VII դդ.: Դրանք նախագաղափար հիշատակարաններ են՝ պահպանված հետագա ընդօրինակությունների մեջ»<sup>4</sup>: Իսկապէս, Ա. Մաթևոսյանը հիշյալ ժողովածուում ընդգրկել է այդպիսի մի շարք հիշատակարաններ: Պետք է հիշել, որ մեզ հասած ամենահին ձեռագիրը 7-րդ դարին պատկանող, սակայն ոչ ամբողջական մի Ավետարան է, որը հայտնի է որպէս Վեհամոր Ավետարան, քանի որ Վազգէն Առաջին կաթողիկոսի մայրիկի սեփականությունն է եղել և ի վերջո նվիրաբերվել է Մատենադարանին: Հաջորդը 887 թ. Սահակ Վանանդեցու ընդօրինակած Ավետարանն է, որն էլ իր հերթին հայտնի է որպէս Լազարյան ձեմարանի Ավետարան: Սա նշանակում է, որ ամենահին գրչական սկզբնագիր հիշատակարանները պատկանում են հիշյալ ձեռագրերին:

5-11-րդ դարերի հիշատակարանների բառապաշարն ընդհանուր գծերով ներկայացնում է գրաբարյան երկերի բառապաշարի պատկերը: Ինչպէս այլ աղբյուրներում, այնպէս էլ հիշատակարաններում գործածվել են նաև ոչ օրինաչափ բառեր ու

---

<sup>3</sup> Հ. Բախչինյան, *Ձեռագրական հիշատակարանների զարգացման ընթացքը*, Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 1973, 6 (366), էջ 83:

<sup>4</sup> Նվ. աշխ., էջ 84:

բառաձևեր, որոնք, ամենայն հավանականությամբ, ունեն խոսակցական-բարբառային կնիք: Այսպիսով, գրական-գրքային բառաշերտին միախառնված են զգալի թվով խոսակցական-բարբառային բառեր:

Կարևոր նշանակություն ունի այն փաստը, որ հիշատակագրողները հիմնականում նշում են հիշատակարանների գրության ժամանակը, մասամբ նաև իրենց բնակության վայրը, այսպիսով լեզվաբանությամբ զբաղվողներին հնարավորություն տալով որոշելու թե՛ տվյալ լեզվական երևույթի առաջացման կամ առկայության ժամանակը և թե՛ այս կամ այն միավորի տարածման վայրերը: Իհարկե, այս հանգամանքը պետք է ընդունել որոշ վերապահություններով, քանի որ մի շարք գրիչներ նույնությամբ վերցրել են տվյալ ձեռագրի նախորդ հիշատակագրողների տեքստերը՝ փոխելով միայն անունները, ապա նաև՝ ազդվել ընդօրինակվող գործի լեզվական նյութից և այլն: Նշանակում է, որ նախքան տվյալ երևույթը այս կամ այն տարածքին վերագրելը պետք է պարզել ազդեցությունների բնույթը:

Հիշատակարաններում հնչյունական և բառակազմական տարբերակներով դրսևորված բառերը կա՛մ ներկայացնում են գրական-գրքային և խոսակցական-բարբառային շերտերը, կա՛մ էլ առանձին դեպքերում պայմանավորված են գրիչների չիմացությամբ, ապա և հետագա աղավաղումներով: Այն սակավ դեպքերում երբ հայտնի է հեղինակի կամ գրիչի ծննդավայրը, երբեմն՝ գրչության վայրը, բարբառային դիտվող հնչյունական ձևավորմամբ և բառակազմությամբ միավորների կողքին նշում ենք այն, քանի որ կարող է հետաքրքրություն առաջացնել բարբառագետների շրջանում:

Նկատվում է, որ ուսումնասիրված բառապաշարում առկա այդպիսի միավորներից շատերի միայն կանոնավոր տարբերակներն են տեղ գտել գրաբարի հայտնի բառարաններում<sup>5</sup>:

---

<sup>5</sup> Նկատի ունենք «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»-ն (այսուհետև՝ ՆՀԲ), Գրիգոր Ճեղալեանի կողմից 1865 թ. Վենետիկում 5000 բառերի համալրումով

Շատ հաճախ այդպիսիք տրվում են կանոնավոր և այլ անկանոն տարբերակների հարևանությամբ, ուստի այդ հանգամանքը նույնպես հաշվի ենք առել: Օրինակ՝ *յոքնապայծառ* (36) բառը գտնում ենք ԱԲ-ում՝ *յոզնապայծառ* ճիշտ հնչյունակազմով, ՆՀԲ-ում՝ *ընդհանուր* գլխաբառի կողքին նաև նշված է հիշատակարաններից մեկում առկա *ընթանուր* (Որդրու քաղաք, 88) ոչ օրինաչափ հնչյունական տարբերակը՝ կոնկրետ վկայություններով:

Ըստ գրաբարի՝ հնչյունական շեղումներով կամ բարբառային հնչյունակազմով են նաև հետևյալները՝ *մարտիրոս* (Կոստանդնուպոլիս, 73), «նահատակեալ առնոյ *զմարտիրոսական* պսակն յաւուրս Հազկերտի Պարսից արքայից արքայէ» (Մեսրոպ Վայոցձորեցի, 59). թեև ՆՀԲ-ում *մարտիրոս* գլխաբառի կողքին նշված է նաև *մարտիրոս*, սակայն վկայություններում առկա չէ վերջինը, հիշատակված բառարաններից բացակայում է նաև *մարտիրոսական* տարբերակը: *Ամենեքին // ամենեքեան* տարբերակներով հայտնի որոշյալ դերանվան հայցական հոլովը *ամենեսին // ամենեսեան* ճիշտ ձևերի փոխարեն դրսևորվել է հետևյալ տարբերակներով՝ «զգեցուցանէ *զամենիսեան* լուսաւոր պատմուճանաւք» (Տալաշա վանք, 82), «Արդ աղաչեմ *զամենեսեն*» (67), «աղաչեմ *զամենիսեն* յիշեսջիք զիս զբազմամեղս և զանարժանս» (Բասենոյ գաւառ, 77). վերջին երկու տարբերակները վկայված չեն ՆՀԲ-ում և մյուս բառարաններում: Նշված բառարաններում տեղ չեն գտել նաև հետևյալները. «եղև *արդինատու*» (*արդինատու*, Արծին աւան, 95). «փառք Յիսուսի Քրիստոսի *զհլզակցի* Հաւր և փառակցի սուրբ Հոգոյն» (Հաղբատ, 75), «և զաւակաց իմոց, և *զհլզակցի* իմոյ» (45), «...այնքանիցն հնարիցն բաւական լինէին որպէս հուր զկապար, և որպէս արև *զեղեմն*» (67). ՆՀԲ-ում *եղեմն* գլխաբառի տակ տրված բազում վկայություններից հետո գրված է. «Ռամկական է գրելն. Ձիւն և *եղեմն*...զ Վրդն. ծն»:

---

վերահրատարակված «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի»-ն (այսուհետև՝ ԱԲ) և Ռուբէն Ղազարեանի «Գրաբարի բառարան»-ը (այսուհետև՝ ԳԲ):

Հետևյալ օրինակներում տեղի է ունեցել *ա* ձայնավորի անկում՝ «*գառաջասցեալ* պատանին» (Արծկէի Երաշխատր վանք, 30), «Եւ ես անարժանս... Յովսէփ, ծնեալ և սնեալ և ծերացեալ *յաստուծապահ* քաղաքիս Կոստանդնուպալիս» (Կոստանդնուպոլիս, 73). ընդ որում՝ վերջինս պարունակող հիշատակարանում շատ են հնչյունական շեղումներով բառերը. *աղալթար* (3 անգամ գործածվել է նույն Աւետարանի հիշատակարաններում). «...որ ենք նարա հոգեբարձ և *աղալթար*», «...և են մեզ *աղալթար* ի բարեխաւսութիւն իմ հոգոյս» (130), «մեր մեղացն *պարտկան*» (Մուրբ Յովան, 129) ևն. նշված գրաբարյան բառարաններում արձանագրված են կանոնավոր տարբերակները, ընդ որում՝ առաջինը՝ *յառաջասացեալ* ձևով: Արժանի է նշելու, որ վերջին երեք օրինակները 10-11-րդ դարերի հիշատակարաններում են: Ասել է թե՛ արտացոլում են միջինհայերենյան փոփոխությունների միտումները:

Գրաբարյան շրջանում բազում բառեր առկայացել են և՛ հոդակապով, և՛ անհոդակապ տարբերակներով: Անշուշտ, անհոդակապ բաղադրությունները պատկանում են խոսակցական-բարբառային բառաշերտին: Վերջիններս զգալի կիրառություն ունեն նաև ուսումնասիրված հիշատակարաններում: Առանձին դեպքերում հանդիպում են միևնույն բառի երկու դրսևորումն էլ: Օրինակներ՝ *ձեռնագիր* (129) // *ձեռնգիր* (բառարաններում վկայված չէ, Մուրբ Յովան, 130), *աստուածսիրութիւն* (128), *վերբերական* «որ ի վեր կոյս բերի». (Անի քաղաք, 91) ևն: Հետաքրքրական է, որ նախորդ օրինակների հետ աղերսներ ունեցող անհոդակապ բաղադրությունները նույնպես հիմնականում 10-11-րդ դարերում են վկայվել:

Կան բաղադրություններ, որոնցում շեշտափոխությամբ պայմանավորված սպասվող հնչյունափոխությունը տեղի չի ունեցել, այսպես. «...որք *դայեակարար* յանձանձեցին մեզ յետոյ հետսելոցս» (Թովմա Արծրունի, 47). ՆՀԲ-ում վկայված է *դայեակարար* կանոնավոր տարբերակը, «Վասն որոյ արթուն մտաւք և անզբաղ խորհրդով և *կատարեալիմաստ* հոգով զաղաւթսն

հատուցուք Աստուծոյ» (Խոսքով Անձևացի, 56). ՆՀԲ-ում չկա, իսկ ԱԲ-ում՝ *կատարելիմաստ* կանոնավոր ձևով, «սուտապատիր երգոցն» (67), «մարտամբոխ պատերազմաց, *սուրակոխ* բազմահեղ արեանց կոտորածոյ» (Ագաթանգեղոս, 3). ՆՀԲ-ում *ստապատիր* և *սրակոխ* գլխաբառերի կողքին նաև նշված են անհնչյունավոխ հիմքերով տարբերակները, սակայն երկրորդից վկայություն չի բերվել:

Ինչքան որ անսովոր է վերջիններում հնչյունավոխության բացակայությունը, նույնքան անսովոր է բառակազմության ժամանակ հետևյալ օրինակում կատարված հնչյունավոխությունը. «...յարբունս գիտութեանն տանել հասուցանել *գուսըմնասէրն...*» (Թովմա Արծրունի, 47). ՆՀԲ-ում թե՛ հնչյունավոխված և թե՛ անհնչյունավոխ տարբերակի բազում վկայություններ կան:

*Հոգի* առաջնաբաղադրիչով կազմություններում *ի* վերջնահնչյունը կա՛մ *ա* հոդակապից առաջ պահպանվել է, կա՛մ ձևավորել է միաձույլ *ե /է/* հոդակապը: Այսպես. *հոգիախաւս* «հոգով սրբով խօսեցեալ». «գիրաքանչիւրսն ասացեալ ճառս *հոգիախաւս* վարդապետութիւնս» (Մաքենոցաց ուխտ, 31). բառն արձանագրված է բառարաններում, իսկ *հոգէխաւս* տարբերակի վկայություն չկա, «նորոգել զբազմազան բիրաւոր ծաղկաւք զարդարեալ *զհոգիանորոգ* և զաստուածատուր շնորիս» (67). բառարաններում առկա է միայն *հոգէնորոգ*, «յերեսաց նորին *հոգիաբուղիսն* վարդապետի» (Գ. Նարեկացի, 64), «...որք հանդիպիք այսմ *հոգիաբուղիս* պատգամիս, յիշել զիմ աղկադութիւնս ի Տէր սրտի մտաւք» (Գ. Վկայաւեր, 109), իսկ մյուս կողմից էլ՝ *հոգէբուղիս* տառս (71), *հոգէզարդ* (65), *հոգէշնորի* (109) են: Անշուշտ, առաջինները պատկանում են բառապաշարի խոսակցական-բարբառային շերտին:

Հետևյալ օրինակներում առկա է հնչյունների կրճատում, ամփոփում՝ *արտալած* «արտահալած». «...զանկարգ ճամարտակէլն *արտալած* արարեալ» (Յ. Դրասխանակերտցի, 52). ըստ բառարանային տվյալների՝ կան նաև նշյալ հիմքով տարբեր

բաղադրությունների մի շարք վկայություններ՝ *արտալածեն, արտալածութիւն* են, *թարգմագրիչ*. «Եւ ես անարժանս և տգէտս և մեղաւոր *թարգմագրիչս* Յովսէփ...» (73). ՆՀԲ-ում արձանագրված չէ, իսկ ԱԲ-ում առկա է *թարգմանչագիր* «թարգմանիչներէն գրուած», *տղատիպ* «...և *գտղատիպ* հասակի ստընդէայս Կոստանդ սարկաւագ մի մոռանայք աղաչեմք» (128). Բառարաններում և ոչ մի տարբերակով առկա չէ, ԱԲ-ում կա *տղայատեսակ, տղական* «...գորոյ զագնուականութիւն... նորա ի *տղական* հասակին մինչև յաւրս» (41). Բառարաններում կա *տղայական, քահակից* «քահանայակից» «...ի ձեռն *քահակցի* իւր միաձնին, փառակցի նորոգաւդին յաւիտենից յաւիտեանս» (133). Բառարաններում կա *քահանայակից, քահագծագիր* արձանագրված չէ Բառարաններում, ամենայն հավանականությամբ նույնպէս *քահանայ* բառահիմքի հատմամբ կազմություն է և նշանակում է «զծագրող, գրիչ քահանա». «Ողորմեա՛ եղկելի հոգւոյ իմում Ստեփանոսի, անարժան քահանայի և փանաքի արուեստաւորի և յետի *քահագծագրի*» (98):

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հետևյալ օրինակը. «Արդ յորժամ բաժակն պատուհասի *ընդգալաւ* աշխարհս Հայոց» (Արծկէի Երաշխաւոր վանք, 30), որում արտացոլված է *ընկալուլ* բայի *ընդ* նախորդով բաղադրված լինելը, որի *դ*-ն հետագայում ընկել է: Գրաբարի բառարաններում նման օրինակ չկա, իսկ Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում (այսուհետ՝ ԱՀԲԲ), ապա և Լեզվի ինստիտուտի «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ում (այսուհետ՝ ԺՀԲԲ) տրված է *ընդկալ* բառը՝ «1. Որևէ բանի տակ դրվող առարկա, տակդիր, տակնոց, 2. (մսնգ.) հենարան»:

ՆՀԲ-ն կազմողները, ինչպէս և նկատվում է, բառեր են վկայել նաև հիշատակարաններից, սակայն զգալի թվով օրինակներ չեն արձանագրվել նրանում, ապա նաև՝ Առձեռն բառարանում:

5-11-րդ դարերի հիշատակարաններում կիրառված, բայց և ՆՀԲ-ում չվկայված տասնյակ բառեր հետագայում նկատվել և արձանագրվել են Առձեռն բառարանի՝ Գրիգոր Ճելալյանի կողմից

շուրջ 5000 բառերի համալրումով վերահրատարակության մեջ: Այդպիսիք են՝ *հանապազահիւանդ* (29), *հայրաշարժ* «յԱստուծոյ Հօրէշարժած՝ առաջ եկած՝ ծննդեամբ կամ բղխամբ». «...զի ի *հայրաշարժ* յաղբերէն ընկալեալ զհոսանս հոգւոյն...» (92), *միջակամար* «երկնքի մեջտեղը» (91), *բարբերդուն* (119), *բազմածիր* «մեծ շրջան ընտղ» (73), *շնորհակիր* (65) են:

Առանձին դեպքերում նշյալ երկու բառարաններում տեղ չգտած որոշ միավորներ հետագայում ներառվել են ԳԲ-ում, ՀԱԲ-ում<sup>6</sup> և արդի հայերենի հայտնի բառարաններում: Օրինակ, գրաբարյան բառարաններից որևէ մեկում տեղ չգտած հետևյալ բառերը, անցնելով ժամանակակից հայերենին, արձանագրվել են ԱՀԲԲ-ում, առանձին դեպքերում նաև՝ ՀԱԲ-ում, ՀԲԲ-ում<sup>7</sup> և ԺՀԲԲ-ում՝ *հառաչագին* «...առ ամենեսեան հառաչագին հայցմամբ պաղատանաւք առաջի արկանելով զգութ սիրոյն Քրիստոսի» (71), *ողորմագութ* (71), *սրբասուն* «բարեպաշտ, առաքինի, սուրբ, սրբազան» (67). ՆՀԲ-ում, ԱԲ-ում և ԳԲ-ում առկա են *սրբասնեալ* և *սրբասնունդ* բառակազմական տարբերակները, *ճշմարտագէտ* (118), *բոլորգիր* (43), *շահնշահ* (60), *թևածութիւն* (91):

Հիշատակարաններից մեկում առկա *հեզգապաշաւ*-ը պետք է ուղղել *հեղգապաշաւ*, որը թեև ՆՀԲ-ում և ԱԲ-ում չկա, սակայն տեղ է գտել ԳԲ-ում և բացատրված է «ծույլ ու խղճուկ»՝ նույն հեղինակի նշումով, այսինքն՝ կոնկրետ այս օրինակն է՝ Հ.Դրասխանակերտցու կողմից պատմության հիշատակարանում վկայված. «Բայց անարժանս ես և *հեղգապաշաւս* Յովհաննէս՝ նուաստ կաթողիկոս Հայոց...» (54):

*Աղքատատար* բառը պետք է ուղղել *աղքատատուր* . «...յաղագս որոյ աղաչեմ ըստ *աղքատատուր* տրոյ տառապելապետ այրոյն այնորիկ...» (101). Թեև ՆՀԲ-ում առանձին գլխաբառով տրված չէ *աղքատատուր*, սակայն հիշյալ նախադասության *տառապելապետ* գլխաբառի տակ տրված է

<sup>6</sup> Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, Ե., 1971-1979 (այսուհետև՝ ՀԱԲ):

<sup>7</sup> Ս. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, Ե., 1944-1945 (այսուհետև՝ ՀԲԲ):

հենց այս նախադասությունը, որում և՛ *աղքատատուր*՝ ըստ ԱԲ-ի «աղքատ է տուած»:

Վերը հիշատակված բառարաններից և ոչ մեկում չընդգրկված *նախածանցավոր* բառեր են՝ *գերախոհ*. «Իմանալով լուսով արտափայլեալ աստուածընկալ սրբոցն միտք գերախոհ մակերևութեամբ...» (71), *ներավարժ* «...յարակիրթ ներգործութեամբ, *ներավարժ* կարկառմամբ յապագայսն անսայթաք հայելով ի նպատակ վերին կոչարանին...»(91). ՆՀԲ-ում առկա է անհոդակապ տարբերակից կազմված հետևյալ բառը՝ *ներվարժումն* «կրթութիւն, հմտութիւն, հրահանգ», *ներընծայել* «...իբրև գրբաբիովն *ներընծայեաց* զչորից աւետարանչացն զարտաճառութիւնսն ի մի հաւաքելով» (50), *մակագարդ* «...եղև արդինատու ըստ կարի *մակագարդ*, լուսագարդ, աստուածախաւս տիեզերից...» (95), *վերջածանցավոր* բառեր՝ *ստորնականագոյն* (ՆՀԲ-ում կա *ստորնական* «ստորին» և *ստորնագոյն* «կարի ստորին», 91), *բարունեան* «Եւ ստացա *գրբարունեան* քառավտակ աղբիւրս առ ի լուացումն ժանտ գործոց չարասիրտն որումնացան մեղացն» (54), *ասացանք* (56), «եռածն է միութեան *խսկունականաց*»(119), *սքանչապէս* (32). ՆՀԲ-ում կա *սքանչելապէս*, համածանցավոր՝ *գերառաջնորդ* (117), *բարդ բառեր*՝ *տանջանարար* «...գեհեանն ինձ սպառեց, տանջանարարքն ինձ...» (70), *սրբերամ* «Արդ, հայցեմ ամենեցուն *սրբերամից* լուսագգեստից կրանաւորացդ...» (110), *խաչուզիր* «Աւետարան» (130), *եղեռնաթոյն* «դառնաթոյն», մանավանդ որ ՀԱԲ-ում *եղեռնահամ*-ը «դառնահամ» բացատրությամբ է. «...և անդ նեղեալ *յեղեռնաթոյն* ոմանց առաջնորդաց...» (118), *հարսնագեղ* վայելչութեանց (131). ՆՀԲ-ում կա *հարսնագեղել* «հարսի պէս զարդարել», *ուղագեղ* (ամենայն հավանականութամբ՝ *ուղղագեղ* «ուղիղ և գեղեցիկ»). «Կամամեղ արա յաւժար գտեալ ամենայնի ւ աւտար գովով ի բարիս արդարութեան *ուղագեղ*» (54), *կամամեղ*. «Իսկ ես *կամամեղ* և նուաստ ծառայս Դաւիթ զմտաւ ածեալ զաւրն ահեղ զդատաստանն անաչառ» (67, նաև՝ 54), *բոլորաձայն* (52), *շնորհապատիւ* (54), *մշտահառաչ*. «*մշտահառաչ* աղաւթականաց»



(118), *անդրնդախոյզ*. «*անդրնդախոյզ* գրաւորական մատենից բնախաւսութեան տեառն Յովհաննոս» (91), *ոսկեդէղն*. «Աստուած ողորմեա Յովաննէսի Սողկին, որ *զոսկեդէղն* կազմեաց, ամէն» (98), *պղծահամբաւ*. «...անհետ առնելով զխոհերս պղծահամբաւս *որոմնարկուս* երևութիցն նոցին կորստական սուտապատիր երգոցն» (67), *սրբազնագունդ*. «Սկիզբն պատմութեանց աստուածարեալ և *սրբազնագունդ* վարդապետութեանց...» (31), *տազնապարորոք* (88), *շանթա/խ/առն* (88), *ունախոհ*. Բառարաններում առկա է *ունայնախոհ*, որը ոչ մի կապ չունի նշյալ բառի հետ, *ունախոհ* նշանակում է «ունակ, խոհուն». «Զբաղձանս ներանձնացեալ *ունախոհի* և մտահարուստ ընթերցասիրական ուշմագունի...»(50), բարդ ածանցավոր բառեր՝ *որոմնարկու* «որոմնացան». «...անհետ առնելով զխոհերս պղծահամբաւս *որոմնարկուս* երևութիցն նոցին կորստական սուտապատիր երգոցն» (67), *որչափիկ* «...բաւական համարեալ վարուց կենցաղոյս *զորչափիկն* առին» (20), *ծաղկատեսիլ*. «...պահելով *զծաղկատեսիլ* տղայսն իւր» (ՆՀԲ-ում առկա է *ծաղկատեսակ* «ծաղկի նման») (88), *եռանդնակուտակ* «Կայծակնատարափ, եռանդնակուտակ յարձակմամբ» (88), *հրեշտակապատում*. «Աստանօր յանկ ելեալ աւարտեցաւ *հրեշտակապատում* տառս աստուածային մատենից» (10), *ձեռահիւսակ*. «...յորժամ բարձրացուցանեք զձայն ձեր *ձեռահիւսակն* երգել...» (131). ՆՀԲ-ում վկայված է *ձեռահիւս*. «ձեռամբ իւրով հիւսեալ. ձեռագիր», և վկայությունը՝ դարձյալ որևէ հիշատակարանից:

Բառարաններում չընդգրկվածներից կարելի է առանձնացնել նաև *ջան* վերջնաբաղադրիչով հետևյալ բառերը՝ *երկաջան* «աշխատասեր». «...ուր են բնակեալ բազմութիւն եղբարց խարազնագգեստից և *երկաջան* գործաւորաց...» (118), *սրտաջան*. «մեծաւ փափագանաւք և *սրտաջան* յաւժարութեամբ իմով» (107), *քաջաջան*. «*քաջաջան* յաւժարութեամբ» (108), *աւանդ* վերջնաբաղադրիչով՝ *տեառնաւանդ*. «եթէ ոչ փեսային քո և հասարակաց *տեառնաւանդ*» (36), *հոգիաւանդ*. «...որոց հրամանաւ

և խնամաք աւարտումն եղև ոգեշահ և բարեբերուն և *հոգիաւանդ* կանոնացս» (119):

Ինչ վերաբերում է տվյալ հիշատակարաններում կիրառված փոխառյալ բառերին, ապա դրանք հիմնականում ընդհանուր են հայերենի զարգացման բոլոր փուլերի համար, և դրանց օտար լինելը չի գիտակցվում: Իսկ հակառակ տեսանկյունից առանձնանում է ընդամենը մի քանի հունարեն բառ, որոնք ընդհանուր առմամբ վերաբերում են եկեղեցական կյանքին կամ պաշտոն, տիտղոս նշանակող բառեր են. ՀԱԲ-ում, ապա նաև ՀԲԲ-ում արձանագրված *պռոտոսպարթար* (հուն. proto-spatarios) բառի տարբերակային դրսևորումներից են *պռոտոսպարթար* (82) // *պոթոյսպարթար*. այն ունի հետևյալ բացատրությունը՝ «յունական մի բարձր աստիճան, կայսերական թիկնապահ, գնդի առաջին սուսերակիր». «Ես՝ Գուրգեն քարտուղարս Հայոց Մեծաց և սուրբ թագաւորացն *պոթոյսպարթար*, ստացող եղէ գրոցս այսմ» (13). բառիս *սպարթար* բաղադրիչը ՆՀԲ-ում մեկնված է «սուսերաւոր, դահճապետ, ոստիկան», *կորապադատ* (16)՝ ըստ ՆՀԲ-ի՝ բռ. յուն. ի լատինէ առեալ «հազարապետ պադատան կամ արքունեաց», որի *ու*-ով տարբերակից էլ՝ «ի *կուրապադատութեանն* Մարեմայ բարեպաշտի» (109), *պատրիկ* «բդեշխ, իշխան, նախարար» (21), որից և՛ *պատրրկութիւն* (89), ի չորեքտասաներորդի *դիքտիկոնին* (24) // ի չորեքտասաներորդի *ենդիքտիոնի* (24) // ի չորեքտասան *դիկտիոնիս* (25) // ի չորեքտասաներորդի *էնտիկտիոնին* (26). «15 տարիների մի շրջան». նշյալները Մտեփանոս Սյունեցու կողմից կատարված տարբեր գործերի թարգմանությունների հիշատակարաններից են և այդ առումով զարմանք են հարուցում. տարաձևությունը գուցե և հետագայի աղավաղումների, այլոց կողմից կատարված փոփոխությունների հետևանք է: *Պռոքսինոս* բառը, որ նշանակում է «մերձավոր, հարազատ, մտերիմ», երեք անգամ գործածվել է 1007 թ. գրված հիշատակարանում: Թեև գրաբարի վերոհիշյալ բառարաններում չի գրանցվել, փոխարենը արձանագրվել է ՄՀԲ-ում<sup>8</sup>: Իսկ վերջինիս հեղինակների հավաստ-

<sup>8</sup> Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009:

մամբ՝ այդ բառարանում տրված են միջինհայերենյան շրջանի գրականությամբ ավանդված բառերն ու բառատարբերակները: Ինչպես նկատում ենք, այն 11-րդ դարի սկզբում ևս ավանդվել է, ուստի միջինհայերենյան բառ չենք կարող համարել. «Արդ որք ընթեռնուք սուրբ զԱւետարանս *պոռքսիմոսին* մեղաց թողութիւն խնդրեցէք», «Եւ տիկնոջն *պոռքսիմոսին* կնոջն մեղաց թողութիւն...», «Եւ ես Յովհաննէս *պոտոուպարթար* թագաւորի և *պոռքսիմոս դուկիս* Թոթորակնիս ճորտս...» (82) ևն:

Հիշատակագրության հաստատված ավանդույթով և նյութի բովանդակային կողմերով պայմանավորված՝ որոշ բառեր հաճախակի գործածություն են ստացել: Ընդունված կարգի համաձայն՝ հիշատակարաններում գրիչները օրհնանքի ու մեծարանքի խոսք են ուղղել այն մարդկանց (լինեն դրանք սովորական մարդիկ թե՛ բարձրաստիճան, աշխարհիկ թե՛ հոգևոր դասի ներկայացուցիչ), որոնք ձեռք են բերել այս կամ այն ձեռագիրը կամ որևէ դեր են ունեցել այն ընդօրինակելու գործում: Հետևաբար հաճախակի գործածություն են ստացել այսպիսի բառեր՝ *սուրբ, սրբասէր, սրբասնեալ, պատուական* ևն. «*զսուրբ և պատուական քահանա Միմեովն՝ զստացող սուրբ Աւետարանիս...*» (83), «...*իշէսջիք ի սուրբ աղալթս զԳրիգոր սրբասէր և զերամարտր տէր քահանայ ...*» (123), «*Զստացող սուրբ Աւետարանիս զՍարկաւագ սրբասնեալ և ընթերցասէր գորդի տեառն Մեսրոբա ըստ մարմնոյ...*» (88), «*Արդ որք ընթեռնուք, զՌստակէս զսրբասնեալ քահանա և զճնողսն իւր, և զՄիսիթար՝ զմեղաւոր գրիչս յիշէսջիք...*» (86) ևն: Մինչդեռ ընդօրինակված ձեռագրում թույլ տրված վրիպումների, գրի խոշորության և զանազան այլ պատճառներով կամ ուղղակի Աստծու ողորմությանն ու օրհնությանն արժանանալու համար հիշատակարանի վերջում ինքնամեղադրական խոսքեր են գրել՝ հաճախ գործածելով այսպիսի բառեր՝ *մեղաւոր, մեղապարտ, մեղսամակարդ, ամենամեղ - բազմամեղ - յոքնամեղ // յաւզնամեղ, անարժան - աղկաղկ - տրուպ - փանաքի - փցուն* «նուստ, անարգ, յետին, պակասաւոր», *նուստ - յետին*. «ձեռամբ իմ *մեղապարտ և յետին*

գծագրի» (95), «Աղաչեմ յիշել *զմեղսամակարդ* և *զյետին* կրանաւորս զԳեորգ կազմիչ գրոցս ...» (45), «Ընդ նոսին ողորմելոյ և *ամենամեղ* գրչիս, և քեզ փառք այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտեանից, ամէն» (88), «...աղաչեմ զամենիսեն յիշեսջիք զիս *զբազմամեղս* և *զանարժանս*» (77), «...*զբազմամեղս* և զծնողսն իմ յիշեսջիք ի Տէր Աստուած» (85), «առ ի յիշատակ իմոյ *յոքնամեղ* անձին» (37), «ԶԹորոս *զյաւզնամեղս* յիշեսջիք...» (85), «...որ և ստացեալ զսա ձեռամբ *տրպի* և *աղկաղկի* Գեորգ կոչեցելոյ...» (10), «...*զտրուպ* գրիչ Յովհաննէս յիշեա ի Տէր, աղաչեմ» (45), «...ի ձեռն Յովսէփու *նուաստ* մեղաւոր և *անարժան* քահանայի՝ խակ մտաւք և *փանաքի* գրչով» (69), «Ես *անարժանս* ի կրանաւորաց *փցուն* գրիչս Սիմէան...» (60) նն:

Հիշատակարանները սովորաբար ավարտվում են հետագայում տվյալ ձեռագիրն ստացողին կամ ընթերցողին ուղղված խնդրանքով, որ աղոթքներում հիշեն իրենց՝ ձեռագրին որևէ առնչություն ունեցող մարդկանց, հաճախ նաև՝ իրենց հարազատներին: Այսպիսով՝ *աղաւթք* բառը սովորաբար ստացել է հետևյալ որոշիչները՝ կազմված *սուրբ* և *մաքուր* հոմանիշներից յուրաքանչյուրով և *մատուցանել* բայի անցյալ կատարյալի հիմքով՝ *մաքրամատոյց*, *սրբամատոյց* «մաքրութեամբ, սրբութեամբ մատուցեալ՝ նուիրեալ». «...արժանի յիշատակի զիմս վարկանել անուն ի *մաքրամատոյց* նուիրական աղօթս ձեր» (54), «...յիշեսջիք ի *մաքրամատոյց* յաղալթս ձեր զԱշոտ շահնշահն և...» (60), «...սնուցեալ խրատու և ուսմամբ Տեառն՝ յիշեսջիք ի *սրբամատոյց* յաղալթս ձեր» (88), «Զորս աղաչեմ զամենեսեան, յիշել ի *սրբամատոյց* և յարագաթոիչ յաղալթս ձեր...» (121) նն:

Ամփոփելով պետք է ասենք, որ ձեռագրերի հիշատակարաններն ամբարում են անսպառ լեզվական նյութ, որը դեռևս բացահայտման և խոր ուսումնասիրության կարիք ունի: Վերհանված և քննված բառապաշարը կարող է իր նպաստը բերել հայերենի պատմական բառագիտությանը: Բառարաններում տեղ

չգտած բառերն ու բառատարբերակները կարող են ընդգրկվել  
ապագայում կազմվելիք բառարաններում: <sup>1</sup>

Valentin Khachatryan - The Word Stock of the 5-11 cc. Handwritten Colophons. - In this article we have discussed the general patterns of the 5-11cc. handwritten colophons due to their phonetic and word-formative features which haven't been recorded in the well-known dictionaries but widely used in the colophons, the patterns which have some rople and importance as well as we have spoken about the borrowings.

ԳՐԱԲԱՐՅԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՎԵՐ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ  
ԴՐԱՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խաչատրյան Վալենտին  
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

*Ներածություն:* Ժամանակակից հայերենը հին հայերենի՝ գրաբարի հետագա զարգացման ու մշակման հետևանք է: Մեծ թվով քերականական իրողություններ ընդհանուր են հայերենի զարգացման բոլոր փուլերի համար: Սակայն որոշ մասնիկներ կորցրել են իրենց քերականական գործառույթը և ձևակազմական վաղեմի ակտիվությունը, պահպանվել սակավաթիվ օրինակներում: Հենց վերջիններս էլ կազմում են դիտարկվելիք նյութը: Դրանց մեջ կան որոշ օրինակներ, որոնց կողքին գործածվում են ժամանակակից հայերենի լեզվական նորմերին համահունչ ձևեր: Այսպիսով աստիճանաբար հետին պլան են մղվում գրաբարյան ձևերը և վերածվում հնաբանությունների: Սակայն քիչ իրողություններ էլ կան, որոնք գրաբարյան են և միակն են դեռևս, այսինքն չունեն արդիհայերենյան համարժեք: Ավելին, ժամանակի ընթացքում որպես արդեն հնացած երևույթ ոչ միայն պակասում են որոշ օրինակներ, այլև դրան զուգընթաց նկատվում է գրաբարյան այլ բառաձևերի գործածություն և տարածում, որի հետևանքով տվյալ միավորները աստիճանաբար վերածվում են գրաբարյան փոխառության [1]: Դրանք հիմնականում ներթափանցում են կրոնաեկեղեցական լեզվից: Ինչ խոսք, ունենալով առանձնակի գրավչություն՝ ընդօրինակվում են հանրության կողմից և դրվում շրջանառության մեջ: Գրաբարյան ձևերն ավելի շատ գործածվում են պաշտոնական ոճում, քանի որ խոսքին հաղորդում են վերամբարձության ոճական երանգ [2]:

Եթե անգամ ժամանակակից հայերենի մաս չեն կազմում, ապա գրաբարյան ձևեր հաճախ գործածվում են ստեղծա-

գործական խոսքի պահանջով, հատկապես պատմական բնույթ ունեցող երկերում՝ ստեղծելով պատմական իրադրության տպավորություն: Այդ դեպքում տվյալ միավորները անվավում են «գրաբարաբանություն» տերմինով[2]:

Քանի որ սովորողները կամա թե ակամա առնչվում են գրաբարյան բառաձևերի, ուստի դրանց ուսուցումն ունի որոշակի կարևորություն: Դրանով նախ և առաջ ճիշտ կըմբռնեն տվյալ միավորների իմաստը, ապա և գերծ կմնան ուղղագրական ու իմաստագործառական սխալներից:

*Գրաբարյան քերականական ձևեր, նրանց ուսուցման առանձնահատկությունները:* Գրաբարյան բառաձևերը և՛ բառի կազմում են փոխանցվել մեզ, և՛ առանձին: Բայց և վերջիններից շատերը ձեռք են բերել բառայթի արժեք, այսինքն՝ չի գիտակցվում նշյալների քերականական դրսևորումը: Ժամանակակից հայերենում տվյալ քերականական վերջավորությունները դիտվում են որպես վերջածանցներ: Ակադեմիկոս Գ. Ջահուկյանը դեռևս հին հայերենի վերջածանցների ծագումնաբանական շերտերի մեջ առանձնացնում է «փոխանցական շերտ», որին պատկանում են երկրորդաբար բառակազմական արժեք ստացող հոլովման ու խոնարհման ձևերը [1]: Այսպիսով, որոշ բառաձևեր, շատ դեպքերում սկսած գրաբարյան շրջանից, կորցրել են իրենց վաղեմի արժեքը, վերաիմաստավորվել և դարձել ինքնուրույն բառեր: Վերջիններս հիմնականում չթեքվող խոսքի մասեր են: Ստորև կներկայացնենք թե՛ բառի կազմում, թե՛ առանձին արդի հայերեն փոխանցված գրաբարյան բառաձևերը:

*Մեռական հոլով:* Գրաբարյան *ե* ներքին հոլովման որոշ հետքեր դեռ պահպանվել են ժամանակակից հայերենում: Այդպիսի հոլովման են ենթարկվել *ը, ղ* և նախորդող որևէ բաղաձայնով վերջավորվող բառերը: Դպրոցական դասագրքերում և առհասարակ քերականական աշխատություններում

սովորաբար «պատմական հոլովում» անվան տակ են ներկայացվում գրաբարյան հոլովման ցայսօր պահպանված հատուկ ենտ նմուշները [3]: Արդի հայերենում դրանց թվին են պատկանում *կայսր* և *դուստր* բառերը, որոնց գրաբարյան սեռականի ձևն է միայն պահպանվել, այն է՝ *կայսեր*, *դստեր*: Բայց եթե *կայսերագիր*, *կայսերադուստր*, *կայսերապաշտ* և այլ բառերում ճանաչելի է *կայսեր* բառաձևը, ապա *անդրաստեղյան*, *աստեղաբույլ*, *համաստեղություն*, *տարերային*, *տարերայնորեն* բառերում շատերի համար կարող են անճանաչելի լինել *աստեղ* և *տարեր* բաղադրիչները, որոնք *աստղ* և *տարր* բառերի գրաբարյան սեռականի ձևերն են: Համապատասխանաբար *տեգր*, *վագր* և *եղջուր* (եղջիւր) բառերի գրաբարյան սեռականի ձևերն են առկա հետևյալ օրինակներում՝ *տեգերկին*, *վագերաձի*, *եղջերափող*:

Մի խումբ բառեր գրաբարում անկանոն հոլովման են ենթարկվել. *այր* բառի սեռականն է *առն*, *տեր* (տէր) բառինը՝ *տյառն* (տեառն), *օր* (աւր) – *ավուր* (աւուր), *գյուղ* (գիւղ) – *գեղջ*, *քույր* (քոյր) – *քեռ*, որ կարելի է համապատասխանաբար տեսնել հետևյալ օրինակներում՝ *առնաբար*, *առնադեմ*, *առնակերպ* ևն, Հակոբոս *Տյառնեղբայր* (կրոն.), *Տյառնընդառաջ* (կրոն.), *օրավուր* (նույնն է՝ օր օրի), *ամենավուր* (ամենօրյա), *գեղջուկ*, *գեղջկական*, *քեռայր*, *քեռորդի*, *հորաքեռորդի*, *հորաքեռադուստր*, *հորաքեռայր*: *Քեռ* բաղադրիչով ձևերը մեր օրերում գրեթե չեն գործածվում: Դրանց փոխարեն գործածվում են *քրոջ* ձևի հարադրությամբ բառակապակցություններ: Ավելին, *քեռ*-ը նշյալ բառերում կարող է հասկացվել ոչ թե «քրոջ», այլ «քեռու»: Պետք է այստեղ նկատել, որ ճիշտ կլինի ժողովրդի կողմից լայնորեն գործածվող *քեռակին* բառը փոխարինել *քեռեկին* տարբերակով, քանի որ բաղադրված է *քեռի* և *կին* բաղադրիչներով *ա* հոդակապի միջոցով, ուստի բառավերջյան *ի*-ի և *ա* հոդակապի հանդիպադրումը սովորաբար առաջացնում է *ե*:



Գրաբարում հոգնակի սեռականը կազմվել է *g* հոլովակազմիչով. նույնը վերաբերում է գրաբարյան անեզական գոյականներին, որոնք *p*-ով վերջավորվող բառեր են և ունեն միայն հոգնակի թվի ձևեր: Այդպիսի նմուշներ են հետևյալ բառերում ընդգծված միավորները՝ *մտացածին*, *գլուխգործոց*, *հինավուրց* (հին օրերի), *բարյացական*, *չարյացկամ*, *ձեռացագործ*, *ձեռացագիր*, *կենաց-մահու*, *կենացածին* (կեանք, որից՝ կենաց «կյանքի»)։ *կենաց* «բաժակաձառ» բառը ծագմամբ նույնանում է նախորդ բառերի հիմքին, այսինքն՝ առաջացել է հիշյալ բառաձևի իմաստափոխության հետևանքով: Տվյալ բառերի գրության մեջ հաճախ սխալվում են՝ *g*-ի փոխարեն գրելով հատկապես *ժ*: Ավելի հաճախ սխալ են գրում *մտացածին* բառը՝ հավանաբար կապելով *մտածել* բայի հետ, մինչդեռ *մտաց* «մտքի» գրաբարյան բառաձևն է:

Բազում կայուն բառակապակցություններ՝ դարձվածքներ, շրջասություններ, բաղադրյալ հատուկ անուններ, իրենց կազմում ունեն գրաբարյան թեք հոլովաձևեր: Դրանցում գերիշխում են հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունները, հետևաբար՝ գրաբարյան սեռական հոլովի առկայությունը: Այսպես՝ եզակի սեռական՝ *Հավատո* հանգանակ «քրիստոնեական հավատի, նրա ողջ դավանաբանության հակիրճ շարադրանքը», *հավատո* հանգանակ «հայացքների ամբողջություն, համոզմունք, աշխարհայացք», *Բարեհուսո* հրվանդան, *Հրո* երկիր կղզի, ձայն *բարբառո* հանապատի, *Հովհաննու* Ավետարան, *Հովհաննու* Հայտնություն՝ «Նոր Կտակարանի գրքերից» ևն, հոգնակի սեռական՝ *Թարգմանչաց* տոն, *Սոսյաց* անտառ, *Երանեյաց* կղզիներ, *Հավուց* թառ վանք (հավքերի, թռչունների), լուսավորիչ *սրտից* «Ներսես Մեծ», Գիրք *գրոց* / Գրքերի գիրք «Աստվածաշունչ», Երգ *երգոց*՝ «Հին կտակարանի գրքերից», որի հետևությամբ՝ երգ *երգոց* «գեղարվեստական կատարյալ ստեղծագործություն, գլուխգործոց», *իշխանաց* իշխան (իշխանների իշխան), *արքայից* արքա

(արքաների արքա), *շահից* շահ (շահերի շահ) ևն:

Արդի հայերենի հարակատար դերբային իմաստով համապատասխանում է գրաբարյան *-եսլ* վերջավորությամբ անցյալ դերբայը, որը ենթարկվել է *-ո/յ* արտաքին հոլովման [4], այսպես՝ *մեռյալ* (մեռեալ) «մեռած» - *մեռելոց* «մեռածների», որից էլ՝ *Մեռելոց* (եկեղեցական արարողություն), *մեռելոց* «հանգուցյալների հիշատակին նվիրված օր»։ *Մտաքելոց* վանք (առաքյալների), *Հավատացելոց* պատարագ (հավատացյալների):

Գրաբարյան սեռական հոլովածներ են նաև հետևյալ անվանումների բաղադրիչները՝ *Հայ երիտասարդաց* միություն, «*Օրինաց* երկիր» (օրենքի երկիր):

*Բացառական հոլով*: Գրաբարյան բացառական հոլովը կազմվել է *է* հոլովակազմիչով և *ի* նախդրով՝ բացառությամբ *ա*, *ո* և *ո-ա* հոլովումների, որոնց բացառականը կազմվել է տրական հոլովից *ի* նախդրով:

Գրաբարյան բացառականի ձևերն արդի հայերենում բառայթի արժեք ունեն. դրանք վերաբերական կամ մակբայներ են: Հայտնի են հետևյալ օրինակները՝ *ի բնե*, *ի ծնե*, *ի պաշտոնե*, *ի սկզբանե*, *ի սրտե*, *ի մտտե*, *ի վերջո*, *ի հարկե*: Սովորողների մեջ հարց կարող է առաջանալ, թե ինչու միայն *ի հարկե* բառում է *ի* նախդիրը կից գրվում: Պատասխանը հետևյալն է. մյուս օրինակներում արմատական բաղադրիչները պահպանել են իմաստային ինքնուրույնությունը, ուստի և տվյալ բառերի դեպքում նյութական իմաստ ունեցող խոսքի մասի՝ մակբայի հետ գործ ունենք, իսկ *ի հարկե* բառում այլևս չի գիտակցվում արմատական բաղադրիչի իմաստը, որով և պայմանավորված՝ *ի* նախդիրը կից է գրվել: Գրաբարյան բացառականի ձևերն առկա են նաև մի շարք կրկնավոր բարդություններում, որոնցում բացակայում է կամ առկա է բացառականի կազմիչ *ի* նախդիրը՝ բացառականը առաջին բաղադրիչ՝ *սարեսար*, *սերնդեսերունդ*, *դոնդուռ*, *դարեդար*,

*բերներան, բացեիբաց, պարզեիպարզ, ծայրեիծայր, ծագեիծագ* են, բացառականը վերջին բաղադրիչ՝ *նորինորո, վերջիվերջո, բարիբարո, պարզիպարզ*: Բացառական հոլովի հետ գործ ունենք նաև հետևյալ բառերում՝ *մորեմերկ, վայրիվերո, վերիվարո, փոքրիշատե*:

*Գործիական հոլով*: Արդի հայերենում գործածելի են գրաբարյան գործիականի հետևյալ վերջավորություններով բառերը՝ *-իվ (-իւ) - ճշտիվ, ճշգրտիվ, մեղմիվ, խստիվ, շնորհիվ, լրիվ, առթիվ* ևն, *-ալ (-աւ) - իրալ, հարկալ, կանխալ* ևն: Այս, այդ, այն դերանունների եզակի գործիականը կազմվել է *-ու* հոլովակազմիչով, որ և նկատելի է հետևյալ օրինակներում՝ *այտուամենայնիվ, այնուամենայնիվ*, որոնք նախկին որոշիչ - որոշյալ կապակցությունից առաջացած բառեր են, իսկ գրաբարում ընդունված է եղել որոշչի՝ թվով և հոլովով համաձայնությունը որոշյալին: *Այնուհանդերձ* բառում նույնպես *այն* դերանվան գրաբարյան գործիական հոլովն է առկա, քանի որ *հանդերձ* կապը միայն գործիական հոլովով խնդիր է ստանում: Ինչ վերաբերում է *հաջորդիվ* «հաջորդաբար» բառաձևին, որն այսօր լայնորեն գործածվում է հրապարակախոսական ոճում, հասկապես հեռուստալրագրության մեջ, ապա դա գրաբարին ծանոթ չէ: Դրա փոխարեն *-ալ* վերջավորությամբ գործիականով է հայտնի եղել [5]: Փաստորեն որոշ միավորներ գրաբարյան ձևերին նմանեցնելու ձգտման կամ այլ ձևերի համաբանությամբ կազմելու հետևանք են:

Եզակիում *-ալ* վերջավորությամբ գործիական հոլովով բառերի հոգնակի գործիականը կազմվել է *-ք* մասնիկի հավելմամբ: Այսպիսով, *ալ* երկբարբառը հայտնվել է փակ վանկում և նմանօրինակ դեպքերի հետևությամբ կարդացվել է *օ*: *-ալք* (*-ոք*) վերջավորությունը հետագայում տարածվել է նաև այլ հիմքերի վրա: Գրաբարյան այդպիսի վերջավորությամբ են հետևյալ բառերը՝ *բարվոք, իրոք, ցավոք, օրոք*, որից և՛ *նախօրոք, վաղօրոք* ևն: *Ընտանյոք* «ընտանիքով» բառաձևն այսօր գործածվում է միայն *հանդերձ* կապի հետ: Սովորողները, ի թիվս մինչ

այժմ դիտարկված ձևերի ծանոթանալով նաև վերջինիս, կհասկանան *կամոք* «կամքով», *մտոք* «մտքով», *աչոք* «աչքերով» և նմանաբնույթ այլ օրինակների իմաստը՝ տարբեր ասույթներում, արտահայտություններում և դարձվածքներում դրանց առնչվելով, ինչպես՝ Աստուծու *կամոք*. Լավ է կույր *աչոք*, քան *մտոք*: *Առոք-փառոք* կրկնավոր բարդության կողքին հայտնվել է նաև ժամանակակից համարժեքը՝ *առքով-փառքով*: Նշյալ օրինակների միջոցով բացատրելով *-ոք* վերջավորության քերականական իմաստը, կարելի է նաև սովորեցնել, որ *այլոք* բառաձևը *այլ* բառի գրաբարյան հոգնակի գործիականի ձևն է, որը սխալմամբ գործածվում է *այլք* բառաձևի փոխարեն: Այստեղ իր դերն ունի ժողովրդական ստուգաբանությունը: Ամենայն հավանականությամբ ժողովուրդը կարծում է, թե գործ ունենք *այլ ոք* «այլ մեկը» բառակապակցության բաղադրիչների կցմամբ առաջացած բառի հետ, սակայն այստեղ «ուրիշներ» իմաստն է, որին համապատասխանում է *այլք* բառաձևը: Գրաբարյան *իրաւունք* անեզական գոյականի սեռականն է *իրաւանց*, գործիականը՝ *իրավամբք*: Ժամանակակից հայերենում գործածելի է գրաբարյան շրջանից ի վեր վերջինիս *-ք* բաղադրիչի անկմամբ առկայացած *իրավամբ* եղանակավորող բառը: Ինչ վերաբերում է հաճախ հանդիպող *իրավմամբ* սխալ ձևին, ապա այն հետևանք է *-ում* /ն/ վերջածանցով բառերի համաբանության՝ շարժում /ն/ - շարժմամբ, սխալում /ն/ - սխալմամբ նն:

*Հոգնակի ուղղական և հայցական*: Գրաբարում գոյականի հոգնակին հիմնականում կազմվել է *-ք* վերջավորության միջոցով: Վերջիններիս, այդ թվում նաև անեզական գոյականների *ք*-ն փոխելով *ս*-ի՝ կազմվել է հայցական հոլովը: Գրաբարում բառակազմությանը առավել ակտիվ է մասնակցել անեզական գոյականների հայցականի հիմքը: Այդպիսի որոշ հիմքեր այսօր էլ աչքի են ընկնում առանձնակի կենսունակությամբ, ինչպես՝ *կեանս*

(կենս)՝ կենսագործել, կենսադիմացկուն, ևն, *օրենս* (գրաբարում՝ օրէնս)՝ օրենսգետ, օրենսգիրք, ևն, *մեղս*՝ մեղսունակ, մեղսագործ ևն:

Գրաբարյան անեզական գոյականների ուղղական և հայցական հոլովները սակավ դեպքերում գուգահեռաբար գործածվում են բառային ինքնուրույն արժեքով, հավասարապես մասնակցում բառակազմությանը՝ առաջացնելով բառատարբերակներ: Այսպես՝ *ավետիք* // *ավետիս, պահք* // *պաս* (թույլ արտասանության հետևանքով *հ*-ն ընկել է), *բաղնիք* // *բաղնիս, մորուք* // *մորուս* ևն:

*Նախդրավոր բառեր:* Բացի նրանից, որ *ի* նախդիրը պարտադիր մասնակցել է բացառական հոլովի կազմությանը, գրաբարյան նախդիրները, այդ թվում *ի*-ն, գործածվել են տարբեր հոլովների հետ՝ արտահայտելով տարբեր իմաստային փոխհարաբերություններ: *Ի* նախդիրը, գործածվելով եզակի տրական և հոգնակի հայցական հոլովների հետ, համապատասխանաբար կազմել է տվյալ գոյականների ներգոյական հոլովի եզակիի և հոգնակիի իմաստները: Ընդ որում՝ ձայնավորասկիզբ բառերի դեպքում *ի*-ն վերածվել է *յ*-ի և գրվել բառին կից: Քանի որ գրաբարի բառակազմության *յ*-ն հետագայում հնչյունափոխվել է *հ*-ի, ապա ժամանակակից հայերենում հենց *հ*-ով էլ գրվում է, իսկ ձայնավորասկիզբ բառերից առաջ ընդունելի չէ *ի* նախդրի գործածությունը: Եզակի տրականի և հոգնակի հայցականի հետ *ի* նախդրի գործածության օրինակներ են՝ *ի վիճակի* լինել, *ի գորու* լինել, *ի մասնավորի, իմիջիայոց, հավուր* պատշաճի, *հանիրավի, հիրավի, հանձին, ձայն* բարբառո *հանապատի, ի հեճուկս, ի զարմանս, ի դեմս, ի հաճույս, ի թիվս, ի շարս, համենայն դեպս, ի փառս, ի հետևանս, հանձինս* ևն: Նշյալ օրինակներից շատերում ներգոյական հոլովի իմաստ չկա: Տվյալ հոլովների հետ *ի* նախդիրը գրաբարում այլ իմաստներ էլ է արտահայտել, որոնց արդի

հայերենում ավելանում են նոր իմաստներ ու իմաստային առումներ, ինչպես՝ *ի մասնավորի* «մասնավորապես», *ի զարմանս* «որպես զարմանք», *ի հետևանս* «որպես հետևանք» [6], բայց և՛ *ի շարս* «շարքում», *համենայնդեպս*՝ «բոլոր դեպքերում» ևն: *Հընթացս* «ընթացքում» բառաձևը լայն տարածում է ստացել վերջին ժամանակներս: Մասնիկի հոգնակիության արտահայտիչ լինելու մասին խոսելիս պետք է բացատրել նաև *հանձին* և *հանձինս* ձևերի քերականաիմաստային տարբերությունը, որպեսզի *հանձինս* ձևը չգործածեն եզակի թվով գոյականի հետ:

Ժամանակակից հայերենում քիչ թե շատ գործածվող հետևյալ կազմություններում էլ առկա է *ըստ* նախդրի գործածություն: Այսպես՝ հայցականի հետ՝ *ըստ իս*, տրականի հետ՝ *ինքնըստ-ինքյան*, *ըստ արժանվոյն*, *ըստ կարելիւոյն*, *ըստ պատկանելիւոյն*, *ըստ մեծի մասին*, *ըստ ամենայնի*, *ըստ որում*, *ըստ այսմ /այդմ /այնմ*: Հայցական և տրական հոլովների հետ արտահայտում է «համաձայն, համեմատ» իմաստները, իսկ բացառական հոլովի հետ ցույց է տալիս հաջորդականություն, ինչպես՝ *միըստմիոջե, օրըստօրե* [4]:

Առկա են նաև բառայթի արժեք ստացած գրաբարյան այլ ձևեր, որոնք ուղղագրական և իմաստագործառական բարդություններ չունեն, ուստի դրանց չենք անդրադառնում:

*Եզրակացություն*: Վերոբերյալ օրինակները ժամանակակից հայերենում գործածվում են տարբեր հաճախականությամբ: Դրանցից շատերը հնարավոր չէ փոխարինել մեկ այլ օրինակով: Մի մասն ունի սակավ գործածություն, քանի որ իրացվում է ժամանակակից հայերենին բնորոշ ձևերի կողքին: Նշյալներն աստիճանաբար վերածվում են հնաբանությունների: Դրանց հակառակ՝ մեր օրերում գրաբարից փոխառվում են որոշ իրողություններ, որոնք, առանձնակի ակտիվությամբ գործածվելով, դառնում են արդի հայերենի լեզվական համակարգի անբաժանելի

միավորներ: Դիտարկված գրաբարյան ձևերի ուսուցումը կնպաստի տվյալ միավորների իմաստների ճիշտ ըմբռնմանը և առանց ուղղագրական սխալների ու տեղին գործածությանը:

### Օգտագործված գրականության ցանկ

1. Ջահուկյան Գ., Հին հայերենի վերջածանցների ծագումը, Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, պրակ 2, Երևան, 1998, էջ 5-49:
2. Եզեկյան Լ., Ոճագիտություն, Երևան, 2003:
3. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու (ձևաբանություն), Երևան, 2004:
4. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976:
5. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836-1837:
6. Գալստյան Հ., Ճիշտը և սխալը, Երևան, 2007:
7. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Ե., 1976:
8. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Լեզվի ինստիտուտ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1969:

Хачатрян Валентин - Грамматические формы древнеармянского языка в современном армянском и особенности их изучения. – Обсуждаются некоторые грамматические явления древнеармянского языка, встречающиеся в современном армянском языке, которые могут способствовать преодолению студентами орфографических и семантических ошибок.

Khachatryan Valentin - The old armenian grammatical forms in modern armenian and the peculiarities of their teaching research. - Some grammatical phenomena of old Armenian the understanding of which will encourage the students to avoid grammatical and semantic-pragmatic mistakes are discussed.



ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵԹՈՒՄ  
ՊԱՏՄԻՉԻ  
«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԱԹԱՐԱՅ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ\*

Խաչատրյան Օֆելյա  
ԳԱԱ լեզվի ինստիտուտ  
Մուրադյան Անահիտ  
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ

Հայտնի է, որ առանձին հեղինակների լեզվի, հատկապես բառապաշարի ուսումնասիրությանը մեծապես նպաստում են բնագրային համաբարբառները: Դրանցում հավաստի փաստերով և համակարգված արտացոլվում են տվյալ հեղինակի երկի լեզվական միավորները, որոնց քննությամբ կարող են բացահայտվել հայերենի զարգացման միտումներն ու լեզվի քերականական կառուցվածքի տարժամանակյա յուրահատկությունները:

Համաբարբառային մշակման է ենթարկվել նաև Հեթում պատմիչի «Պատմութիւն թաթարաց» աշխատությունը, որը հնարավորություն է ընձեռում երկի բառապաշարը բազմակողմանիորեն քննել վիճակագրական, լեզվաոճական և բառակազմական տեսանկյուններից<sup>1</sup>:

Հեթում պատմիչը հայ պատմագիր է, պետական գործիչ: Սերել է Հեթումյանների տոհմից: Եղել է հայոց սպարապետ (1294-1305թթ.), վարել է մի շարք հաղթական ճակատամարտեր հարևան մահմեդական իշխանությունների դեմ:

1842թ. վարդապետ Հ. Մկրտիչ Ավզեյանը Հեթում պատմիչի «Պատմութիւն թաթարաց» երկը լատիներենից թարգմանել է գրաբար՝ նրան կցելով նաև Հեթումի անունով հայտնի

---

\* «Ձախուկյանական ընթերցումներ: Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ»: Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2013, էջ 236-245:

<sup>1</sup> Հայկական համաբարբառ 17, Հեթում պատմիչ, Պատմութիւն թաթարաց, Ե., 1981:

Ժամանակագրությունը, որն ընդգրկում է արժեքավոր տեղեկություններ Հայաստանի և ասիական ու եվրոպական մի շարք պետությունների 1096 - 1307թթ. շրջանի պատմությունից<sup>2</sup>:

Ներկա հոդվածի շրջանակներում կփորձենք համակողմանիորեն ներկայացնել երկու հանդիպող վերլուծական կազմությունների բառակազմական այն հիմնակաղապարներն ու մասնակաղապարները, որոնք ստեղծվել են հարադրության ուղիով, ցույց տալ վերջիններիս կառուցվածքային առանձնահատկությունները՝ խոսքի մասերի հնարավոր գուգորդումներով, կազմիչ միավորների քանակով ու կազմով, կրած փոփոխություններով և գործածման հաճախականությամբ: Հեթումի երկի բառապաշարում վերլուծական կազմությունները գերակշիռ թիվ չեն կազմում համադրականների համեմատությամբ: Դրանցում ավելի հաճախական են բայական հարադրությունները, որոնք վկայում են աշխատության յուրօրինակ բառակերտումների առատության մասին:

Ըստ մեր հաշվարկների՝ երկու գործածվել են ավելի քան 200 հարադիր բայեր, որոնք ունեն պատմաքաղաքական, ռազմական, կրոնակեղեցական բովանդակություն և աչքի են ընկնում իրենց ինքնատիպությամբ, բազմազանությամբ, բառակազմական եղանակների ու միջոցների գործածականության հաճախականությամբ՝ պայմանավորված տվյալ ժամանակաշրջանին բնորոշ լեզվական օրինաչափություններով:

Ըստ բաղադրիչների լրացական-կախումային հարաբերությունների՝ բայական հարադրությունները համարվում են ստորադասական բարդություններ<sup>3</sup>: Այդպիսի բարդություններում բայական անդամը հարադրվում է անվանական բաղադրիչին՝ բայական իմաստ հաղորդելով կապակցությանը: Դրանցում բայական և անվանական հարադիրները պահպանում են իրենց ձևական և իմաստային ինքնուրույնությունը՝ ունենալով

---

<sup>2</sup> Հայկական սովետական հանրագիտարան, հ. 6, Ե., 1980, էջ 331:

<sup>3</sup> Գ Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի բառակազմություն և իմաստաբանություն*, էջ 225 - 227:

բառային մեկ միավորի արժեք: Բարդության առաջին բաղադրիչը՝ անվանական միավորը, բայական հարադրության համար կատարում է հիմքի, իսկ բայական բաղադրիչը՝ ընթացայնության գաղափարի ցուցիչի դեր<sup>4</sup>:

Որպես բայական հարադիր առավելապես գործածվում են *առնել* և *լինել* վերացական իմաստի բայերը, որոնցով Հեթումի երկում հանդիպում են մի քանի տասնյակ կազմություններ: Օրինակ՝ *ազդ առնել, բռն առնել, դարձ առնել, յարձակմունս առնեմ, չու առնեմ, ականատես լինիմ, անձնատուր լինիմ, անյոյս լինել, դիմակալ լինել, նետաձիգ լինել, սարակինոս լինիմ* և այլն:

Ըստ գործածման հաճախականության՝ հաջորդ տեղում է *տալ* բայը, որով երկում վկայված են հետևյալ հարադրությունները՝ *հրաման տամ, խորհուրդ տամ, խրատ տամ, խոյս տամ, ձեռն տալ, նեղութիւն տամ, պատերազմ տալ, պատուէր տամ* և այլն:

Մյուս բայերով վկայված կազմությունները քանակով զիջում են վեր նշվածներին, թեև ի հայտ են բերում թե՛ բայական, թե՛ անվանական բաղադրիչների բազմազանություն և գուգորդելիություն, ինչպես՝ *ակն ածել /անել/, ակն / խնամ, հոգ, շնորհ/ ունիմ, առաջի արկանել /դնել/, անձնատուր /կարեկից/ եղեալ, արժանի /հակառակ/ կամ, գուն գործեմ /դնեմ /, կին / հանգիստ, ճախր / առնուլ* և այլն:

Ինչ վերաբերում է բայական հարադրությունների բաղադրիչների շարադասությանը, ապա պետք է ասել որ բայերը հիմնականում գրավում են վերջադաս դիրք, թեև կան և նախադաս բայերով հարադրություններ, ինչպես՝ *բառնալ զգլուխ, առնեմ աւար /յաղթութիւն, սէր/, ելանեմ արտաքս, կամ յաղօթս, լինիմ միջամուխ, տամ /մկրտել, յարձակիլ, պաշարել, պատերազմ, քարոզել/* և այլն:

---

<sup>4</sup> Ա, Մարգարյան, *Հայերենի հարադիր բայերը*, Ե., 1966, էջ 70:

Երկի բառապաշարի ինքնատիպությունը պարզելու և չվկայված բառային միավորներն առանձնացնելու համար վերջինիս հարադրավոր բոլոր բարդությունները համեմատել ենք <<Նոր հայկազյան բառարանի>> (ՆՀԲ), Լ.Հովհաննիսյանի <<Գրաբարի բառարանի>> (ԳԲ), Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի <<Միջին հայերենի բառարանի>> (ՄՀԲ), ինչպես նաև Ստ. Մալխասյանի <<Արդի հայերենի բացատրական բառարանի>> գլխաբառերի հետ և պարզել, որ երկուս գործածված բայական հարադրություններից 50-ը արտացոլված չեն նշված բառարաններում. դրանք են՝ *անհայտ լինիմ, առնեմ յայտնություն, առնեմ ժողով, առնում գերի, արժանի կամ, դժնդակ լինիմ, դիակապուտ առնեմ, դնեմ ի բանտի, ի կարգի եղեալ, ի կշիռք դնել, ի հարգի լինիմ, ի ձեռն բերել, ի մտացոնս լինիմ, ի մտի եղեալ, մարդ յարդարեմ, մարտ յարուցանել, խաղամ յառաջ, կամ յաղօթս, կրօնաւոր լեալ, ձերբակալ լինիմ, յաղթող գտանեմ, յապշութիւն կրթիմ, յարձակմունս առնեմ, յաւարի առեալ, յաւարի առնում, յօշօշ առնեմ, յոչինչ դառնամ, չարիս առնեմ, չարիս առնել, պարզես առնում, պարզես տամ, սարակչինոս լինիմ, փոխիմ առ Քրիստոս, օրինակ տամ* և այլն:

Կան նաև այնպիսի բառամիավորներ, որոնք ընդհանրապես դուրս են մնացել ՆՀԲ- ից, բայց հանդիպում են Ստ. Մալխասյանի բառարանում՝ *ի գութ շարժեալ, առնում կին, գուշակ լինիմ, վրեժ խնդրեմ, փոյթ տանիմ*:

Այս բարդությունների անվանական հարադիրներն անկախ բառեր են, երկի մեջ նաև ինքնուրույն գործածություն ունեն՝ հանդես բերելով գուգորդելիություն, ինչպես՝ *մարտ և մարտ յարդարեմ // մարտ յարուցանել*՝ և եղև *մարտ* սաստիկ (12): Յորժամ Ապաղայ *մարտ յարդարեր* ի վերայ սուլդանին Եգիպտոսի... (55): ... սա սկսաւ *մարտ յարուցանել* ընդդէմ կայսեր Յունաց (27): *Մեկնիմ և մեկնիմ ի փախուստ* ...և առանց ի խնդիր լինելոյ նորա՝ գոր խնդրէինն, *մեկնեցան* ի

տեղուզէն՝ ասելով ... (34): ...գոր տեսեալ այլոց՝ անդէն վաղվադակի *մեկնեցան ի փախուստ* յետս ընդ կրունկն (23):

*Նմանող* բառը գրաբարի մատենագրության մեջ անկախ գործածությամբ չի հանդիպում. այն գործածվել է *նմանող լինի* հարադրության մեջ, իսկ երկուսն ինքնուրույն գործածություն ունի՝ ... զինուք, ձիովք և զգեստուք *նմանողք* են սովորութեան և ձևոց Թաթարաց (14):

Քննությունը ցույց է տալիս, որ կիրառված բայական հարադրություններում առկա են ժամանակի բառակազմական գրեթե բոլոր կադապարները.

1. Անվանական հարադիր տարբեր խոսքի մասերով և համապատասխան քերականական ձևավորումով: Օրինակ՝ *գոյական՝ բուն* առնել, *հրաման* տամ, *ածական՝ անյայտ* լինիմ, *հնազանդ* լինիմ, *դերանուն՝ յոչինչ* դառնամ, *մակբայ՝ առաջի* դնեմ, *ընդդէմ* կալ, *շուրջ* պատեալ, *դերբայ՝ յաղթող* գտանեմ, *բանտարգել* լինիմ և այլն:

Երկուսն վկայված բազմաթիվ օրինակներում ավելի շատ են այն կազմությունները, որոնցում մակբայական հարադիրը ձևավորված է *ի (յ)* նախդրով և տարածական իմաստ ունեցող բառերով, ինչպես՝ *ի բաց* արձակեմ, *ի դուրս* վարիմ, *ի ներքոյ* անկեալ և այլն:

2. Անվանական հարադրի

ա) ուղիղ ձևով (ուղիղ ձև է նաև եզակի հայցական հոլովաձևը՝ առանց *զ* նախդրի): Օրինակ՝ *գուշակ լինիմ*, *կրօնաւոր լեալ*, *հրաման տամ*, *պատերազմ տալ*,

բ) թեք հոլովներով, որոնք ձևավորված են լինում տարբեր նախդիրներով՝

1. Անվանական հարադրի տրական հոլովաձևով .

ա) *ի (յ)* նախդրով (որոշ դեպքերում ձեռք է բերում ներգոյական հոլովի արժեք)՝ *դնեմ ի բանտի*, *ի մտի եղեալ*, *ի յարգի լինիմ* և այլն ,

բ) *զ* նախդրով՝ *զահի հարեալ*, *զահի հարկանեմ*:

2. Անվանական հարադրի հայցական հոլովաձևով.

ա) առանց նախդրի՝ եզակի թվով՝ բայական հարադրի վերջադաս դիրքով՝ *մարտ յարդարեմ, մարտ յարուցանել*, հոգն. թվով՝ *յարձակմունս առնեմ, չարիս առնեմ* և այլն,

բ) *ի (յ)* նախդրով՝ եզակի թվով՝ բայական հարադրի նախադաս և վերջադաս դիրքերով՝ *ի գութ շարժեալ, ի խնդիր լինել, ի պարտութիւն մատնիլ, մեկնիմ ի փախուստ, վարեմ ի գերութիւն*, հոգն. թվով՝ *ի թիկունս դարձուցանել, յարձակմունս առնեմ*, ներգոյ. իմաստով՝ *արկանել ի բուռն, մտնեմ ի կարգ, մտանեմ ի կրօն* և այլն,

գ) *զ* նախդրով՝ եզակի կամ հոգնակի թվով՝ *բառնալ զգլուխ, գործեմ գերկիր, զփորձ առնուլ, լնում զաւուրս, վճարեմ զկենցաղս* և այլն,

դ) *ընդ, առ* նախդիրներով՝ *ընդ առաջ ելանեմ, փոխիմ առ Քրիստոս* :

3. Անվանական հարադրի բացառական հոլովաձև.

ա) *ի* նախդրով՝ եզակի թվով՝ *բառնամ ի միջոյ*,

բ) *ի* նախդրով՝ հոգնակի թվով՝ *վճարեալ ի կենաց, լուծանել ի կենաց* և այլն:

4. Անվանական հարադրի գործիական հոլովաձևով.

ա) *զ* նախդրով՝ *զմտաւ ածիմ* (= «*մտքին դնել*», «*մտմտալ*»):

Հեթումի երկում կիրառված են նաև եռանդամ բայական հարադրություններ, որոնք դարձվածքի արժեք ունեն, ինչպես՝ *զահի զամօթի հարեալ, զահի գերկյուղի հարկանիմ* ( *զահի հարեալ* (= «խիստ վախենալ»), *զամօթի հարեալ* (= «խաղք ըլլալ»)):

Հազվադեպ հանդիպում են բարդություններ

ա) հոմանիշ անվանական բաղադրիչներով՝ *զահի հարկանիլ // գերկիւղի հարկանիլ, մղել մարտ // մղել պատերազմ*,

բ) հոմանիշ բայական բաղադրիչներով՝ *զհետ զնամ // զհետ երթամ* գ) բաղադրիչների արմատների կրկնությամբ՝ *փորձ փորձել*:

Ինչ վերաբերում է *անվանական* (ոչ *բայական*) հարադրություններին, ապա դրանք գրեթե կիսով չափ պակաս են

բայականներից: Բարդությունների այս տեսակը, ինչպես և գրաբարում, այնպես էլ Հեթումի բառապաշարում շատ տարածված չէ: Այնուամենայնիվ, թեև ոչ մեծ քանակությամբ, հանդիպում են և՛ դերանունների, և՛ այլ խոսքի մասերի հարադրությամբ կազմված միավորներ՝ գուգորդելիության տարբեր դրսևորումներով:

Մեր կատարած համեմատական քննությունից պարզել ենք, որ

ա) բազմաթիվ հարադրություններից շուրջ 40-ը նորակազմ են և տարբերվում են դասական գրաբարի ընդունված նորմերից: Դրանցից

բ) 29-ը վկայված չեն նշված բառարաններից և ոչ մեկում. դրանք են՝ *աւագ պարոնճ, բարի բարի, ընդ երկայն, երկայն ընդ երկայն, յօշ յօշ, տեղւոջէ ի տեղի, ի տեղիս տեղիս, իբր զի, որպէս և, նոյնպէս և, և ահա, ոչ սակաւ, յո* (=«դէպի ուր») և *է, կամք է, ի հաճոյս, ի փառս, էլք արեգական, ճակատ մարտի, պատմութիւն թագաւորաց, սուրբ զիր, ճարակ սրոյ,*<sup>6</sup> *երկայթի դռուն՛, իլի՛ճ (խըլիճ) ասլան՛:*

գ) 5-ը՝ հանդիպում են միայն Ստ. Մալխասայանի բառարանում. դրանք են՝ *ի հանդիպոյ* (բայց՝ *ի հանդիպէ, ի հանդիպոջ տարբերակով*),<sup>9</sup> *մանաւանդ որ, թող զի*<sup>10</sup>, *որպէս զի, սուրբ երկիր:*

---

<sup>5</sup> ՄՀԲ-ում՝ *ավագ իշխան:*

<sup>6</sup> Ստ. Մալխասայանի բառարանում հանդիպում ենք միայն օրինակներում՝ *սրի ճարակ դարձնէ:*

<sup>7</sup> ՄՀԲ-ում տրվում է *երկայթէ* ձևով:

<sup>8</sup> ՄՀԲ-ում առկա է *ասլան* գ. (= «առյուծ», փխբ. «խիզախ, քաջ, անվեհեր»), իսկ Ստ. Մալխասայանի բառարանում՝ *իլիչ* գ., ած. (=1. «ատամը հանելու գործիք», 2. «լող»)

<sup>9</sup> *ի հանդիպէ* (= «հակառակ կողմից, դիմացի կողմից»), *ի հանդիպոջ* (= «դեմուդեմը»):

<sup>10</sup> *թող զի* (= «մի կողմ թողնելով որ», «բացի այն, որ»):

դ) 3-ը՝ *հետ զհետէ*<sup>11</sup>, *ոչ ինչ, դէպ ի*<sup>12</sup>, գործածվում են հիշյալ հեղինակների բառարանագիտական աշխատանքներում միայն որպես համադրական բարդություններ:

ե) 1-ը՝ *սուրբ խաչ-ը*, ընդգրկված է ՄՀԲ-ում և Ստ. Մալխասյանի բառարանում, ԱԲ - ում չկա, իսկ ՆՀԲ- ում հանդիպում է միայն օրինակներում:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «Պատմութիւն թաթարաց» երկում գործածված ոչ բայական հարադրությունների մեծ մասը կազմվել է շաղկապների և նախդիրների միջոցով: Շաղկապներով բաղադրված անվանական հարադրություններից աշխատության մեջ վկայված են դերանուններով և թվականներով կազմություններ, իսկ նախդիրներով երկում հանդիպում են մի քանի բաղադրություններ, որոնք վերլուծական կառուցվածք ունեցող մակբայներ են, այսինքն՝ առաջացել են գոյականների տարբեր քերականական ձևերից:

Հարկ է նշել, որ ըստ խոսքիմասային պատկանելության՝ ոչ բայական հարադրությունները մեծ մասամբ վերլուծական կազմություն ունեցող դերանուններ ու դերանվանական մակբայներ են: Դերանուններից այս տիպի բաղադրությունների մեջ ամենից ավելի գործածական են անորոշը, որոշյալը և ժխտականը, ավելի սակավ՝ ցուցականն ու հարցահարաբերականը: Օր.՝ *զամենայն ինչ,գոր ինչ, զայս ամենայն, մի ոմն, մի ոք, ամենայն ոք, այն ինչ, այս ինքն (այսինքն), իւրաքանչիւր ոք, ոչ այլուր, ոչ այլ, ոչ ինչ (ոչինչ), ոչ իւիք, ոչ ոք, որ ոք, քանի մի*:

Համաբարբառի տվյալներով նշված դերանուններից հաճախականության ամենամեծ ցուցիչն ունի *ոչ ոք* ժխտականը (15), երկրորդ տեղում է *այն ինչ-ը* (8): Մնացած դերանուններն ունեն մեկից մինչև յոթ հաճախականություն:

---

<sup>11</sup> Տե՛ս, ՆՀԲ-ում, ՄՀԲ-ում՝ *հետզհետէ*:

<sup>12</sup> Տե՛ս, ՄՀԲ և ՍՏ. Մալխասյանի բառարանում՝ *դէպի* (= «ձախ»):



Դերանունները մասնակցում են նաև բաղադրյալ մակբայների կազմությանը

1. ածականների կամ դերանվանական մակբայների գուգորդմամբ, *ինչպես՝ ամենայն ուրեք, բազում ինչ, այլ ուրեք,*

2. ոչ Ժխտական մասնիկով և մի շարք ածականների ու մակբայների գուգորդությամբ՝ *ոչ այնչափ, ոչ երբեք, ոչ սակաւ, ոչ ուրեք,*

3. *ի (յ)* նախդրով, շաղկապով և պակասավոր բայով՝ *յո և է:*

Ինչ վերաբերում է վերլուծական կառուցվածք ունեցող մակբայներին, ապա դրանք իրենցից ներկայացնում են նախդիրների կապակցություններ տարբեր հոլովների հետ: Համաբարբառում որպես առանձին գլխաբառ ներկայացված են նշված տիպի մակբայները՝ *առ, ընդ, ըստ, ի (յ)* նախդիրներով, որոնց գուգորդությունները տարբեր հոլովաձևերի հետ ներկայացնում ենք ստորև.

*առ* նախդիրը հայցական հոլովաձևի հետ՝ *առ հասարակ, ընդ* նախդիրը հայցական հոլովաձևի, ածականի, գոյականի և մակբայի հետ՝ *ընդ առաջ, ընդ երկայն, ընդ երկար* (= «երկար ժամանակով»), *ընդ կրունկն, ընդ մէջ,*

*ի* նախդիրը տրական հոլովաձևի հետ՝ *ի միջի* (= «մեջտեղը»), *ի վայրի,*

*ի* նախդիրը հայցական հոլովաձևի հետ, եզակի թվով՝ *ի բաց, ի դէպ, ի ծածուկ, ի մէջ, ի տեղի, ի վեր,* մակբայների հետ՝ *ի միասին, ի վերայ, ի ստորև,*

*ի* նախդիրը հայցական հոլովաձևի հետ, հոգնակի թվով՝ *ի հաճոյս, ի պէտս, ի փառս,*

*ի* նախդիրը բացառական հոլովաձևի հետ, եզակի թվով՝ *ի բնէ, ի հանդիպոյ, ի միջոյ, ի ներքոյ, ի սկզբանէ, ի վաղուց,* մակբայի հետ՝ *ի հետէ,*

*ի* նախդիրը բացառական հոլովաձևի հետ, հոգնակի թվով՝ *ի ձեռաց,* մակբայի հետ՝ *ի վաղնջուց.*

Գործածված է և երկու մակբայների հարադրմամբ *ի վաղնջուց հետե* վերլուծական կազմությունը:

Նկատելի է, որ մակբայների կազմության եղանակներից է նաև կրկնությունը. ընդ որում հանդիպում են ինչպես ազատ բաղադրիչներով, այնպես էլ շաղկապներով և նախդիրներով միավորված կրկնավորներ: Երկում հաճախ գործածվում են տարբեր խոսքի մասերի պատկանող և տարբեր հոլովածև ունեցող բառերի կրկնությամբ կազմված մակբայներ: Այսպես, *ազատ բաղադրիչների կրկնությամբ* վկայված օրինակներ են՝ *ազգի ազգի, աւուր աւուր, իրաց իրաց, գունդ գունդ, յօշ յօշ* (գոյականներ), *մի մի* (թվական), *բարի բարի, փոքր փոքր, ուրույն ուրույն* (ածականներ), *արագ արագ, յետս յետս, տեղի տեղի, յոյժ յոյժ* (մակբայներ):

Շաղկապով միավորված բաղադրիչների կրկնությամբ վկայված է միայն *այլ և այլ* օրինակը:

Ավելի շատ օրինակներ են վկայված նախդիրներով միավորված բաղադրիչների կրկնությամբ.

*առ* նախդրով՝ *մի առ մի,*

*ըստ* նախդրով (բաղադրիչների տարբեր հոլովածևներով)՝ *մի ըստ միտջե, օր ըստ օրե, ամ ըստ ամե,*

*ընդ* նախդրով՝ *երկայն ընդ երկայն,*

*ի* նախդրով (բաղադրիչների տարբեր հոլովածևներով)՝ *կարճ ի կարճոյ, տեղուջե ի տեղի:*

Որոշ դեպքերում նախդիրը դրվում է կրկնվող բաղադրիչներից առաջ՝ *ի տեղիս տեղիս, առ փոքր փոքր:*

Կրկնավորների շարքում կարելի է դասել նաև իմաստային մերձավորություն կամ հակադարձ իմաստ ունեցող բաղադրիչների հարադրությունները, ինչպես՝ *բայց սակայն, բայց միայն, և կամ, ճակատ մարտի, ծով Ովկիանոս:*

Վերլուծական կազմություն ունեն նաև մի շարք մակբայներ, որոնք բաղադրվել են *ևս* շաղկապով, *քան, յետ* (*հետե*) նախադրություններով, ինչպես՝ *այլ ևս, գայլս ևս, գայն*

*ևս, անդր ևս, և ևս, ոչ ևս, անդր քան, առաւել քան, յառաջ քան, նախ քան, յետ որոյ, յայնմ հետէ // յայնմհետէ, յորմէ հետէ:*

Նմանատիպ կառուցվածք ունեն և որոշ վերաբերականներ, որոնք բաղադրված են զանազան խոսքի մասերից կամ քարացած քերականական ձևերից` *և եթ, միայն թէ, և ահա:*

Երկի բառապաշարում առկա են վերլուծական կազմության բազմաթիվ շաղկապներ, որոնցից մի քանիսն ունեն բավական բարձր հաճախականություն: Համաբարբառում վկայված հարադրավոր կազմության շաղկապներն են` *և ապա (3), ապա եթէ (1), բայց սակայն (2), բայց միայն (2), բայց և (1), զի և (1), իբր զի (1), իբրև զի (1), թէպէտ և (6), մանաւանդ թէ (1), մանաւանդ որ (1), մինչ դեռ (4), մինչ զի (2), որպէս զի (6), որպէս և (6), վասն զի (25), և ահա (6), և զի (2), եւ կամ (2):*<sup>13</sup>

Սակավ գործածությամբ վկայված է նաև երեք հարադիրներից կազմված *ապա եթէ ոչ (2)* վերլուծական շաղկապը:

Անվանական վերլուծական կազմությունների շարքում առանձնանում են բաղադրյալ թվականները: Հանդիպում են հիմնականում քանական թվականներ, իսկ կոտորակային թվականներից կիրառված է միայն *երկու և կես* բաղադրությունը: Երկում վկայված են բաղադրյալ թվականների հետևյալ տեսակները.

ա ) 11-ից մինչև 99-ի սահմաններում տասնավորի և միավորի բաղադրությամբ գործածված է երեք օրինակ` *եռաբաղադրիչ բաղիյուսական կազմությամբ` քսան և չորս, քառասուն և երկու, վաթսուն և չորս,*

բ) *հարյուր* թվականի և տասնավորների բաղադրությամբ` *հարհւր քսան, հարհւր իննսուննութ ( վերջին բաղադրիչը կցական բարդություն է),*

գ) միավորների և *հարյուր, հազար* թվակաների բաղադրությամբ հանդիպում են հետևյալ բարդությունները`

---

<sup>13</sup> Փակագծում նշել ենք համաբարբառում վկայված հարադրավոր կազմության շաղկապների հաճախականության ցուցիչը:

*երկու հազար, եօթն հազար, հինգ հազար, վեց հազար, տասն հազար*: Մրանք երկբադադրիչ հարադրություններ են, իսկ *երեքհարիւր հազար, չորեքհարիւր հազար, վեցհարիւր հազար* թվականներում առաջին բադադրիչները կցական բարդություններ են,

դ) տասնավորների և հազարավորների բադադրությամբ վկայված են ավելի շատ օրինակներ՝ *երեսուն հազար, երկոտասան հազար, մետասան հազար, քառասուն հազար* և այլն,

ե) քառաբադադրիչ կազմություն ունեն երկու օրինակ՝ *հարյուրավոր + տասնավոր + միավոր* կադապարով՝ *երեքհարիւր քսան և ինն, վեցհարիւր քսան և երկու*:

Այսպիսով, «Պատմութիւն թաթարաց» աշխատության մեջ գործածված բադադրյալ թվականների ընդհանուր քանակն է 20, որոնց հաճախականությունը նույնպես բարձր չէ, հիմնականում՝ 1- ից 3:

Նշենք նաև, որ համաբարբառում առանձնացված և ինքնուրույն գլխաբառերով ներկայացված են երկուսն օգտագործված կայուն կապակցությունները, որոնք առանձին բառային միավորների արժեք ունեն: Դրանք կա՛մ

Ա. անվանողական արժեք ունեցող գոյականական բառակապակցություններ են, որոնց բադադրիչների միջև գոյություն ունեն որոշիչ որոշյալի և հատկացուցիչ հատկացյալի շարահյուսական հարաբերություններ՝ *աւագ պարոն, արքունի դուռն* և այլն, կա՛մ

Բ. կայուն կապակցություններ են, որոնք անվանողական արժեք չունեն և նախադասության մեջ հանդես են գալիս պարագայական պաշտոններով Օր.՝ *առ ժամանակ մի, գայնու ժամանակաւ, ի սուղ ժամանակի, յետուստ կողմանէ*:

Ստորև ներկայացնում ենք այդ կապակցություններն ըստ բադադրիչների շարահյուսական հարաբերությունների, նրանց խոսքիմասային պատկանելության և գերադաս անդամի դիրքի:

1. *Որոշիչ որոշյալ հարաբերություն*

Մ + Գ կաղապարով, գերադաս անդամը վերջադաս՝ *աւագ պարոն, արքունի դուռն, երկաթի դուռն, յունական ծով, սուրբ գիր, սուրբ երկիր,*

Գ + Մ կաղապարով, գերադաս անդամը նախադաս՝ *դուռն արքունի, երկիր սուրբ,*

Թ + Գ կաղապարով, գերադաս անդամը վերջադաս՝ *երկրորդ Հայք,*

Գ + Գ կաղապարով՝ *աւր յայտնութեան, Դաւիթ արքակաղնի,*

## 2. Հատկացուցիչ հատկացյալի հարաբերություն

Գ ուղղ. հ. + Գ սեռ.հ. կաղապարով, գերադաս անդամը նախադաս՝ *գրուածք Եգիպտոսի, էլք արեգական, երկիր անտեաց, երկիր թաթարաց, պատմութիւն թաթարաց, ճակատ մարտի, ճարակ սրոյ և այլն,*

Գ սեռ. հ. + Գ ուղղ. հ. կաղապարով, գերադաս անդամը վերջադաս՝ *նիկոմիդացուց քաղաք, Թուրքաց աշխարհ,*

Գ ուղղ. հ. + Գ սեռ. հ. + Մ կաղապարով՝ *անապատ Արաբիոյ փոքու:*

Որոշ վերապահությամբ կայուն կապակցությունների մեջ կարելի է դասել *վասն, սակս* նախադրությունների գուգադրումները մի շարք դերանունների հետ՝ *վասն այն, վասն այնորիկ, վասն այսորիկ, վասն որոյ, յայն սակս:*

Կարծում ենք՝ Հեթումի երկի վերլուծական բարդությունները, որոնք աչքի են ընկնում ինչպես գրաբարի, այնպես էլ իրենց հատուկ բառակազմական կաղապարներով, կարող են տեղ գտնել գրաբարի բառարաններում:

## Օգտագործված գրականություն

1. Ալգերեան Մկ., Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1988:
2. Խաչատրյան Լ., Գրաբարի բացատրական բառարան, Ե., 2003:
3. Հայկական համաբարբառ 17, Հեթում պատմիչ, Պատմութիւն թաթարաց, Ե., 1981:
4. Հայկական սովետական հանրագիտարան, հ.6, Ե., 1980:
5. Հովսեփյան Լ., Գրաբարի բառակազմությունը, Ե., 1987:
6. Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառարան, Ե., 2010:
7. Մարգարյան Ա., Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966:
8. Նոր բառգիրք հայկազնեան լեզուի, հ.1, Ե., 1979, հ.2, Ե., 1981:
9. Ջահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989:
10. Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Ս., Միջին հայերենի բառարան, Ե., 2009:

Хачатрян Офелия, Мурадян Анаит - Аналитические осложнения в труде историографа Етума "История татар". – Полагаем, что составные слова в труде историографа Етума, которые выделяются эффективными словообразовательными конструкциями древнеармянского языка (грабара), а также словообразовательными особенностями, присущими им, могут обогатить армянский язык научной терминологией и появиться в словарях древнеармянского языка.

«ԽԱՂՈՂ» ՀԱՄԿԱՅՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԱՅԻՆ  
ԴԱՇՏԻ ՀԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՁ\*

Հովհաննիսյան Լավրենտի  
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Հնագիտական տվյալները հաստատում են, որ Հայաստանը եղել է ինչպես վայրի խաղողի, այնպես էլ խաղողի ընտանեցման հիմնական տարածք: Եղեգիս գետի վերին հոսանքներում հայտնաբերված խաղողի բրածո տերեւների դրոշմները 4-5 միլիոն տարվա վաղեմություն ունեն, իսկ Վաղարշապատից ոչ հեռու գտնվող Առատաշենի նեոլիթյան բնակատեղից հայտնաբերված գտածոները թվագրվում են Ք.ճ.ա. Չ. հազարամյակի առաջին կեսով<sup>1</sup>: «Մշակովի խաղողի տեղական տեսակների բուծման հնագույն կենտրոն է եղել Արարատյան դաշտը: Այդ մասին են վկայում Թեյշեբախնի քաղաքի (Կարմիր բլուր) գինու պահեստներից հայտնաբերված խաղողի կորիզները: Կարմիրբլուրյան եւ ժամանակակից խաղողի կորիզների ձեւաբանական ընդհանրությունները ցույց են տալիս, որ Արարատյան դաշտի ներկայիս խաղողի տեսակները Ք. ճ. ա. է. դարում Թեյշեբախնիում մշակվող խաղողի ժառանգներն են»<sup>2</sup>:

Վերջերս «Արենի-1» քարայրում հայտնաբերված նյութերը հաստատում են, որ ոչ միայն խաղողի մշակությունը, այլև գինեգործությունը զարգացման բարձր մակարդակ է ունեցել արդեն Ք. ճ. ա. Ե. հազարամյակի վերջերից:

Խաղողի, խաղողագործական մշակույթի վաղնջական ակունքներ ունենալը տրամաբանորեն ենթադրում է այդ

---

\* «Էջմիածին», 2013 Ա, էջ 86-93:

<sup>1</sup> Տե՛ս Ս. Հարությունյան, Ա. -Քալանթարյան, Հ. Պետրոսյան, Գ. Սարգսյան, Հ. Մելքոնյան, Ս. Հոբոսյան, Պ. Ավետիսյան, *Գինին հայոց ավանադական մշակույթում*, Երևան, 2005, էջ 14:

<sup>2</sup> Անդ, էջ 18:

հասկացությունների հետ կապված հնագույն անվանումների գոյություն, որը եւ հաստատվում է մատենագրական տվյալներով, այդ անվանումների ստուգաբանություններով: Նկատի ունենք խաղողենու եւ խաղողի զանազան տեսակների, նրանց մասերի բազմաթիվ անվանումները, որոնց մի մասը հ.-ե. ծագում ունի, մյուսները հին լեզուներից անցած բառեր են: Դրանց պետք է հավելել գրաբարյան մատենագրության մեջ չվկայված, բայց բարբառներում առկա մի շարք բառեր, որոնք պետք է ներառել հայերենի հնագույն բառաշերտի մեջ:

Այս հոդվածում նման կարգի բոլոր բառերին անդրադառնալը նպատակահարմար չենք համարում. կնշենք միայն մի քանիսը, որոնք հետաքրքրություն են ներկայացնում կիրառության ժամանակաշրջանի, բառիմաստի, ստուգաբանության եւ բառաքննական նոր դիտարկումների առումով:

*Աղուրի* - Ըստ Արմատական բառարանի՝ «որթի տաշտաթաղ անելու ճիւղը»<sup>3</sup>: Բառարանում այն ստուգաբանված չէ: Հր. Աճառլանը գրում է. «Զարմանալի է, որ բառս պահուած է Այնթապի թրքախօս հայոց մէջ *ախրրա*, *ախուրա* ձեւով... ուրիշ տեղ չեմ պատահած այս հագուագիւտ բառին»: Գ. Ջահուկյանը նույնպէս բառի ծագումը անստույգ է համարում<sup>4</sup> (Պարսկերէնում եւ Ղարաբաղի բարբառում դօրա «խակ խաղող»-ը կապ ունի՝ արդյոք *աղուր*-ի հետ):

Բառի վերաբերյալ ուշագրավ դիտարկում ունի պատմաբան Սարգիս Պետրոսյանը: «Աղուրի-ն արմատակիցն է աղօշ//աղոշ «խաղողի որթի նորածիլ ուղեշ» բառի: Սրանց արմատը ծագում է հ.-ե. \* a1 - «աճել, աճեցնել, սնել» նախաձեւից: Աղուրի բառում արմատին հավելվել են *-ուր* (հմմտ. բլուր, հանուր, մրուր, փշուր եւ այլն) եւ *-ի* վերջածանցները: Վերջինս նաեւ բուսանվանական

---

<sup>3</sup> Տե՛ս Հր. Աճառլան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետեւ՝ Արմ.), հ. 1, Երեւան, 1971, Աղուրի բառահոդվածը:

<sup>4</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Երեւան, 2010, էջ 39:



վերջածանց է»<sup>5</sup>:

Հեղինակի կարծիքով այդ բառն ունի նաև տեղանվանական կիրառություն, որը հայտնի է սեպագիր տեքստերից: «Մ. թ. ա. 713 թ. Ուրարտու ներխուժած Ասորեստանի Սարգոն 2-րդ թագավորը Վանա լճի ավազանում հիշատակում է *Alluria* անունով գետ, իսկ ավելի հարավ... *Alluria* անունով լեռ: Ըստ երեւոյթին, *Alluria* գետը Վանա լճին հարող խաղողաշատ եւ գինեվետ (մինչեւ Մեծ Եղեռնը) գավառներից որեւէ մեկում է գտնվել»<sup>6</sup>:

*Արգատ* - «որթատունկի էտած ճյուղերը»: Բառը գրանցված չէ Հայկազյան բառարաններում: Արմ-ր բնագրային օրինակ չի բերում եւ նշում է բարբառային արքատ ձևը: Գ. Ջահուկյանը հավանական է համարում հ.-ե. Ծագումը \**urəd* «ճյուղ, արմատ»-ից՝ նշելով, որ *այգի*, *գինի*, *որթ*, *արգատ* անվանումները խոսում են խաղողագործության՝ վաղնջահայերին ծանոթ լինելու մասին»<sup>7</sup>:

*Շիւ* - «խաղողի կուտերն ու կեղեր, ճմռած խաղողի մնացորդը»: Բառը բարբառներում ունի նաև «մատղաշ, դալար ճյուղ» իմաստը (Արմ.): Վկայությունը «Գիրք վաստակոց»-ից է (միջինհայերենյան շրջանի): Արմ-ում բառը ստուգաբանված չէ: Հ.-ե. ծագումը հաստատվում է Պ. Բեդիրյանի ստուգաբանությամբ՝ հ.-ե. \**scip* - «գավազան, բարակ ճյուղ»: Այդ արմատի հետ է կապվում եւ *շիւղ*-ը<sup>8</sup>:

*Որթ* - «խաղողի տունկը»: Հաճախական գործածություն ունի գրաբարում, ենթադրելի է նաև վաղնջահայերենյան գործածությունը: Հր. Աճառյանը բառը դիտում է որպես հ.-ե. \**porthu* - «հորթ, երինջ, փոքր երեխա» հայ. *որթ* «հորթ, մոզի» իմաստի զարգացում, այնուհետև գրում. «նշանակութեան զարգացման համար հմմտ. Յատկապէս հյ. *երիեջ*, որ բուն

---

<sup>5</sup> Ս. Պետրոսյան, *Արարատյան լեռ ների հին անունների եւ անվանադիրների մասին*, «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), Երևան, 2010, թ. 3, էջ 224:

<sup>6</sup> Տե՛ս անդ:

<sup>7</sup> Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*, Երևան, 1987, էջ 156, 263:

<sup>8</sup> Պ. Բեդիրյան, *Մի քանի ստուգաբանություններ*, ՊԲՀ, 1962, թ. 2, էջ 144:

նշանակում է «հորթ, կովի ձագ (եզր)», բայց Երեւ. նաեւ «խ ա դո դի որթի մատ»: Նման անցում կա եւ հունարենում<sup>9</sup>:

Անկախ նախաձեւերի բնույթից՝ բոլոր դեպքերում բառի բնիկ հայերէն լինելը կասկածից դուրս է:

*Ուռ* - Ըստ Նոր հայկազյան բառարանի՝ «Բարունակ որթոյ. շառաւիղ. ուղեշ. ընձիւղ. ոստ որեւէ տնկոյ»<sup>10</sup>: Արմ-ր «խաղողի որթի մաս, ճյուղ» իմաստը չի առանձնացնում, այլ ընդհանրական «ճիւղ, ընձիւղ»: ՆՀԲ-ն ավելի ճիշտ է բառի բացատրության հարցում, եւ բերված վկայությունների շարքում հենց առաջին օրինակներում *ուռ*-ը «խաղողի որթի մաս, ճյուղ» իմաստով է: «Ես եմ որթ եւ դուք ուռ», «հատին անտի ուռ որթոյ եւ ողկոյզ մի խաղողոյ ի նմա», «ուռք ողկուզաբերք ճշմարիտ որթոյն»:

Գ. Ջահուկյանը հնարավոր է համարում բառի հնդեւրոպական ծագումը<sup>11</sup>:

Կան մի շարք բառեր, որոնք Արմ-ում ստուգաբանված չեն:

*Տոլի* - «խաղողի որթ»: Վկայությունները միջինհայերենյան շրջանից են: Ենթադրվում է կապը ուրարտերէն սժսլի-ի հետ: Վերջինս Ղափանցյանը մեկնում է «խաղող», Մելիքիշվիլին եւ Ղյակոնովը՝ «խաղողի այգի»<sup>12</sup>: Գ. Ջահուկյանը նկատում է. «Եթէ որոշ տարածքներում ուրարտական ձայնեղները հայերենում արտացոլվել են ինչպէս խուլեր, ապա հնարավոր է հայ. *տոլի* (տոյլի) «խաղող բառի ծագումը ուրարտ. սժսլի (սլժի «խաղողի այգի, խաղող» բառից)»<sup>13</sup>:

Իր «Մտուգաբանական բառարան»-ում հեղինակը փաստորեն մերժում է այդ կապը. «Հազիվ թէ կապ ունենա ուրարտ. *uduli (uldi)* «խաղողի այգի» բառի հետ (փոխառություն). հմմտ. նաեւ ուտիերէն *tul* «խաղող» (էջ 731):

<sup>9</sup> Գ Տե՛ս Արմ., Որթ բառահոդվածը: Գ. Ջահուկյանը նշում է հ.-ե. \*ortho - ձեւը (1987, էջ 141):

<sup>10</sup> «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, Երեւան, 1981, *Ուռ* բառահոդվածը (այսուհետեւ՝ ՆՀԲ):

<sup>11</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. բառարան, էջ 751:

<sup>12</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 428:

<sup>13</sup> Անդ, էջ 432:

*Տորր* - Ըստ ՆՀԲ-ի՝ «շառաւիղ բուսոց եւ տնկոց. մանաւանդ բազուկ որթոյ խաղողոյ»: Գ. Ջահուկյանը բերում է բառի խեթալուվական համապատասխանները<sup>14</sup>, իսկ «Ստուգաբանական բառարան»-ում հնարավոր է համարում տարբ բառի ձայնդարձային տարբերակը հ.-ե. \**der*- «քերթել, ճեղքել» արմատից (էջ 734):

*Վազ* - «խաղողի վազ, որթ»: Արդի հայերենում գործածական այս բառը վաղ գրաբարյան շրջանից վկայություն չունի: Առաջին վկայությունը թերեւս Վարդան Այգեկցուց է. «Եւ կտրեց զխաղողին

վազն եւ կուծն լցեց զինով»<sup>15</sup>:

Հր. Աճառյանը *վազ*-ը համարում է *վազել* «ցատկել, դուրս ցատկել» բայահիմքի իմաստային զարգացում՝ համեմատելով ռուս. *побег* «զլխաւոր արմատի կողքից ծլած երկրորդական ճիւղեր, որ յառաջանում է» *побег* «փախչիլը, փախուստ», *бегать* «վազել, փախչել» բայից: Իմաստային այդ կարգի անցում կա եւ գերմաներենում<sup>16</sup>:

*Վազ(ել)*-ը համարում են հին իրանական փոխառություն՝ հ.-ե. \**veg*՝ հ.-ից<sup>17</sup>: Եթե բացառելի է հ.-ե. նշված արմատից հայ. *վազ*-ի անմիջական կապը, ապա գոնե *վազ* «խաղողի որթ»-ը պետք է համարել հայերենի նորամուծություն:

Ինչպէս արդեն նշել ենք, այս իմաստային դաշտին վերաբերող բազմաթիվ բառեր կան եւ բարբառներում: Անդրադառնանք մի քանիսին, որոնք, մեր կարծիքով, որոշակի

---

<sup>14</sup> Անդ, էջ 320:

<sup>15</sup> Տե՛ս Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, Երևան, 2009, էջ 724:

<sup>16</sup> Տե՛ս Արմ., *Վազ* բառահոլովածը:

<sup>17</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. բառարան, էջ 701: Որպէս իմաստային զուգահեռ՝ հեղինակը բերում է *նստ* եւ *նստուն* բառերը:

<sup>18</sup> Նյութը քաղել ենք հիմնականում Ստ. Մալխասյանցի «*Հայերեն բացատրական բառարանից*», հ. 1-4, Երևան, 1944:

հետաքրքրություն են ներկայացնում բառաձևերի, գործածության վաղ ակունքներ ունենալու, նախնական իմաստների առնչության եւ մի շարք այլ առումներով<sup>18</sup>:

*Բանակ* - «այգիների թմբերի շարքը, որոնց վրա տնկում են վագերը»: Կարելի է դիտել *բանակ* «մարդկանց խումբ, շարք»-ի իմաստային զարգացում, որը կատարվել է հայերենում:

*Գաւազան* - «որթատունկի մատ կամ վագ, որ նոր են տնկում՝ փոս» (Արմ.): Ղարաբաղի բարբառի կվա՛զան ձևը հուշում է, որ բառը գործածության հին ակունքներ ունի:

*Թանազ* - «խաղողի տունկ, որթ, վագ»: Մտ. Մալխասյանը փորձում է կապել պրսկ. *tane-* «ծառի բուն»-ի հետ: Եթե կապը, իրոք, ճիշտ է, ապա հայերենի բառաձևը ավելի հին է, եւ փոխառությունը պետք է կատարված լինի միջինիրանական լեզուներից (միջինիրանական լեզուների *ak(ag)* ածանցը նոր պարսկերենում հիմնականում փոխվում է *e*-ի (*nāmak-name...* եւ այլն):

*Թելեկ* - Մտ. Մալխասյանը մեկնում է. «Խաղողի որթի սարփինայ, որի վրա որթի թելերը գալիս հանգչում են»: Բառի երկու բաղադրիչներն էլ *h.*- ե. ծագում ունեն:

*Խնդողնը* - «խաղողի տեսակ»: Աճում է հիմնականում Արցախի տարածքում: Ամենայն հավանականությամբ խընդ/խինդ արմատը *h.*- ե. ծագում ունի<sup>19</sup>:

*Կռեկ* - «վայրի խաղողի մի տեսակ, կլորիկ, սեւ գույնով»: Ս. Պետրոսյանը բառի առաջին բաղադրիչը համարում է հայերեն *կռւռ* արմատը՝ առնչելով ուրարտ. *Quria* տեղանվան հետ. «Այս տեղանունը... անխզելի կապի մեջ է... տնտեսության առաջատար ճյուղերից մեկն հանդիսացող խաղողագործություն-գինեգործության հետ: Տեղանունը տրոհվում է *qur-* եւ - *ia* բաղադրիչների: Սրանցից առաջինի համարժեքն է հայ. \* կռւռ - արմատը, իսկ երկրորդինը՝ -ի վերջածանցը: Ըստ այսմ, *Quria*

---

<sup>19</sup> Տե՛ս Արմ., *Խինդ* բառահոդվածը:

տեղանվան համարժեքն է հայերեն կուռի բառը, որը ծածկաբար նշանակում է «գինի»<sup>20</sup>:

*Շալ* - «խաղողի ճիւղ»: Նույն արմատի տարբերակն է շաղ-ը «մատղաշ ճյուղ»: Գ. Ջահուկյանը հնարավոր է համարում հ.- ե. ծագումը<sup>21</sup>:

*Քրնթեռնը* - «խաղողի փոքր ողկույզ՝ հատիկները թափված»: Գործածական է Ղարաբաղի բարբառում: Գ. Ջահուկյանը բացատրելի չի համարում հ.- ե. ծագումը<sup>22</sup>:

Այժմ *խաղող* բառի մասին: Այդ բառի ծագումը պարզ չէ: Հստակ է մի բան, որ այն հ.- ե. ծագում չունի, կամ հ.- ե. ծագումը փաստարկված չէ: Բնականաբար, հարց է առաջանում. լինելով խաղողի մշակության եւ խաղողագործության, գինեգործության հազարամյակների վաղեմության տարածք՝ ինչո՞ւ հայերենը չունի խաղող հասկացության հ.- ե. (բնիկ հայերեն) անվանումը:

Մեր դիտարկումները թույլ են տալիս եզրակացնելու, որ վաղնջական ժամանակներում նման անվանումներ եղել են եւ մատենագրության մեջ պահպանվել են: Նախքան դրանց անդրադարձնալը՝ նկատենք մի իրողություն եւս: Ինչքան էլ զարմանալի է, գրաբարում *խաղող* բառը հաճախական չէր, թեեւ առաջին վկայությունները Ե. դարից են: Բառը չեն գործածել Կորյունը, Եզնիկը, Բուզանդը, Եղիշեն, Խորենացին: Ազաթանգեղոսը եւ Փարպեցին վկայել են մեկական օրինակ: Հետիինգերոդդարյան հեղինակներից *խաղող* բառը չեն վկայել Սեբեոսը, Ղեւոնդը, Դրասխանակերտցին, Ասողիկը:

Աստվածաշնչում *խաղող*-ը վկայված է 25 անգամ: Ձեռքի տակ չունենալով Ս. Գրքի հունարեն համաբարբառը՝ խաղող բառի գործածությունները համեմատել ենք Աստվածաշնչի ռուսերեն

---

<sup>20</sup> Ս. Պետրոսյան, *Գնունի նախարարական տոհմի եւ գինու պաշտամունքի շուրջ*. ՊԲՀ, 1999, թ. 2-3, էջ 176:

<sup>21</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Երևան, 1972, էջ 314:

<sup>22</sup> Անդ:

համաբարբառի հետ: Վերջինում արձանագրված է 42 կիրառություն<sup>23</sup>:

Բերենք երկու օրինակ, որտեղ հայերեն բնագրում խաղող բառը չկա: «Կթեցին զայգիս իւրեանց» (Դատ. Թ. 27), ռուս. *«собирали виноград»*: «Կթեցեք, կթեցեք, ճոաքաղ արարեք զմնացորդսդ Բւրայելի» (Երեմիա 9. 9), ռուս. *«до конца доберут остаток Израиля, как виноград, работай рукою твоею, как собиратель винограда»*: Այս կարգի օրինակների «անհամապատասխանությունը» բացատրելի է. հայերենում «խաղող» իմաստը «թաքնված է» *այգի, ճոաքաղ* եւ նման այլ բառերում, որոնք զուտ «խաղողային» հասկացություններ են:

Ուշադրություն դարձնենք մի փաստի եւս: Հայերենում պտղատու (մրգատու) ծառանունները կազմվում են -ի կամ -ենի ածանցներով (արմաւենի, թզենի, նշենի...): Գրաբարում խաղողենի վկայված չէ: ՆՀԲ-ն բերում է մեկ վկայություն միջինհայերենյան շրջանից. «Տայ զհովութիւն քափուրի, որ ի հնդիկս ի մեջ խաղողենոյ հանեն»:

*Խաղողենի, խաղողի* չկա նաեւ բարբառներում (համենայնդեպս արձանագրված չէ «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ում): Կարելի է հավաստել, որ նախագրաբարյան շրջանում (մթազնված ձեւով նաեւ գրաբարում) *խաղող* հասկացությունն են արտահայտել հետեւյալ բառերը.

1. *Գինի* - նախ նշենք, որ հ. - ե. եւ ոչ հնդեւրոպական մի շարք լեզուներում գինի եւ խաղող հասկացությունները նույն արմատով կազմություններ են. հմմտ. ֆրանս. *vin* «գինի», *vine'e* 1. «խաղողի բերք», 2. «պտղատու ճյուղ», հին սլավ. *вино* «գինի», եւ «խաղողի որթ», ռուս. *вино* «գինի» - *виноград* «խաղող» եւ այլն:

Գրաբարի բառարանները գինի «խաղող» կամ «խաղողենի» իմաստը չեն արձանագրում: Այս իմաստները հաստատող մատենագրական անհերքելի տվյալներ նույնպես չկան. բնականաբար պետք է հենվենք երկրորդական թվացող փաստերի վրա:

---

<sup>23</sup> Տե՛ս «Симфония к синодальному изданию Библии», Стокгольм, 1995:

ա) *Գինի* բառը ՆՀԲ-ն մեկնում է «Բեր որթոյ կամ այգւոյ. արիւն խաղողոյ. քաղցու կամ խազմուզ ինքնին եռացեալ...»: Ուշադրության արժանի է «Բեր որթոյ կամ այգւոյ» բացատրությունը, որից տրամաբանորեն ենթադրելի է՝ այգու կամ վազի բերքը գինին չէ, այլ խաղողը:

բ) Ե. դ. մատենագրությունից քաղված հետեյալ օրինակներում գինին դարձյալ վերաբերում է *խաղող* հասկացությանը. «Եւ զամենայն արեւելեան եւ զհիւսիսային եւ զհարաւային կողմանս քաղաքին զարդարէ դաստակերոք, եւ սաղարթիք ծառոց վարսաւորաց, զանազանեալք ի պտուղս եւ ի տերեւս եւ բազում բազմաբերս եւ գինեբերս ի նմա տնկեաց ովիտ» (Խոր., I, Ժ Զ. 53)<sup>24</sup>:

*Գինեբեր* բառը վստահորեն կարելի է փոխարինել «խաղողաբեր»-ով. այդ է հուշում նաեւ զանազանեալ ի պտուղս կապակցությունը: Նմանաբնույթ օրինակ ունի Եղիշեն. «Չորացան ազագեցան բուրաստանք, ծաղկոցաց նոցա, եւ տաշտախիլ եղեն որթք գինեբեր այգեաց նոցա» (Եղիշե, 201)<sup>25</sup>: Մեկ օրինակ էլ բերենք Աստվածաշնչից. «Եւ զամենայն պտուղ իւղոյ եւ զամենայն պտուղ գինւոյ եւ ցորենոյ, զոր տացեն Տեառն զպտուղ իւրեանց, քեզ ետու զայն» (Թիւք Ժ Ը . 12), ռուս. «Все лучшее из елєя и все лучшее из винограда и хлеба, начатки их, которые они дают Господу, я отдал тебе»:

Չանդրադառնալով *գինի* բառի ստուգաբանությանը (բնիկ հայերեն, հ.- ե. ծագման փաստը անառարկելի պետք է համարել)՝ ենթադրություններ կան նախնական *գին* արմատի գոյության մասին. գրաբարյան որոշ կազմություններ, եթե դրանք ձեռագրական աղավաղումներ չեն, այդ են հաստատում. *գինոս*

---

<sup>24</sup> Մովսէս Խորեկացի, *Պատմութիւն Հայոց*, քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Մ. Յարութիւնեանի, նմանահանութիւն, լրացումները Ա. Սարգսեանի, Երեւան, 1991:

<sup>25</sup> «Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց. Աշխատութեամբ՝ Ե. Տէր-Մինասեան, Երեւան, 1957:

«գինու հոտ ունեցող», *գինություն* «գինարբություն», *գինարբու, գինաւէտ* (կա եւ գինեւէտ):

*Գինի* բառի մէջ *-ի* ածանցի գոյությունը ընդունում է եւ Գ. Ջահուկյանը. «Վաղնջահայերենում այն եղել է դեռեւս գործուն եւ արդյունավետ ածանց, հին հայերենում դադարել է արդյունավետ լինելուց, թեեւ պահպանվել են ածանցելի եւ ածանցյալ հիմքերի հակադրություններ. ա) գոյականներ՝ ալի-ք, աղաւնի, աղ-ատ-իք, այգի, անդի... գինի»<sup>26</sup>:

2. *Որթ* բառի ստուգաբանությանը արդեն անդրադարձել ենք, ինչ վերաբերում է բառիմաստին, ապա ՆՀԲ-ն եւ Առձեռն բառար<sup>27</sup> «խաղող» իմաստը չեն նշում, իսկ Արմ.-ը Գ. Մագիստրոսից քաղված «ճաշէին յորթ, ի հաց եւ ի կոզի» նախադասության մէջ իրավացիորեն արձանագրում է *որթ* «խաղող» իմաստը: Այդ իմաստը նշում է եւ Գ. Ջահուկյանը<sup>28</sup>:

Ս. Գրքից քաղված հետեւյալ օրինակում *որթ*-ը դարձյալ «խաղող» իմաստով է գործածված. «Եւ եղիցին ստինք քո իբրեւ զողկոյս որթոյ» (Երգ. է. 8), ռուս. « И груди твои были бы вместо кистей винограда»:

3. *Այգի*-ն նախապէս ունեցել է միայն «խաղողի այգի» իմաստը: Արմ.-ում *այգի*-ն դիտվում է որպէս «խաղողային» հասկացություն. 1. «խաղողի այգի», 2. «խաղողի որթ»:

«Արդի հայերենի մէջ, - գրում է Հր. Աճառյանը, - արեւմտեան գրականում *այգին* պահել է իր բուն նշանակությունը, իսկ արեւելեան գրականում նշանակում է ընդհանրապէս «պարտէզ»<sup>29</sup>:

*Այգի* բառի նախնական իմաստն ակնառու է դառնում հատկապէս Ս. Գրքի հայերեն եւ այլ լեզուների որոշ հատվածների համեմատությունից. հմմտ. «Եւ զանդս ձեր եւ զայգիս ձեր եւ զձիթենիս ձեր զազնիս՝ առցէ» (Ս. Թագ. Ը. 14), ռուս. «И поля ваши

<sup>26</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 231:

<sup>27</sup> «Առձեռն բառարան հայկազնեան լեզուին», Վենետիկ, 1865:

<sup>28</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 184:

<sup>29</sup> Տե՛ս Արմ., *Այգի* բառահոգովածը:



*и виноградные и масличные сады ваши лучшие возьмет*: «Երկիր... այգեաց հացի, երկիր ձիթենեաց իւղոյ եւ մեղու» (Դ. Թագ. Ժ Ը. 32): «Եհար կարկտի *զայգիս* նոցա եւ զթզենիս նոցա եղեմամբ» (Սաղմ. Հէ. (ՀԸ.) 47), ռուս.՝ «Виноград их побил градом и сикоморы их льдом»:

Ուշադրության արժանի է մի հանգամանք եւս. այլ տեսակի այգիները (ոչ խաղողի) գրաբարում արտահայտվում են բուրաստան, դրախտ, պարտեզ... բառերով. «Եւ եհան արձակեաց զնա... ի դրախտէ անտի» (Օննդ. Գ. 23):

«Եւ իբրեւ զբուրաստանս առ զետովք» (Թիւք ԻԴ. 6): Ընդգծված բառերի հուն. համապատասխանը Παράδεισος-ն է, իսկ ռուս. сады (առանց виноградный ածականի):

ԺԳ. դարում վկայված ներքոհիշյալ օրինակում այգին հաստատապես «խաղող» իմաստն ունի. «Ի միում տեղոջէ ջամբէ բնութիւնն այգոյ քաղցրութիւն եւ լուծութիւն»<sup>30</sup>: Բնագրի ռուսերեն թարգմանությունը «*Природа из общего источника дает винограду сладость*»<sup>31</sup>:

Մտ. Մալխասյանի բառարանում վկայված *այգեռուպ* «խաղողի հյութից պատրաստված դոշաբ, ռուպ» բառի *այգ(ի)* բաղադրիչը «խաղող» իմաստն ունի:

*Այգի* բառով գրաբարում առկա են տասնյակ կազմություններ, որոնք վերաբերում են «խաղող» հասկացությանը. *այգաւետ, այգեգործ, այգեգործութիւն, այգեթաղ, այգեկիթ(ք), այգեկութ(ք), այգեստան, այգեւետ* եւ այլն:

*Այգի* բառի հ.-ե. ծագումը վիճարկելի չէ<sup>32</sup>: Հր. Աճառյանը այգի բառի արմատը համարում է \* այգ «խաղող», իսկ -ի-ն ծառանունների բնորոշ անուն: Այս ենթադրությունները հաստատվում են վերը բերված եւ նման օրինակներով: Կարելի է

---

<sup>30</sup> Տե՛ս Բշոյս, Գիրք ի վերայ բնութեան, աշխատ.՝ Ս. Վարդանյանի, Երեւան, 1979, էջ 89:

<sup>31</sup> Անդ:

<sup>32</sup> Տե՛ս Արմ., *Այգի* բառահոդվածք. Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, էջ 48:

ենթադրել, որ վաղնջահայերենում *այգ(ի), որթ, գին(ի)* բառերը ունեցել են եւ «խաղող» իմաստը:

Հ.-ե. ծագումով այդ բառերի «խաղողային» բնույթը կողմնակիորեն կարող է հաստատել Հայաստանի տարածքում խաղողագործության եւ գինեգործության զարգացման հազարամյա ակունքների հավաստիությունը

Կարելի է ենթադրել նաեւ, որ «խաղող» իմաստով գործածված *այգ(ի), որթ, գին(ի)* բառերը վաղնջահայերենում եղել են հայերենի տարածքային տարբերակներ կամ գործառել են ժամանակագրային տարբեր կտրվածքներում:

*Խաղող* բառը, ըստ երեւոյթին, հայերենում գործառել է ավելի ուշ՝ աստիճանաբար դառնալով համապատասխան հասկացության հիմնական արտահայտիչը գրաբարում եւ հայերենի հետագա բոլոր լեզվավիճակներում:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ 5-ՐԴ Դ. ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԻ ՈՐՈՇ  
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ\*

Հովհաննիսյան Լավրենտի  
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Հայ մատենագրության մեջ կան բազմաթիվ բառերի (հիմնականում օտար) մեկնություն-բացատրություններ, որոնք կարևորվում են ինչպես պատմաբանասիրական, այնպես էլ լեզվաբանական քննության առումով:

Գիտական ստուգաբանություն կարելի է համարել Մովսես Խորենացու «Հայոց պատմության»<sup>1</sup> մեջ Շապուհ անձնանվան բացատրությունը. «Եւ կալաւ զաշխարհս մեր... ամս քսան. և վեց և յետ նորա որդի նորին, որ անուանեցան Շապուհ, որ լսի Արքայամանուկ» (II, ՀԷ):

Բառի բաղադրիչներն են իրան. *isah* «արքա» և *puhr* (*puh*) «որդի»: Իրանական *puhr* ձևը ավելի հին է, քան *puh*-ը, նշանակում է՝ Խորենացու ապրած դարաշրջանում արդեն միջին իրանական լեզուներում էլ գործածական էր *puh* ձևը:

Խորենացու մեկնությունը ուշագրավ է նաև մեկ այլ առումով. արքա-յամանուկ բառում *մանուկ* նշանակում է «որդի»: Այդ իմաստը Առձեռն բառարանում<sup>2</sup> արձանագրված չէ: Ամենայն հավանականությամբ այդ իմաստով բառը առաջին անգամ օգտագործել է Խորենացին, այսինքն՝ նրա «ստեղծածն» է, կամ էլ այն գործածական է եղել հայերենի այն տարածքային տարբերակում, որին ծանոթ է եղել Խորենացին: Որ *մանուկ*

---

\* Գիտական նյութերի ժողովածու (Հանրապետական գիտաժողովի զեկուցումների ժողովածու՝ նվիրված պրոֆեսոր Գ. Խաչատրյանի ծննդյան 60-ամյակին), Վանաձոր, 2013, էջ 114-120:

<sup>1</sup> «Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց». քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Մ. Հարությունյանի, աշխարհաբար թարգ. և մեկնաբանությունները Մտ. Մալխասյանի, Ե., 1981:

<sup>2</sup> Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865:

«որդի»-ն առաջինը վկայել է Խորենացին, հաստատվում է և այլ վկայությամբ, որը գտնում ենք «Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը»<sup>3</sup> գրքում. «Մե՛ծ թագաւոր Դարեհ, այս դեսպանս նոյն ինքն Ալեքսանդրոս Մակեդոնացի Փիլիպոսի մանուկն է»: Նշված գիրքը, արդեն ապացուցված է, որ թարգմանել է Խորենացին:

Գրաբարի բառարանները արձանագրում են նաև *մանուկ* «զինվոր» իմաստը 5-րդ դ. ոչ թարգմանական գրականության մեջ թերևս առաջին վկայությունը դարձյալ Խորենացունն է. «Իսկ ի լինել մարտին՝ հարկանի զօրն Արայի, մեռանի և Արայ ի պատերազմին ի մանկանցն Շամիրամայ» (I, ԺԵ): Սո. Մալխասյանը թարգմանել է. «Արան էլ ընկնում է պատերազմի մեջ Շամիրամի կտրիճներից»: Ավելի ճիշտ թարգմանությունը կլիներ՝ *զինվորներից* կամ *զինվորների կողմից*: Կան նաև այնպիսի մեկնություններ, որոնք ճշգրտման կամ պարզաբանման կարիք ունեն: Անդրադառնանք Ղազար Փարպեցու երկու վկայությանը. «Մի ոմն յՈստանեայ տանեն, որում անուն Չանդադան, սերմն ժանդ, որդի անօրենութեան»<sup>4</sup>: Բացասական այս հատկանիշները Փարպեցին վերագրում է մեկին (ըստ երևույթին դավանավորիս մի հայի), որը Վարդան սպարապետի՝ պարսից դեմ ապստամբելու գաղտնի որոշումը հայտնել էր Վասակին:

Չանդադան անուն Եղիշեի գրքում չկա: Երևի այդ անունով մարդ չի էլ եղել: Կարծում ենք «որում անուն Չանդադան» ասելով Փարպեցին նկատի չունեի այդ դավաճանի իրական անձնանունը, այլ ինքն է հորինել որպես նվաստացուցիչ մականուն՝ օգտագործելով պարսկերեն *zandage* «հերձվածող, հավատուրացություն» բառը:

---

<sup>3</sup> Պատմություն Ալեքսանդրի Մակեդոնացու. աշխատասիրությամբ Համիկ Սիմոնյանի, Ե., 1989, էջ 402:

<sup>4</sup> Ղազարայ Փարպեցու Պատմություն Հայոց. թուղթ առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը Գ. Տեր-Սյրտչյանի և Սո. Մալխասյանցի. աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բագրատ Ուլուբաբյանի, Ե., 1982, էջ 140:

Հասարակ անունը հանիրավի հատուկ անուն է դիտվում նաև հետևյալ վկայության մեջ. «Սկսեալ այնուհետև մի ըստ միոջէ պատմել կապելոց նախարարացն Հայոց երանելի այրն Աստուծոյ Խուժիկն, զոր անուանեալ յասմ հետէ Խուժիկ՝ ծանրանամ, և զանուն սքանչելոյն ոչ ոք հոգացեալ պատմեաց մեզ.» (250): Փարպեցու գրքի այս և այլ հրատարակություններում Խուժիկը մեծատառով է, թարգմանիչն էլ բառը ներառել է գրքի վերջում տրված անձնանունների ցանկում (էջ 522): Որ Խուժիկը անձնանուն չէ, ակնհայտ է դառնում հենց վերոհիշյալ վկայությունից. «...եւ զանուն սքանչելոյն ոչ ոք հոգացեալ պատմեաց մեզ»:

*Խուժիկ* նշանակում է «խուժաստանցի, ծագումով Խուժ գավառից», որն ի դեպ նշում է և Փարպեցին գրքի հետևյալ հատվածում. «Եւ լուեալ զայս առն միոյ վաճառականի, որ էր ազգաւ Խուժիկ» (226):

Այս անձնավորության մասին տեղեկություններ է հաղորդում և Եղիշեն. «Բայց այր մի խուժիկ ի զօրացն արքունի, որ ծածուկ ունէր զքրէստոնէութիւնն...», «...այս երանելի խուժիկս, որ արժանի եղև ի ծածուկ սպասաւոր լինել սրբոցն...»<sup>5</sup>:

Եղիշեի գրքում, նաև աշխարհաբար թարգմանության մեջ՝ *խուժիկ* իրավացիորեն գրված է փոքրատառով:

Այդ անձնավորությունը բազմիցս եղել էր Հայաստանում, թերևս գիտեր նաև հայերեն, դավանում էր քրիստոնեություն, գործակցում և օգնում է կալանավորված հայ նախարարներին, գաղտնի հավաքում անապատում նահատակված հայ քահանաների ոսկորները և պատվով թաղում:

Ի՞նչ նկատի ունէր Փարպեցին, երբ գրում էր, թե. «զոր անուանել յայսմ հետէ Խուժիկ՝ ծանրանամ»: *Ծանրանալ* գրաբարում ունի նաև «դժվարանալ, նեղվել, չկամենալ» իմաստը:

---

<sup>5</sup> Եղիշեի, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին. ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Ե., 1957, էջ 160, 182:

<sup>6</sup> Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին. թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տէր-Մինասյանի, Ե., 1989:

Փարպեցին դժկամում, վատ է զգում այդ հայասեր մարդուն իր էթնիկական ծագումով կոչել, որովհետև Խուժաստանի բնակիչները բռի, վայրենի մարդկանց համբավ ունեին և *խուժ* արմատով հենց իր ապրած դարաշրջանում գործածական էին մի շարք բառեր՝ *խուժ*, *խուժադուժ*, *խուժական*, *խուժան*՝ «վայրենի, բարբարոս» իմաստներով:

Մի շարք օտար բառերի մեկնություն-թարգմանություններ ունի նաև Եզնիկ Կողբացին: Առավել ուշագրավը Ջրուան հատուկ անվան բացատրությունն է. «Եղծ քէշին պարսից» գրքում, որը սկսվում է հետևյալ ձևակերպումներով՝ «Մինչ չն բնաւ էր ինչ, ասեն, ոչ երկինք և ոչ երկիր և ոչ այլ ինչ արարածք՝ որ յերկինս կամ յերկրի, Ջրուան ոմն անուն էր, որ թարգմանի բախտ կամ փառք: Ձհագար ամ յաշտ արար՝ զի թերևս որդի մի լինիցի նմա<sup>7</sup>: Ջրուան հատուկ անունը արձանագրված նաև այլ մատենագիրների գործերում՝ առանց «ստուգաբանական» փորձի, առանց Եզնիկի ստուգաբանության հիշատակության:

Ընդունելի է համարվում Հյուբշմանի ստուգաբանությունը, ըստ որի իրան. *zrv*©n «ժամանակ»-ը աստծուն վերագրելով դարձել է հատուկ անուն<sup>8</sup>: Իրանական դիցաբանության մեջ Ջրվանը անասահման ժամանակի աստվածն է, որին տեղյակ էր Եզնիկը և փորձում է այն ժխտել. «Ջրուան չէր մշտնջենաւոր, այլ յումեքէ եղեալ» (էջ 106):

Ինչո՞ւ է Եզնիկը Ջրուանը թարգմանում *բախտ* կամ *փառք*: Պրոֆ. Ա. Աբրահամյանը գրում է. «Հայտնի չէ, թե Եզնիկն ինչ աղբյուրի հիման վրա է նշում «բախտ կամ փառք» իմաստները» (էջ 314, ծան. 233):

Ջրվանին առնչվող *բախտ* հասկացությունը Եզնիկը շեշտում է մի քանի անգամ՝ բնականաբար հանդես գալով քննադատի դերում. «Այլ թէ և բախտ ևս էր՝ որպէս ասենն Ջրուան, ապաքէն

---

<sup>7</sup> Եզնիկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց. թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Ե., 1994, էջ 92:

<sup>8</sup> Այդ բացատրությունը ընդունում է և Հ. Աճառյանը (տե՛ս «Հայոց անձնանունների բառարան», հ. 2-րդ, էջ 219): 8

ուրուք բախտ էր և ո՞վ էր արդեօք՝ որ բախտն էր: Ձի բախտ անձնատր ինչ չէ, այլ դէպք աջողութեան» (էջ 106):

Զրադաշտական կրոնի *բախտ* հասկացությանը անդրադարձել է և Եղիշէն՝ անշուշտ ծանոթ լինելով Եզնիկի երկին: Միհրներսեհ Վզուրկ հրամանատարը հայոց մեծերին ուղղված նամակում արհամարհում է քրիստոնեական կրոնի որոշ դրույթներ՝ բնականաբար հակադրելով գրա- դաշտականին. «Մի՛ հաւատայք առաջնորդացն ձերոց, զոր նացրածիսդ անուանէք. քանզի յոյժ են իսբերայք. զոր բանիւք ուսուցանեն, գործովք ոչ առնուն յանձն. ծաղր առնեն զանուն բախտի և զփառաւորութիւն յոյժ այպանեն...»<sup>9</sup> (ընդգծումը մերն է՝ Լ.Ն.): *Չանուն բախտի* ասելով՝ Միհրներսեհը նկատի ունի Զրվանին: Երվանդ Տեր-Մինայանը հիշյալ հատվածը թարգմանել է. «...ծաղրում են բախտի անունը և խիստ պախարակում են փառավորությունը» (էջ 53): Մեր կարծիքով «անունը» այստեղ իր առաջնային իմաստով է թարգմանված: ՆՀԲ-ն *Անուն* բառահոդվածում նշում է նաև «փառք, համբաւ, հոչակ, փառք և պարծանք» իմաստները: Ուրեմն՝ պետք է թարգմանել «ծաղրում են բախտի (իմա՝ Զրվանի) հոչակը (համբավը, փառքը)»:

Ի հակադրություն քրիստոնեության՝ գրադաշտականությունը առաջնային դեր է հատկացնում ճակատագրին. «Մարդիկ ճակատագրով են մեռնում, թե՞ առանց ճակատագրի» հարցադրմանը Եզնիկը պատասխանում է. «Նախ պիտի իմանանք, թե ի՞նչ է ճակատագիրը, և «ճակատագիր» հասկացությունը որտեղից է տարածվել աշխարհում: Մահվան համար սահմանված ճակատագիր Աստվածատուր գրքերում ոչ մի տեղ չենք գտնում» (Եզն., 125):

Մի հանգամանք ևս. գրաբարում բախտ, ճակատագիր և հրաման բա-ռերը հոմանիշներ են: Եզնիկի գրքում *բախտ* բառի բոլոր գործածությունները գրադաշտական կրոնի հերքման

---

<sup>9</sup> Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին. թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինայանի, Ե., 1989, էջ 52:

համատեքստում են՝ առնչվելով հիմնականում Ջրվանի գոյությանը և ուսմունքին:

Ջրվանը իրանական դիցաբանության մեջ ոչ միայն անսահման (անվերջ) ժամանակի, այլև ճակատագրի աստվածն էր: Անդրադառնանք ճակատագիր հասկացության մեկնաբանությանը միջինիրանական ամենանշանավոր գործերից մեկում, որը կոչվում է «d©dest©n | m'ո¼g | xrad»: Գրքի 24-րդ գլխում կարդում ենք. «Իմաստունը հարցնում է բանականության Ոգուն՝ հարստության տիրանալու, բարի գործեր կատարելու և արժանիքների համար աստվածները մարդկանց տալի՞ս են ինչ-որ բան»: Ոգին պատասխանում է. «Տալիս են, և դա այն է, որ անվանում են ճակատագիր և նախասահմանությունն. բաշխում են այն, ինչ-որ լինում է սկզբում՝ ճակատագիրը, հետո՝ նախասահմանությունը»<sup>10</sup>: Բնագրում ճակատագիրը արտահայտված է baxt, իսկ նախասահմանությունը՝ baY%baxt բառով: Ահա մի հատված էլ 27-րդ գլխից. «Երկրային բոլոր գործերը առաջանում են ճակատագրի կանխորոշմամբ... որը ինքը Ջրվանն է՝ հզոր և երկարաժամկետ կառավարիչը»<sup>11</sup>:

Ավելորդ չենք համարում նշել, որ *բախտ* բառի արմատն է իրանական bag/baժ-ը, «բաժանել, բաշխել», «որի անցեալ դերբայն է գնդ. baxta = սանս. bhakta՝ բախտն ըմբռնելով իբրև ի վերուստ բաշխուած, բաժանուած վիճակ» (տե՛ս Արմ., Բախտ բառահոդվածը): Իսկ Եզնիկն էլ կարծում է, որ չպետք է հավատալ «ի բաշխս բախտից» (II, ԺԲ):

Ամփոփենք: Եզնիկի՝ «Ջրուան ոմն անուն էր, որ թարգմանի բախտ կամ փառք» նախադասության մեջ *բախտ*-ը ոչ թե Ջրվան անվան ստուգաբանությունը կամ թարգմանությունն է, այլ նրա՝ որպես աստծու (կամ մարդու) դերի, գործունեության մատնանշումը:

---

<sup>10</sup> Տե՛ս *Зороастрийские тексты. Суждения духа разума* (Дадестан-и меног-и храд). (издание подготовлено О.М.Чунаковой, М., 1997, стр. 99).

<sup>11</sup> Ն.ս., էջ 100:



Ինչ վերաբերում է Եզնիկի գրքի հիշյալ հատվածի փառք-ին, ապա այն նույնպես չպետք է դիտել Զրուան բառի թարգմանություն, այլ նրա աստվածային էության բնութագրիչներից մեկը: Եզնիկը քննադատում է Զրվանի պաշտամունքը նաև այն բանի համար, որ եթե նա կատարյալ լիներ, ինքը կստեղծեր երկինքն ու երկիրը և զոհ չէր մատուցի որդի ունենալու համար: Բացի դրանից՝ բերում է նաև զրադաշտականների պատասխանը. «Փառաց առնէր զյաշտն» (փառքի համար էր զոհ անում)» (Եզն., 96-97):

Փառքը, փառավորվելը խորթ չեն աստվածներին և ոչ միայն զրա- դաշտական: Եզնիկի «Եղծ աղանդոց հեթանոսացն» գրքում կարդում ենք. «Ո՞յր մեղ է վասն կուրութեանդ. դորա՞, թե՛ ծնողաց իւրոց, և նա ասէ՛ թէ ոչ դորա և ոչ ծնողաց իւրոց, այլ վասն փառացն Աստուծոյ, զի փառաւորեսցի ի դմա Աստուած», «...այլ աստծու փառքի համար է այդ, որ աստված դրանով փառավորվի» (էջ 64-65):

Աստծու փառավորումը այժմ էլ արտահայտվում է «փառք քեզ Աստված», «փառք Աստծու», «փառքդ շատ Աստված» և նման այլ բառակապակցություններով:

### Օգտագործված գրականություն

1. Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865թ.:
2. Եզնիկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց. թարգմանությունը և ծանոթագրությունները Ա.Ա.Աբրահամյանի, Ե., 1994:
3. Եղիշէի, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին. ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Ե., 1957:¹

4. Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին. թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Ե., 1989:

5. Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց. թուղթ ան Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ.Մալխասյանցի. աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բագրատ Ուլուբաբյանի, Ե., 1982:

6. Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց. քննական բնագիրը Ս. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Ե., 1981:

7. Պատմութիւն Ալեքսանդրի Մակեդոնացույ. աշխատասիրությամբ Հասմիկ Միմոնյանի, Ե., 1989:

8. Зороастрийскиетексты. Суждениядухаразума (Дадестан-именог-ихрад). (изданиеподготовленоО.М.Чунаковой, М., 1997, стр. 99).

Лаврентий Оганесян - О некоторых свидетельствах армянских авторов V века. - В древнеармянской литературе V века встречаются многочисленные толкования иностранных слов. Мовсес Хоренаци научно этимологизирует иранское собственное имя Շապուհ-šah “царь” и puhr/pah “сын”. Некоторые исследователи и издатели книги Лазаря Парбеци слова qahնաղան և խուժիկ рассматривают как имена собственные (личные имена), однако в контексте խուժիկ означает “житель Хужистана” (одна из провинций Ирана), а qahնաղան уничижительная кличка одного вероотступника. Переводя имя зороастрийского божества Ջրուհի как “судьба” Езник Кохбаци имеет ввиду неэтимологию этого слова, а деятельность Зурвана как божества вечно времени и судьбы.

Lavrenti Hovhannisyán - On some testimonies of v century authors. - In the ancient literature of V century there are numerous interpretations of foreign words. Movses Khorenatsi scientific ally etymologies Iranian proper name Շապուհ – šah meaning “king” and puhr / pah- meaning

“son”. Some researchers and publishers of Ghazaros Parbetsi books considered words զանդադան and խուժիկ as proper names (personal names), but in the context խուժիկ means “resident of Huzhistan” (one of the provinces of Iran), and զանդադան is a pejorative nickname of one apostate. Translating the name of the Zoroastrian deity Զրուան as “fate” Yeznik Koghbatsi referred not to the etymology of the word but to the activity of Zurvan – as the deity of eternal time and fate.

Մխիթարեան Գայիանէ  
ԳԱԱ լեզուի ինստիտուտ

Սաղմոսների ժողովածուն Հին Կտակարանի ամենատարածուած գրքերից է:

Չկայ ծիսական որեւէ ժողովածու, որտեղ սաղմոսներն ընդգրկուած չլինեն: Դարեր շարունակ այն եղել է հաւատացեալների սիրելի ընթերցարաններից մէկը, իսկ հոգեւորականների կողմից սովորաբար այն գրի է արուել: Աստուածաշնչի եբրայական բնագրում գիրքը կոչուում է Թեհիլլիմ (תהלים), որ նշանակում է փառաբանութիւն: «Սաղմոս» եզրը փոխառուած է Հին Կտակարանի Եօթանասնից թարգմանութիւնից: Եբրայերէն կոչուում է «միզմո» (מזמור) եւ համապատասխանում է յունարէն «պսալմոս» - ին (ψαλμός): Բառացի նշանակում է «լարերը զնգզնգացնել, նուագ», եւ յուշում լարային նուագարանի առկայութեան մասին: Ըստ էութեան՝ գրքի եբրայերէն անուանումը նշում է սաղմոսների բովանդակութիւնը, ներքին բնոյթը՝ իբրեւ Աստծուն ուղղուած փառաբանութիւններ, իսկ յունարէն խորագիրը՝ նրանց կատարման եղանակը:

Սաղմոսներում հնագոյն նուագարանների անուանումների քննութիւնը նպատակ ունի՝ ա) վեր հանել հայկական երաժշտական եւ մերձատրարեւելեան հին ժողովուրդների մշակութային ընդհանրութիւնները: ք) Նպաստել օտար բառերի որակական դերի, իրական այն յարաբերութիւնների բացայայտմանը, որոնք առկայ են օտար եւ մայրենի բառապաշարի միջեւ: Եբրայերէն բառի դիմաց հայերէն նոր բառերի եւ իմաստների կիրառութիւնը ինքնին տալիս են ներլեզուական շատ

---

\* Բագմավէպ, Վենետիկ, 2013, էջ 118-127:

հարցերի պատասխաններ՝ բացայայտելով երաժշտական բառապաշարի զարգացման ակունքներն ու միտումները: Եթէ նկատի ունենանք նաեւ տուեալ փոխառութեան ժամանակաշրջանի գործոնները, ապա չենք կարող ժխտել, որ դրանք նպաստում են արտալեզուական, տուեալ դէպքում այդ լեզուները կրող ժողովուրդների պատմութեան որոշ հարցերի լուսաբանմանը:

Սաղմոսներում յիշատակուած լարային նուագարաններից է *քնար*-ը կամ *կինոր*-ը: Տերմինը երկիմաստ է՝ ա) այն հինհրեական լարային նուագարաններին տրուող ընդհանուր անուանում է, եւ բ) հինհրեական քնարանման նուագարան: Ակնյայտ ընդհանրութիւններ կան սեմական եւ իրանական ժողովուրդների համանման հնագոյն նուագարանների անուանումների միջեւ. հմմտ.՝ հինեգիպտական *կոոր*, սիրիական *kenarā / kinarā*, ակկադ. *Kinnarum*, ասոր. *kennarā*, հինարաբական *kinnarāt*, եթովպական *krar / kerar* (ամհարերէն), կոպտերէն *kinera*, պահլավերէն *kannār*: Եզրը գործածուում է նաև ասորական, խուռական, իւթական, ուգարական, եգիպտական տեքստերում՝ *kinirtalla* («քնարայար») ձևով: Անդրադառնալով հայերէնի նախագրային շրջանում սեմական լեզուներից կատարած փոխառութիւններին՝ Գ. Ջահուկյանը *քնար*-ը նշում է վաղարամեական փոխառութիւնների շարքում<sup>2</sup>:

*Կինոր*-ը Աստծու փառաբանման, զովերգման նուագարան է: Ս. Գրքի տարբեր թարգմանութիւններում գործածուում են նուագարանի տարատեսակ անուանումներ. Եօթանասնիցում՝ *կիֆարա* (κίθα'ρα), երբեմն՝ *պսալտերիօն* (ψαλτη'ριον), Պեշիթայում՝ *կինարա* (*kenara / kinarā*), նաև՝ *կիթարա* (*qitarā*), Վուլգատայում՝ *ցիտրա / կիթարա* (*cithara*), *պսալտերիում* (*psalterium*), *լիրա* (*lyra*):

---

<sup>1</sup>Mitchell T.C., *The Music of the Old Testament Reconsidered*, Palestine, 1992, p.130. Н. Мкртчян, *Семитские языки и армянский*, Е., 2005, стр. 190.

<sup>2</sup>Գ. Ջահուկեան, *Հայոց լեզվի պատմութիւն: Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 476-477:

Եզրերի անմիօրինակութիւն է նկատուում նաև Աստուածաշնչի անգլերէն թարգմանութեան մէջ՝ *harpe, sauter / sautre / sautree, cittern, lyre, stringinstrument*: Ռուսերէն Աստուածաշնչում գործածուում է հիմնականում *гусли* անուանումը, որը երբեմն փոխարինուում է *певница, ситара, псалтырь, кинира*, երբեմն էլ *кимвалы* (1 Пар 15: 21), եւ մեկ անգամ *арфа* բառերով (Пс 136:2):

Սաղմոսների արաբերէն թարգմանութեան հեղինակ Սաադի Գայոնը նշում է միեւնոյն նուագարանի չորս տարբեր անուանում՝ *կիթառ, տունբուր, ուղ, սանջ*<sup>3</sup>: Անշուշտ, նման մեկնութիւնն այնքան էլ արդարացուած չէ, քանի որ *ուղը* և *տունբուրը* լիտնեայի տիպի նուագարաններ են, *կիթառը* կամ *կինորը* քնարն է, իսկ *սանջը*՝ տաւղանման նուագարանների հին անուանումը: Հայերէն Աստուածաշնչում անուանումը փոխարինուում է «օրհնութիւն», «երգ», «գովել» բառերով.«Ի ձայն օրհնութեան գովել» (Սղ., ՁԱ 3), գործածուում է նաև *կտակարան*-ը որպէս նուագարանի անուանում.«Ի մեջ ուռեաց նոցա կախեցուք զկտակարանս մեր» (Սղ., ՃԼԶ, 2):

Տաւղանման հնագոյն լարային կամիթաւոր նուագարան է *նէկէլ*-ը կամ *նէբէլ*-ը (հին եբրայերէն *nebel*): Աստուածաշնչեան յիշատակութիւնը (Ա Թագ., Ժ, 5) գիտնականների հիմք է տուել ենթադրելու, որ նուագարանը հնարավոր է՝ փոխառուել է փինիկեան Սիդոն քաղաքից, որ հնում յայտնի էր իր երաժշտական հարուստ ավանդոյթներով<sup>4</sup> : Եզրը թարգմանաբար նշանակում է «սափոր», «տիկ»<sup>5</sup>:

Նուագարանը պահում էին հորիզոնական դիրքով, կրծքին սեղմած եւ նուագում էին՝ լարերը մատներով կամթելով: Աստուածաշնչում *նէկէլ*-ը յիշատակուում է տասնադէպ *նէկէլ* կամ

---

<sup>3</sup>Cohen D., *Theory and Practice in Liturgical Music of Christian Arabs in Israel*, London, 1973, p. 115.

<sup>4</sup>Werner E., *The Sacred Bridge*, London-New York, 1959, p. 375; Sachs C., *The History of Musical Instruments*, New York, 1940, 2<sup>nd</sup> ed., London, 1978, p. 115; Sendrey A., *Music in Ancient Israel*, New York, 1969, p. 278.

<sup>5</sup> Шапиро Ф.М., *Иерусалимский словарь*, Москва, 1963, стр. 77.

նելվէլ *ասոր* տարբերակներով: Ս. Գրքի գրեթէ բոլոր թարգմանութիւններում այն բնութագրում է իբրեւ տարբեր տիպի լարային նուագարան: Եօթանասնիցը (Սղ. 2Ա, 3) գործածում է *նավլայ* (ν᾿α'βλα / ν᾿α'βλη / ν᾿α'βλιον), *պսալտերին* (ψαλτη'ριον), *կիֆարա* (κιθα'ρα): Վուլգատայում *նելվէլ*-ը թարգմանում է իբրեւ psalterium, երբեմն՝ lyra, cithara, nablum / nablum: Պեշիթայում յաճախ գործածվում է qitarā, kenarā եւ ընդամենը մեկ անգամ՝ nabla (Ա Մնաց., ժԱ, 8. ժԵ, 16): Անգլերէն թարգմանութիւններում *նելվէլ*-ի տարբեր անուանումներ են հանդիպում՝ sawtre, psautrie, gittern, harpe, viole, lyre, lute<sup>6</sup>:

Հայերէն Աստուածաշնչում *նելվէլ*-ը թարգմանուած է «տաւիղ», գործածւում են նաեւ «ձայն» և «քաղցրութիւն» բառերը (Սղ.,2): *Տաւիղ*-ը ընդգրկուած է հայերէնի նախագրային շրջանի իրանական աղբիւրներից կատարուած փոխառութիւնների ցանկում՝ որպէս «տասնաղեայ քնար», տաβηλα «մի երաժշտական գործիք» ըստ Հեսիքիոսի<sup>7</sup>:

Տասնաղեայ նուագարան է *ասոր*-ը (հին եբրայերէն asôr «տասը» թուականից), որը Ս. Գրքում յիշատակւում է երեք անգամ (Սղ. ԼԳ, 2. ՂԲ, 4. ՃԽԴ, 9): Ընդ որում երկու անգամ (Սղ. ԼԳ, 2 և ՃԽԴ, 9) բառը գործածւում է ածականական նշանակութեամբ: Եօթանասնիցում եւ Վուլգատայում կարդում ենք՝ in psalterio decachordo (PS 143:9), in psalterio decem chordarum (PS 32:2): Յետագայ թարգմանութիւններում տրւում է կա՛մ ընդհանրացնող *տասնաղեայ նուագարան* անուանումը, օր.՝ instrument de dix cordes<sup>8</sup>, instrument of ten strings<sup>9</sup>, կա՛մ էլ նուագարանի տեսակն առաւել որոշակի դարձնող անուանում՝ psaltery, psalter, harp, lyre, lute, luth, իսկ թուրքերէն Աստուածաշնչում՝ նաեւ *սանթուր* (santur)<sup>10</sup>: Սաղմոսների մեկնութեան մէջ Մ. Չամչեանցը նշում է, որ «զտասնաղեայ գործին այսինքն զսաղմոսարանն՝ տաւիղ կոչէ

<sup>6</sup> *The Learning Bible. Contemporary English Version*, New York, 2000.

<sup>7</sup> Գ. Ջահուկեան, նշուած աշխ., էջ 548, 575:

<sup>8</sup> *La Sainte Bible, Contenant le Vieil et Nouveau Testament*, Lyon, 1566.

<sup>9</sup> *The Holy Bible, Authorized King James Version*, 1611. Ed.:London, 1956.

<sup>10</sup> *Kitabi Mukaddes. Turkish Bible*, Translated by the United Bible Societies, Istanbul, 1996.

դաւիթ անյադթ, իսկ տաւրիւ կամ սաղմոսարանաւ նշանակի բազմադեայ ինչ նուագարան նման սանթուռի, որոյ եւ են բազում տեսակք եւ գլխաւորն 'ի նոսա է տասնադի...»<sup>11</sup>: Որոշ հետազոտողներ նուագարանի անուանումը փորձում են բացատրել խորհրդանշանային իմաստով. տասը լարերը տասը պատուիրաններն են, իսկ քառանկիւն կամ քառակուսի ձեւը՝ չորս աւետարանիչները<sup>12</sup>: Ենթադրում է, որ նուագարանը կարող է շատ աւելի խորը ակունքներ ունենալ՝ հասնելով ակկադական, շումերական ժամանակաշրջան, աղերսներ ունենալ տասնադի տաւիդ էշիրտու-ի (eširtu) հետ<sup>13</sup>: Արդի երբայերէնում բառը «տասը» թուականի նշանակութիւն ունի:

*Կիթիթ*-ը կամ *գիթիթ*-ը հին եբրայերէնում բազմանշանակ է. ա) բառացի նշանակում է այն, ինչը Գաթ քաղաքից է, բ) եբր. gat հասարակ գոյականից առաջացած բառ է, որ նշանակում է «հնձան, խաղողի ճմլարան»<sup>14</sup>: Սաղմոսների վերնագրերում (Մդ. Ը, ՁԱ, ՁԴ) գործածուող 'al – haaggittîf կապակցութիւնը անորոշ անուանում է եւ գիտական գրականութեան մէջ տարբեր մեկնաբանութիւնների տեղիք է տուել: Ուսումնասիրողների մեծ մասը ենթադրում է, որ *գիթիթ*-ը կամ լարայինների ընտանիքին պատկանող նուագարան է, որի ծագումը վերագրում է Պաղեստինի Գաթ քաղաքին<sup>15</sup>, կամ էլ նուագի կատարման որոշակի ձեւի, նաեւ ձայնեղանակի անուանում: Չամչեանցը մեկնում է, թէ տւեալ սաղմոսը յարկ է նուագել այն եղանակով, որով Գաթ քաղաքի արքունիքում նուագապէտը վարում է երգեցիկ գուսանների խումբը<sup>16</sup>: Առաւել հաւանական ենք համարում առաջին տեսակէտը, քանի որ Ը սաղմոսի վերնագրում նշուած է “наकिनноре, что пришел из Гат” (Пс 8): Չի բացառում նաև, որ *գիթիթ*-ը նաեւ աշխատանքային երգի տեսակ է, որ կատարւում է խաղողը տրորելու ժամանակ (Մդ

<sup>11</sup> Մ.Չամչեանց, *Մեկնութիւն սաղմոսաց*, 1823, Վենէտիկ, 1823, էջ 114-115:

<sup>12</sup> Sendrey A., *Music in Ancient Israel*, New York, 1969, p. 114.

<sup>13</sup> Sendrey A., *Music in Ancient Israel*, p. 117.

<sup>14</sup> Шапиро Ф.М., *Иврит-русский словарь*, с. 67.

<sup>15</sup> Sendrey A., *Music...*, p.292.

<sup>16</sup> Մ.Չամչեանց, նշուած աշխ., էջ 87:



ՁԱ): Այդ են վկայում Ս. Գրքի մի քանի թարգմանություններ՝ “for the presses”, “for the winepresses”, “unb dye weynepresse”: Չի բացատրում նաև, որ գիրթիթ-ը նաև աշխատանքային երգի տեսակ է, որ կատարում է խաղողը տրորելու ժամանակ (Սդ ՁԱ): Միև նկատվում էլ գիրթիթ-ը զուգորդում է նուազակցութեանը՝ “sur Githith / Guittith”, “ad Gittith”, “according to the Gittit”, “наГефскоморудии”, “под аккомпанемент Гефа”.

Արդի երբայերենում գիրթիթ նշանակում է «կիրթառ»:

*Ուզաւ*-ը կամ *ուզաբ* -ը արնգային նուագարան է: Բառը ծագում է հին երբ. ‘āgāb բայից, որ նշանակում է «առինքնել», «թովել», նաև՝ «կրքոտ սիրել»<sup>17</sup>: Ըստ երեւոյթին բառիմաստը պայմանաւորուած է արնգային նուագի՝ մարդկային ապրումներն ու հոյգերը արտահայտելու կարողութեամբ: Հնագիտական պեղումները թոյլ են տալիս ենթադրել, որ *ուզաւ*-ը կարող էր նաև Միջագետքի, հին Եգիպտոսի և հին սեմական ժողովուրդների հովուական նուագարանը լինել: Որոշ հետազոտողներ այն նոյնացնում են Պանի ֆլեյտային կամ սիրինգսին<sup>18</sup>: Մի մասն էլ դժուարանում են բնորոշել նուագարանը՝ այն համարելով երկայնակի ֆլեյտա<sup>19</sup> :

Եօթանասնիցում եւ Պեշիթայում գործածվում են երեք տարբեր անունումներ՝ *կիֆարա* (κίθαρα – Ծննդ., Դ, 21), *սաղմոսարան* (ψαλμός – Յովբ, ԻԲ, 12. Լ, 31), *օրգանոն* (ὄργανον – Սդ., ԸԾ, 4), նաև *կինարա/կենարա* (kenrā), Վուլգատայում՝ *օրգանում* (organum), անգլերեն Աստուածաշնչում՝ *օրգան* (organ, orgne, organ), հայերենում թարգմանում է «ուրախութիւն նուագարանի» (Սդ., ԸԾ), «քնար», նաև՝ «փող» (pipe, flute): Ռուսերեն Աստուածաշնչում կիրառում են свирель, флейта անունումները:

Այսպիսով՝ յաճախ օտար լեզուներում եւ հայերենում հասկացութեան բովանդակութեան շրջանակները չեն

<sup>17</sup> Sendrey A., Music..., p. 308.

<sup>18</sup> C. Engel, *The Music of the Most Ancient Nations*, New York, 1970, p. 308.

<sup>19</sup> Sendrey A., p. 309; Sachs C., *The History of Musical Instruments*, New York, 1940; 2<sup>nd</sup> ed.: London, 1978, 267.

համընկնում: Մի շարք անուանումների իմաստների վերաբերեալ տրուում են տարբեր, երբեմն իրար լրացնող, երբեմն էլ իրարամերժ բացատրություններ՝ *կիննոր-քնար-սաղմոսարան-կտակարան-փող էւ երգ-օրհնություն-գովել*: Եզրերի հոմանշությունն ու բազմիմաստությունը երբեմն դժուարացնում են նրանց իմաստի բացայայտումը եւ անյատակություն մտցնում նոյնիսկ նուագարանների՝ այս կամ այն ենթախմբում դասակարգելու սկզբունքների մեջ:

Չենք կարող բացառել նաեւ այն դեպքերը, երբ հայ հեղինակները Ս. Գիրքը յունարենից թարգմանելիս նկատի են առել փոխառությունների յաճախականությունը եւ տարածուածությունը, իմաստային առանձնայատկությունները, հոմանիշներ ունենալը կամ չունենալը, նաեւ ձեւափոխուած կամ պարզ տառադարձություն լինելը, այսինքն՝ մշակութային ընդհանուր արժէք ունենալը: Այս դեպքում ինչո՞վ բացատրել երաժշտական անուանումների փոխարէն հայերէնում օրհնաբանական տարբեր բառերի գործածությունը: Պատճառները կարող են տարբեր լինել. հնարավոր է թարգմանիչները, նշելով նուագարանների օտար անուանումները, գնահատում են դրանք որպէս օտար՝ հայերէնի բառապաշարին չմերված, ուստի եւ մեկնում են կամ թարգմանում: Իւրաքանչիւր ժողովուրդ ունի աշխարհճանաչողութեան ու աշխարհընկալման իր առանձնայատկությունները՝ պայմանաւորուած երկրի աշխարհագրական դիրքով, ժողովուրդների նախապատմութեան տարաբնոյթ առանձնայատկություններով: Միեւնոյն նուագարանը եւ անուանումը տարբեր ժողովուրդների մօտ կարող է տարբեր ընկալումներ ունենալ: Հնդեւրոպաբանութեան մեջ յայտնի է այն երեւոյթը, երբ համապատասխան արմատից ծագած գունանունները տարբեր ժողովուրդների մօտ ունեն տարբեր նշանակություններ Օր.՝ Ելմալելը նշում է գոյների նշանակութեան էական տարբերությունները, դրանց իմաստների խիստ կամայական ու չպատճառաբանուած բնոյթը վալլերէնում,

անգլերէնում եւ դանիերէնում<sup>20</sup>: Սաղմոսների վերնագրերում արտացոլուած նուագարանների անուանումները եւս արտայայտում են մշակութային, տվեալ դէպքում երաժշտութեանը վերաբերող տարաբնոյթ հասկացութիւններ: Հնագոյն ժամանակներում նուագարանն ընկալւում էր որպէս Սստծուն գովերգելու, փառաբանելու միջոց. «Ձեռք իմ արարին զսաղմոսարանս եւ մատունք իմ կազմեցին զգործի օրհնութեան» (Սղ., ՃԾԱ, 2): Իսկ թէ ինչ միջոցով էր կատարւում Բարձրեայի փառաբանութիւնը, ըստ այդմ էլ գործածւում են համապատասխան բնութագրող բառեր ու արտայայտութիւններ: Չամչեանը գրում է, որ նուագերութիւնը՝ ի փառս Սստուծոյ, ցնծութիւն է, ուրախութիւն, օրհնութիւն, բառ ու բարբառ. «...զի ցնծութիւն եւ ուրախութիւն նոյնպէս եւ երգք օրհնութեանց ըստ որս եւ բան քաղցր եւ բարբառ լսելի՝ են իբր գործք նուագարանաց, անուանք սոցա եղեալ են փոխանակ նոցին իսկ նուագարանաց»<sup>21</sup>: Պատճառը նաեւ այն է, որ մեզանում սաղմոսները տարբեր նուագարաններով երգելու սովորութիւն չկար, ահա թէ ինչու թարգմանիչները նուագարանների անուանումների փոխարէն թարգմանում են այն զգացողութիւնները, որ արտայայտում եւ մարդկային հոգում արթնացնում էին նրանց արձակած հնչիւնները՝ «ուրախութիւն», «ցնծութիւն»:

Mkhitaryan Gayane - Ancient Musical Instruments in Psalms.- One of the wide-spread books of Old Testament is the Book of Psalms. In Christian World it is used as a separate book to worship God. There is not a single book of rites/rituals, where psalms are not included. It has always been one of the most beloved books for religious people. Priests have always learned the psalms by heart. This makes psalms the most frequently used phenomenon.

<sup>20</sup> Л.Ельмслев, *Прологомены к теории языка*, “Новое в лингвистике”, Вып. 1, Москва, 1960, стр.306-307.

<sup>21</sup> Մ. Չամչեանց, նշվ. աշխ., էջ 120:

In Hebrew texts the Book of Psalms is called *Tehillim*, which means "Glory to God in highest". The word *psalm* is borrowed from *Septuagint*. In Hebrew it is *mizmor*, in Greek *psalmos*. The latter means *melody* – just proving the presence of a string instrument. Factually, the Hebrew name of the book signifies the subject of psalms, i.e. glorify Almighty. The Greek title emphasises the way they are performed.

It should be mentioned, that in different psalms (especially those that glorify God) we come across the Hebrew names of musical instruments: *asor*, *kitit*, *kinor*, *nepel*, *ugav*. Above mentioned words sometimes are replaced with other words or by different descriptive expressions. The reason is, that for centuries musical instruments had been refused by Armenian Apostolic Church. However, we suppose, that all musical instruments in different languages, as well as in Armenian, had had their equivalents.

## ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ..... 3

Գրիգորյան Ս. Ս., Բժշկագիտական հասկացությունները Գրիգոր Տաթևվացու գրական ժառանգության մեջ.....	7
Թադևոսյան Հ. Ս., Փոխառյալ բառերի կիրառությունը 17-րդ դարի բժշկարաններում (Ասար և Բունիաթ Սեբաստացիներ).....	24
Թադևոսյան Հ. Ս., Բարբառային բառեր եվ բարբառային ձևվեր 17-րդ դարի բժշկարաններում (Ասար և Բունիաթ Սեբաստացիներ).....	36
Խաչատրյան Վ. Ս., Ձեռագրերի՝ 5-11-րդ դարերի հիշատակարանների բառապաշարը .....	47
Խաչատրյան Վ. Ս., Գրաբարյան քերականական ձևեր արդի հայերենում եվ դրանց ուսուցման առանձնահատկությունները..	62
Խաչատրյան Օ. Ս., Վերլուծական բարդությունները Հեթում պատմիչի «Պատմութիւն թաթարաց» աշխատությունում.....	73
Հովհաննիսյան Լ.Շ., «Խաղող» հասկացության իմաստային դաշտի հին անվանումների շուրջ.....	87
Հովհաննիսյան Լ.Շ, Դիտարկումներ 5-րդ դ. հայ մատենագիր- ների որոշ վկայությունների վերաբերյալ.....	99
Մխիթարյան Գ. Ս., Հնագույն նուագարանները սաղմոսներում.	108

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ  
ՊՐԱԿ Ա

Ձևավորումը և էջադրումը՝  
Հ. Թադևոսյանի